ՀՌՌ
ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ
ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՏԱՐԵԿԱՆ ՀԱՂՈՐԴՈՒՄ

2025

www.tvradio.am

ՀՌՀ

ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ
ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

www.tvradio.am

Հարգարժա՛ն խորհրդարան,

Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովն իր հերթական տարեկան հաղորդումն Ազգային ժողովին է ներկայացնում ավանդական հեռարձակողների և ցանցային օպերատորների գործունեության համակարգային ճգնաժամի պայմաններում: Ճգնաժամի հիմնական պատճառներն են առցանց հարթակների ու թվային հսկաների հետ անհավասար մրցակցային պայմանները, հանրության նախասիրությունների փոփոխությունը, տեղեկատվական տեխնոլոգիաների թռիչքաձև զարգացումը, ինչպես նաև գովազդային եկամուտների նվազումը և դրա հետևանքով հեռարձակվող բովանդակության որակի անկումը: Ցանցային օպերատորների դեպքում խնդիրները պայմանավորված են անօրինական OTT և IPTV հարթակների զանգվածային անարգել ու անպատիժ գործունեությամբ: Այս ամենը նաև իրավական կարգավորումների անկատարության կամ դրանց բացակայության հետևանք է:

Այս իրավիճակը խիստ բացասաբար է անդրադառնում հատկապես հանրային թվային մուլտիպլեքսում հեռարձակվող տեսալսողական մեդիածառայություններ մատուցողների վրա, որոնք թվային փոթորիկների այս դարաշրջանում առանցքային դերակատարում ունեն պետության տեղեկատվական անվտանգության, արժեքային համակարգի, մշակութային ու լեզվական ինքնության պաշտպանության, ինչպես նաև բազմազանության ու բազմակարծության ապահովման գործում:

Անհրաժեշտ է արձանագրել, որ հանրային թվային մուլտիպլեքսը մեր միակ ինքնիշիան տեղեկատվական հարթակն է, որը Հայաստանի Հանրապետության յուրաքանչյուր քաղաքացու համար՝ Երևանի կենտրոնից մինչև ամենահեռավոր սահմանամերձ բնակավայր, երաշխավորում է բովանդակության անվճար, անվտանգ և անխափան հասանելիություն:

Ուստի, կարգավորող պետական մարմինն առաջնահերթություն է համարում հանրային մուլտիպլեքսի զարգացման այնպիսի հայեցակարգի և իրավական կարգավորումների մշակումն ու իրագործումը, որոնք կապահովեն հեռարձակողների բնականոն գործունեությունը, ֆինանսական կայունությունը, ինչպես նաև որակյալ ու հանրօգուտ բովանդակության ստեղծումը և ապատեղեկատվական գրոհների մեղմացումը: Հանձնաժողովը նաև խիստ անհրաժեշտ է համարում օրենսդրությամբ պատասխանատու մարմիններին վերապահել անօրինական հարթակների IP հասցեների, DNS տիրույթների և հավելվածների արագ արգելափակման իրավասություն:

Այնուհանդերձ, Հանձնաժողովը դրական է գնահատում 2025 թվականին թե՛ ոլորտի խնդիրների լուծմանն ուղղված քայլերը, թե՛ կարգավորող մարմնի գործունեության արդյունքները:

Մասնավորապես, Կառավարությունն Ազգային ժողով է ներկայացրել ««Տեսալսողական մեդիայի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծը, որի մշակմանը Հանձնաժողովն ունեցել է ակտիվ մասնակցություն: Օրենսդրական նոր կարգավորումները հնարավորություն կտան կանխել ապատեղեկատվության, բռնության, ատելության խոսքի և այլ վնասակար բովանդակության տարածումը, ինչպես նաև զսպել արտաքին ազդեցությունները պետության տեղեկատվական դաշտի վրա՝ ապահովելով հանրության հոգեբանական և տեղեկատվական անվտանգությունը:

Բացի այդ, Կառավարության որոշմամբ ստեղծվել է «Հանրօգուտ մեդիամիջավայր» հիմնադրամը, որն ընթացիկ տարում արդեն դրամաշնորհներ է տրամադրում հանրային մուլտիպլեքսում գործող հեռուստաընկերություններին՝ մանկական, մշակութային և կրթական հաղորդումներ պատրաստելու և հեռարձակելու նպատակով:

2025 թվականին Հանձնաժողովն իր որոշումներով վերստին արձանագրեց, որ խոսքի ազատությունը չի դիտարկում որպես ապատեղեկատվություն և ատելություն տարածելու արտոնագիր: Սահմանադրությամբ ամրագրված մեր առաջնահերթությունը մնում է անփոփոխ՝ ապահովել տեսալսողական մեդիայի անկախությունն ու ազատությունը և սեփական լիազորությունների սահմաններում պատնեշ հանդիսանալ կեղծ լուրերի, մանիպուլյացիաների ու անչափահասների ֆիզիկական և հոգեկան առողջությանը վնասող բովանդակության տարածմանը: Միաժամանակ, մեր առաքելությունն է պաշտպանել կարգավորման դաշտում գործող հեռարձակողների, ցանցային օպերատորների և դիստրիբյուտորների տնտեսական շահերն ու հեղինակային իրավունքները:

Առիթից օգտվելով՝ Հանձնաժողովի անունից շնորհակալություն եմ հայտնում տեսալսողական մեդիածառայություններ մատուցող բոլոր գործընկերներին, պետական և ինքնավար մարմիններին, հասարակական ու միջազգային կազմակերպություններին և այն քաղաքացիներին, որոնց հետ փոխգործակցությունը, նրանց օժանդակությունն ու քննադատությունը կարգավորող մարմնի արդյունավետ գործունեության կարևորագույն գրավականներից են:

Իսկ Հանձնաժողովի 2025 թվականի գործունեության վերաբերյալ ամբողջական տեղեկատվությանը, վիճակագրական տվյալներին և խնդիրների լուծման առաջարկներին կարող եք ծանոթանալ Ազգային ժողով ներկայացված այս Տարեկան հաղորդման մեջ:

Տիգրան Հակոբյան
Հեռուստատեսության և ռադիոյի
հանձնաժողովի նախագահ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1 ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 6

2 ՏԵՍԱԼՍՈՂԱԿԱՆ ՄԵԴԻԱՅԻ ՈԼՈՐՏՈՒՄ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ 7

3 ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԿԱԽ, ԹԱՓԱՆՑԻԿ ԵՎ ՀԱՇՎԵՏՈՒ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ 11

4 ՏԵՍԱԼՍՈՂԱԿԱՆ ՄԵԴԻԱՅԻ ՈԼՈՐՏՈՒՄ ԳՈՐԾՈՂ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ 14

4.1 Հեղինակազորման գործընթաց 15
4.2 Հանրային մուլտիպլեքս ցանցում լիցենզավորված տեսալսողական մեդիածառայություն մատուցողներ 17
4.3 Հանրային մուլտիպլեքս ցանցում լիցենզավորված լսողական մեդիածառայություն մատուցողներ 20
4.4 Առանց լիցենզիայի հեռարձակում իրականացնող տեսալսողական մեդիածառայություն մատուցողներ 23
4.5 Մալուխային կամ այլ ցանց օգտագործող ցանցային օպերատորներ 25
4.6 Տեսալսողական ծրագրերի դիստրիբյուտորներ 28
4.7 Ոչ գծային տեսալսողական տեղեկատվության հեռարձակում 29

5 ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ 30

5.1 2025 թվականի լիցենզավորման, լիցենզիայի գործողության դադարեցման ցուցանիշներ 32

6 ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ԳԾՈՎ ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ ԿԱՏԱՐՎԱԾ ՓԱՍՏԱՅԻ ՄՈՒՏՔԵՐ 35

7 ՀԵՌԱՐՁԱԿՈՂՆԵՐԻ ԵՎ ՑԱՆՑԱՅԻՆ ՕՊԵՐԱՏՈՐՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄ 36
7.1 Տեսալսողական մեդիան կարգավորող օրենսդրությունում անհրաժեշտ են փոփոխություններ 38
7.2 Անհավասար մրցակցային պայմաններ 42
7.3 Հանրային հեռարձակողների մշտադիտարկում 43
7.4 Էթիկայի նորմերի պահպանման մշտադիտարկում 44
7.5 Ընտրությունների լուսաբանման մշտադիտարկում 47

8 ՏԵՍԱԼՍՈՂԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԹԵՄԱՏԻԿ ՈՒՂՎԱԾՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԵԹԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ 53

9 ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹՆԵՐ 57

10 ԴԱՏԱԿԱՆ ԲՈՂՈՔԱՐԿՈՒՄՆԵՐ 65

11 ԴԱՏԱՐԱՆՆԵՐՈՒՄ ԱՎԱՐՏՎԱԾ ԳՈՐԾԵՐ 67

12 ԸՆԹԱՑԻԿ ԴԱՏԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ 68

13 ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐ 69

14 ԸՆԴՈՒՆՎԱԾ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐ 74

15 ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻՆ ՀԱՍՑԵԱԳՐՎԱԾ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀԱՐՑՈՒՄՆԵՐ 76

16 ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ 77
16.1 Թափուր հաստիքների մրցույթներ եվ աշխատակիցների վերապատրաստումներ 79

17 2025 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ 80

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ 81

1

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 196-րդ և «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 39-րդ հոդվածների համաձայն կարգավորող մարմինը՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը, Ազգային ժողով է ներկայացնում 2025 թվականի իր գործունեության և տեսալսողական մեդիայի ոլորտում տեղեկատվության ազատության վիճակի մասին տարեկան հաղորդումը:

Տարեկան հաղորդման մեջ ներառված են Հանձնաժողովի և նրա կարգավորման ներքո գործող տեսալսողական մեդիայի գործունեության վերաբերյալ անհրաժեշտ տեղեկություններ, մշտադիտարկման արդյունքներ, հեղինակազորման, լիցենզավորման, վարչական վարույթների, դատական գործընթացների մասին տվյալներ, ուսումնասիրություններ, եզրակացություններ:

Հանձնաժողովն անդրադարձել է վերջին տարիներին մեդիաոլորտը կարգավորող օրենսդրության մեջ փոփոխություններ կատարելու հետևանքներին, որոնք երբեմն բացասական են անդրադառնում տեսալսողական մեդիածառայություն մատուցողների բնականոն գործունեությանը, զարգացմանն ու անկախությանը:

Տարեկան հաղորդման մեջ ներկայացված են նաև այն խնդիրները, որոնք լուծում չստանալով՝ վտանգում են Հայաստանի Հանրապետության տեղեկատվական անվտանգությունը, անհավասար մրցակցային պայմաններ են ստեղծում տարբեր հարթակներում գործող տեսալսողական մեդիայի համար, նվազեցնում կարգավորող մարմնի գործունեության արդյունավետությունն ու հանրային նշանակությունը:

Հանձնաժողովն իր գործունեության ընթացքում առաջնորդվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, «Տեսալսողական մեդիայի մասին», «Ջանգվածային լրատվության մասին», «Էլեկտրոնային հաղորդակցության մասին», «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին», «Լեզվի մասին», «Գովազդի մասին», «Լիցենզավորման մասին» օրենքներով, «Հայաստանի Հանրապետության Ընտրական օրենսգիրք» (սահմանադրական օրենքով), տեսալսողական մեդիայի բնագավառը կարգավորող այլ իրավական ակտերով և Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով:

2

ՏԵՍԱԼՍՈՂԱԿԱՆ ՄԵԴԻԱՅԻ ՈԼՈՐՏՈՒՄ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 196-րդ հոդվածի համաձայն՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովն ապահովում է հեռարձակվող լրատվամիջոցների ազատությունը, անկախությունը և բազմազանությունը:

Իրականացնելով Սահմանադրությամբ ամրագրված այս պահանջը՝ Հանձնաժողովը 2025 թվականի դեկտեմբերին գրավոր դիմել է տեսալսողական մեդիածառայություն մատուցող բոլոր լիցենզավորված և հեղինակագործված ընկերություններին, ցանցային օպերատորներին հետևյալ հարցադրմամբ.

«Արդյո՞ք 2025 թվականի ընթացքում եղել են դեպքեր, երբ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինները, պաշտոնատար անձինք, կուսակցությունները, քաղաքական, հասարակական կամ տնտեսական կազմակերպությունները, ինչպես նաև այլ իրավաբանական կամ ֆիզիկական անձինք խոչընդոտել են ձեր բնականոն աշխատանքը, միջամտել խմբագրական կամ կադրային քաղաքականությանը»:

Հարցումներ են ուղարկվել նաև պարզելու՝ արդյոք եղել են տեսալսողական ծրագրերի դիստրիբյուտորների կամ հեռարձակողների հետ պայմանագրեր կնքելու իրավունքը սահմանափակելու, դրանց միջամտելու, ինչպես նաև որևէ տեսալսողական ծրագրի վերահաղորդմանը խոչընդոտելու դեպքեր:

Ի պատասխան հարցումների՝ Հանձնաժողովը 2025 թվականին չի ստացել որևէ էական բողոք՝ հեռարձակողների ազատությունն ու անկախությունը ոտնահարող կամ սահմանափակող դեպքերի վերաբերյալ: Այնուամենայնիվ, մի քանի հեռարձակողներ իրենց պատասխան նամակներում բարձրաձայնել են խնդիրներ, որոնցից միայն մեկն է առնչվում կարգավորող մարմնի լիազորություններին: Այսպես, «Շարկ» ՍՊ ընկերությունը («5-րդ ալիք» հեռուստածրագիր) Հանձնաժողովին հայտնել է իր մտահոգությունը, որ հեռուստաընկերության գործունեությունը իշխանության մի շարք ներկայացուցիչների կողմից արժանանում է բացասական և միակողմանի գնահատականների, իսկ աշխատակիցները անհիմն թիրախավորվում են:

Ընկերության մտահոգության կապակցությամբ Հանձնաժողովը հարկ է համարում ևս մեկ անգամ հիշեցնել, որ օրենսդիր, գործադիր և դատական իշխանության մարմիններն ու դրանց ներկայացուցիչները պետք է առաջնորդվեն լրագրողների անկողմնակալության, բարեխղճության և մասնագիտական պատշաճ հմտությունների առկայության կանխավարկածով՝ զերծ մնալով որևէ անհիմն թիրախավորումից:

Վերլուծելով հարցումների պատասխանները՝ Հանձնաժողովն արձանագրել է, որ նախորդ տարի իր կարգավորման ներքո գործող տեսալսողական մեդիածառայություններ մատուցողները գործել են ազատ, զերծ են եղել իշխանության ճնշումներից ու միջամտություններից, իսկ նրանց վարած խմբագրական և կադրային քաղաքականությունը եղել է ինքնուրույն:

Սակայն կարգավորող մարմինը ցանկանում է հրավիրել խորհրդարանի ուշադրությունն այն հանգամանքին, որ տեսալսողական մեդիայի խմբագրական և կադրային քաղաքականությանը սեփականատերերի միջամտությունը շարունակում է մնալ հեռարձակողների անկախության վրա ազդող նշանակալի գործոն: Քիչ չեն դեպքերը, երբ մեդիայի սեփականատերերը ուղղակի կամ անուղղակի թելադրում են խմբագրական քաղաքականությունը՝ ելնելով իրենց քաղաքական կամ գործարար շահերից: Սա է պատճառներից մեկը, որ մի շարք հեռարձակողներ նվազագույն հանձնառություն են ստանձնում հանրային նշանակություն ունեցող բովանդակության նկատմամբ:

ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ ԱՊԱՀՈՎՈՒՄ Է ՀԵՌԱՐՁԱԿՎՈՂ
ԼՐԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ

ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆԸ

ԱՆԿԱԽՈՒԹՅՈՒՆԸ

ԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅՈՒՆԸ

2025 թվականի ընթացքում Հանձնաժողովն իր լիազորությունների շրջանակում շարունակել է պաշտպանել հեռարձակողների՝ ինքնուրույն խմբագրական քաղաքականություն վարելու իրավունքը: Միաժամանակ, կարգավորող մարմինն արդյունավետ լուծումներ է առաջարկել տեսալսողական մեդիայի ոլորտում առկա խնդիրների կարգավորման ուղղությամբ՝ սերտորեն համագործակցելով հեռարձակողների, պետական, հասարակական և միջազգային կազմակերպությունների հետ:

Հանդես գալով որպես կապող օղակ մասնավոր հեռարձակողների, պետական ինստիտուտների և հանրության միջև՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը հետևողականորեն ամրապնդել է իր հեղինակությունը՝ հանրության կողմից ընկալվելով որպես ոլորտի անաչառ կարգավորող մարմին:

2025 թվականի «Մամուլի ազատության համաշխարհային ինդեքսի» տվյալներով՝ Հայաստանը, նախորդ տարվա համեմատ բարելավելով իր դիրքերը 9 կետով, 180 երկրների շարքում զբաղեցրել է 34-րդ հորիզոնականը: Այս ցուցանիշով Հայաստանը վերահաստատել է իր դիրքը՝ որպես մամուլի ազատության մակարդակով տարածաշրջանի բացարձակ առաջատար:

Այնուամենայնիվ, «Լրագրողներ առանց սահմանների» (RSF) իրավապաշտպան կազմակերպությունն իր ամփոփ եզրակացության մեջ արձանագրել է, որ չնայած բազմակարծիք միջավայրին՝ Հայաստանի լրատվամիջոցները շարունակում են մնալ բևեռացված, ինչն ուղղակիորեն արտացոլում է երկրի քաղաքական դաշտի պատկերը: Ըստ կազմակերպության՝ երկիրը բախվում է ապատեղեկատվության և ատելության խոսքի աննախադեպ մակարդակի, որը սնվում է ինչպես ներքաղաքական լարվածությամբ, այնպես էլ սահմանային անվտանգային մարտահրավերներով:

Զեկույցում ընդգծվում է, որ թեև մամուլի ազատության ցուցանիշը բարձր է, ոլորտը կարգավորող իրավական դաշտը լիարժեք չի պաշտպանում մամուլի ազատությունը և դեռևս չի համապատասխանում եվրոպական չափանիշներին: Մտահոգիչ է նաև այն, որ լրագրողները հաճախ թիրախավորվում են քաղաքական վերնախավերի կողմից, որոնք մեղադրում են նրանց քաղաքական հակառակորդներին ծառայելու մեջ՝ ձևավորելով անհանդուրժողականության մթնոլորտ: Բացի այդ, լրագրողների նկատմամբ հաճախակի կիրառվող զրպարտության մեղադրանքով դատական հետապնդումները նպաստում են ինքնագրաքննության խորացմանը:

Խոսքի ազատության առանցքային նախապայմանը լրատվամիջոցների ֆինանսական ինքնաբավությունն է, քանի որ ցանկացած տնտեսական ճնշում մեդիան դարձնում է առավել խոցելի՝ ստիպելով նահանջել մարդու իրավունքների պաշտպանության իր հիմնարար առաքելությունից: Ամբողջ աշխարհում նկատվում են սեփականության կենտրոնացման, գովազդատուների կամ հովանավորների կողմից անուղղակի ճնշումների և ֆինանսական միջոցների ոչ թափանցիկ բաշխման միտումներ:

Հայաստանում իրավիճակը բարդանում է գովազդային շուկայի թերզարգացվածությամբ, ինչը սահմանափակում է մասնավոր լրատվամիջոցների ֆինանսական անկախությունը: Ստեղծված պայմաններում կտրուկ մեծանում է պետության դերը՝ որպես խրախուսման ճկուն և հստակ մեխանիզմներ մշակողի ու իրագործողի:

Այս համատեքստում Հանձնաժողովը կարևորում է Կառավարության որոշմամբ ստեղծված «Հանրօգուտ մեդիամիջավայր» հիմնադրամի գործունեությունը և պատրաստակամություն հայտնում իր փորձագիտական ներուժով աջակցել կառույցի կայացմանը: Վստահ ենք, որ պետության կողմից տրամադրվող հավելյալ ֆինանսական աջակցության շնորհիվ հանրային մուլտիպլեքսում կապահովվի հանրային նշանակություն ունեցող կարևոր հաղորդումների հեռարձակումը:

Որպես անկախ կարգավորող մարմին՝ արձանագրում ենք. թեև հիբրիդային պատերազմները թևակոխել են նոր փուլ, և հասարակությունը շարունակում է բախվել ցնցումներ առաջացնող, ապատեղեկատվական և մոլորեցնող մեդիա արշավների, այնուամենայնիվ, Հանձնաժողովի հետևողական մշտադիտարկումների և կարգավորող գործառույթների կիրառման արդյունքում հանրային մուլտիպլեքսում և ցանցային օպերատորների տեսալսողական ծրագրերում նկատելիորեն նվազել են ատելության ու անհանդուրժողականության խոսքի, թշնամանքի հրահրման, բռնության կոչերի և սպառնալիքների դրսևորումները:

Սակայն Հանձնաժողովի կարգավորող գործիքակազմը տարածվում է միայն վերգետնյա հեռարձակողների վրա՝ լիովին բաց թողնելով համացանցային հսկայական հատվածը, որը շարունակում է գործել անվերահսկելի պայմաններում: Հանձնաժողովը վերահաստատում է իր համոզմունքը, որ առանց համացանցային մեդիատիրույթի նվազագույն իրավական կարգավորումների՝ հնարավոր չէ ապահովել Հայաստանի մեդիա էկոհամակարգի անվտանգ, ազատ և ներդաշնակ զարգացումը:

Կարգավորող պետական մարմինն իր նախորդ տարեկան հաղորդումներում արդեն իսկ մատնանշել էր Հայաստանի տեղեկատվական համակարգի կայուն զարգացմանը խոչընդոտող հիմնական գործոնները՝ գովազդային մուտքերի կրճատումը, հանրային մուլտիպլեքսում և առցանց տիրույթում գործող հեռարձակողների միջև անհավասար մրցակցային պայմանները, ինչպես նաև օրենսդրական բացերը:

Իրավիճակն ավելի լայն համատեքստում դիտարկելիս ակնհայտ է դառնում, որ որևէ կարգավորումից դուրս գտնվող տեսալսողական արտադրանքը դարձել է ոչ միայն ծավալով գերակշռող, այլև կասկածելի որակ թելադրող գործոն:

Մեր պետության անվտանգությանը սպառնացող և մարդու հիմնարար իրավունքները ոտնահարող տեղեկատվական արշավներին դիմակայելու համար անհրաժեշտ է ձևավորել այնպիսի միջավայր, որտեղ ազատ շուկայական հարաբերությունները չեն դիտարկվի որպես ցածրորակ, կողմնակալ, մանիպուլյատիվ ու վնասակար բովանդակության ստեղծման և տարածման արդարացում: Շուկան ևս պետք է գործի հստակ կանոններով, ուստի անհրաժեշտ է ներդնել առավել ճկուն և գործուն մեխանիզմներ, որոնք տեսալսողական մեդիածառայություն մատուցողների համար կապահովեն մեկնարկային հավասար և արդար պայմաններ:

Հանձնաժողովն իր մտահոգությունն է հայտնում հանրային մուլտիպլեքսի գրավչության նվազման կապակցությամբ, ինչը տեղի է ունենում հեռուստալսարանի կրճատման պայմաններում: Իր նախորդ տարեկան հաղորդումներում կարգավորող մարմինն արդեն իսկ շեշտադրել է տնտեսական աջակցության և պետական հոգածության անհրաժեշտությունը: Դա թույլ կտա բարձրացնել վերգետնյա հեռարձակողների մրցունակությունը և օրինակելի չափորոշիչներ սահմանել ողջ մեդիա դաշտի համար՝ հստակեցնելով ազատության և պատասխանատվության նուրբ սահմանագիծը: Հակառակ պարագայում, կարգավորումից դուրս գործելու հեռանկարը կդառնա առավել գրավիչ և ֆինանսապես շահեկան՝ պարարտ հող ստեղծելով ստվերային պայմանավորվածությունների համար:

3

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԿԱԽ, ԹԱՓԱՆՑԻԿ ԵՎ ՀԱՇՎԵՏՈՒ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը անկախ պետական մարմին է, որն ապահովում է հեռարձակվող լրատվության միջոցների ազատությունը, անկախությունը և բազմազանությունը, վերահսկում տեսալսողական մեդիածառայություն մատուցող հեռարձակողների, ցանցային օպերատորների և տեսալսողական ծրագրերի դիստրիբյուտորների գործունեությունը:



Հանձնաժողովը գործում է ՀՀ Սահմանադրության և օրենսդրության շրջանակներում՝ իր որոշումները կայացնելով գործընկերային սկզբունքով և բացառելով արտաքին միջամտությունն ու ազդեցությունը: 2024 թվականի նոյեմբերից Հանձնաժողովը գործում է լիակազմ (7 անդամ): Փաստենք, որ նույնիսկ բուռն քննարկումների ու տարաձայնությունների պարագայում անդամներն առաջնորդվում են բացառապես սեփական խղճով ու մասնագիտական փորձով՝ զերծ մնալով կողմնակի միջամտություններից: 2025 թվականին կարգավորող մարմինը գործել է անկախ՝ զերծ մնալով գործադիր և օրենսդիր իշխանությունների, տարածքային կառավարման մարմինների կամ քաղաքական ուժերի ազդեցությունից ու կադրային քաղաքականությանը միջամտելու փորձերից: Հանձնաժողովի յուրաքանչյուր անդամ անհատական պատասխանատվություն է կրել իր կայացրած որոշումների և քվեարկության արդյունքների համար, ինչի վկայությունն են նրանց կողմից ներկայացված ու արխիվացված գրավոր հիմնավորումները: Որոշումների կայացման կամ քվեարկության գործընթացներին միջամտելու ցանկացած փորձ կանխվել է՝ չազդելով Հանձնաժողովի բնականոն գործունեության վրա և չունենալով որևէ փաստացի հետևանք:

Նախորդ տարի կարգավորող մարմինը գումարել է 52 նիստ և ընդունել 159 որոշում: Օրենսդրության համաձայն՝ Հանձնաժողովի գործունեության հանրային հատվածն իրականացվում է դռնբաց նիստերի միջոցով (բացառությամբ պետական կամ ծառայողական գաղտնիք պարունակող հարցերի):

Հաշվի առնելով քննարկվող հարցերի հանրային կարևորությունը՝ նիստերը պարբերաբար ուղիղ հեռարձակվել են Հանձնաժողովի պաշտոնական կայքում, ինչպես նաև ֆեյսբուքյան և յություբյան հարթակներում: 2025 թվականին ամբողջությամբ թարմացվել և նոր բաժիններով է համալրվել Հանձնաժողովի պաշտոնական կայքը (www.tvradio.am): Այս փոփոխությունները հնարավորություն են տվել ավելի օպերատիվ լուսաբանել կառույցի գործունեությանը վերաբերող նորությունները, տարածել հայտարարություններն ու դյուրացնել Հանձնաժողովի կողմից հաստատված ձևանմուշների ներբեռնումը: Հանրության հետ հետադարձ կապի ամրապնդմանն ուղղված «Դիմում-բողոք» բաժինը, որի նպատակն է հեռարձակվող տեսալսողական բովանդակության նկատմամբ փաստարկված հանրային վերահսկողության ապահովումը, դեռևս չի գրանցել ակնկալվող արդյունքը: Հանրային արձագանքման մշակույթի վերափոխումը բավականին դանդաղ է ընթանում:

Սկանավորիր QR-ը՝
Հանձնաժողովի վերահսկողության
տիրույթում գործող տեսալսողական
ծրագրերի բովանդակության վերաբերյալ
դիմում-բողոք ներկայացնելու
էլեկտրոնային գործիքից օգտվելու համար:

Այնուամենայնիվ, Հանձնաժողովը լիահույս է, որ քաղաքացիները, հասարակական կազմակերպությունները (հատկապես՝ մասնագիտական ոլորտների «պահապանները»), պետական մարմիններն ու քաղաքական ուժերը կօգտագործեն այս հնարավորությունը և հորիզոնական կապերի ձևավորմամբ կնպաստեն հանրային արձագանքման մշակույթի զարգացմանն ու տարածմանը:

Տարվա ընթացքում Հանձնաժողովը կազմակերպել է բազմաթիվ աշխատանքային հանդիպումներ, քննարկումներ և դասընթացներ լիցենզավորված և հեղինակազորված հեռարձակողների, ցանցային օպերատորների, դիստրիբյուտորների, «Հանրօգուտ մեդիա միջավայր» հիմնադրամի, Կինոյի զարգացման հիմնադրամի, Ինդուստրիալ կոմիտեի ղեկավարների ու ներկայացուցիչների հետ: Որպես լիազորված մարմին՝ 2025 թվականին Հանձնաժողովը կազմակերպել և անցկացրել է Հանրային հեռարձակողի խորհրդի անդամի թափուր տեղի համալրման մրցույթ: Կարգավորող մարմինն իր գործունեության իրազեկման նպատակով անցկացրել է ճեպազրույցներ և հարցազրույցներ, պատրաստել է մամուլի հաղորդագրություններ, մեդիաշուկայի հետազոտություններ և մեդիա ոլորտում նոր կարգավորումների վերաբերյալ վերլուծություններ:

Մասնավորապես՝ պաշտոնական կայքում և ֆեյսբուքյան էջում հրապարակվել է մամուլի 181 հաղորդագրություն և 12 հայտարարություն:

Սկանավորիր QR-ը՝
«Փողքասթ» շարքին
ծանոթանալու համար:

Հաշվետու տարում Հանձնաժողովը նախաձեռնել է «ՀՌՀ փողքասթ» տեսալսողական հաղորդաշարը, որը կրելու է շարունակական բնույթ: Նախագծի շրջանակում կարգավորող մարմնի անդամներն ու ոլորտի մասնագետները քննարկում են տեսալսողական մեդիային առնչվող հիմնախնդիրներ: Հաղորդաշարը հասանելի է համացանցային տարբեր հարթակներում, հեռարձակվում է մի շարք մարզային հեռուստաընկերություններով:

Կարգավորող մարմնին վերապահված է նաև տեսալսողական ծառայությունների ոլորտի օրենսդրության մշակմանը մասնակցելու և փորձագիտական առաջարկություններ ներկայացնելու գործառույթ: 2025 թվականին Հանձնաժողովի ներկայացուցիչները մասնակցել են մի շարք օրենսդրական նախաձեռնությունների քննարկումներին՝ փորձագիտական եզրակացություններ ներկայացնելով ՀՀ կառավարությանը, ինչպես նաև Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության, Արդարադատության և Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություններին:

Հանձնաժողովը վստահեցնում է Ազգային ժողովին և հանրությանը, որ իր առաջնային նպատակն է արագ փոփոխվող մեդիամիջավայրում ապահովել կարգավորման համարժեք մեխանիզմների ներդրումը՝ պաշտպանելով հեռարձակողների անկախ, ազատ ու պատասխանատու խմբագրական և ֆինանսական քաղաքականությունը:

4

ՏԵՍԱԼՍՈՂԱԿԱՆ ՄԵԴԻԱՅԻ ՈԼՈՐՏՈՒՄ ԳՈՐԾՈՂ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2025 թվականին Հայաստանի Հանրապետությունում գործել է 94 լիցենզավորված ընկերություն՝ 41 տեսալսողական մեդիածառայություն մատուցող և 53 ցանցային օպերատոր: Տեսալսողական մեդիածառայություն մատուցող 41 ընկերություն հեռարձակել է՝

21 տեսալսողական ծրագիր

29 լսողական ծրագիր

Նույն ժամանակահատվածում գործել է հեղինակազորված 65 ընկերություն, որոնցից 32-ը լիցենզավորված են:

Օրենքի համաձայն՝ առանց լիցենզիայի Հայաստանի Հանրապետությունում հեռարձակվել է Հանրային հեռարձակողի 3 տեսալսողական և 4 լսողական ծրագիր: Իսկ միջազգային պայմանագրերի հիման վրա 4 տեսալսողական և 2 լսողական ծրագիր:

Գծապատկեր 1. Առանց լիցենզիայի հեռարձակում իրականացնողներ

4.1

ՀԵՂԻՆԱԿԱԶՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ

«Հեղինակազորումը կարգավորող պետական մարմնի կողմից ֆիզիկական կամ իրավաբանական անձին Հեռարձակողի կարգավիճակ տվող փաստաթղթի տրամադրումն է» («Տեսալսողական մեդիայի մասին» օրենք, 3-րդ հոդված, 1-ին մաս, 23-րդ կետ):

Հեղինակազորումն իրավաբանական կամ ֆիզիկական անձանց հնարավորություն է տալիս ցանցային օպերատորների միջոցով առանց լիցենզիայի հեռարձակել իրենց տեսալսողական ծրագրերը, իսկ մասնավոր մուլտիպլեքս օպերատորի հիմնադրման դեպքում՝ նաև մասնավոր մուլտիպլեքս օպերատորի միջոցով: Նշենք, որ հեղինակազորումը հանրային մուլտիպլեքսում տեսալսողական ծրագրերի հեռարձակման լիցենզավորման մրցույթներին մասնակցելու համար պարտադիր պայման է: Հեղինակազորման փաստաթուղթը՝ վկայագիրը, Հանձնաժողովը տրամադրում է պարզեցված ընթացակարգով և անժամկետ:

2025 թվականին գործել է 65 հեղինակազորված ընկերություն, որոնց տեսալսողական ծրագրերի թիվը կազմել է 125 (տե՛ս 81-րդ էջի հավելված N 1-ում):

Հանձնաժողովը նախորդ տարեկան հաղորդումներում անդրադարձել է հեղինակազորումը կարգավորող դրույթների վերանայման և համացանցով հեռուստանման (TV-like) մեդիածառայություններ մատուցողների գործունեության իրավական կարգավորման անհրաժեշտությանը: Գործնականում հեղինակազորված ընկերությունների մի մասը չի գտնվում կարգավորող պետական մարմնի վերահսկողության ներքո, քանի որ նրանք հեղինակազորվում են, սակայն հետագայում ցանցային օպերատորների միջոցով չեն հեռարձակվում: Նման պարագայում գործող իրավական կարգավորումները չեն ապահովում նշված տեսալսողական մեդիածառայություն մատուցողների գործունեության համապարփակ վերահսկողության հնարավորություն:

Համացանցով հեռուստանման մեդիածառայություններ մատուցողների գործունեության իրավական կարգավորումը պահանջում է հրատապ լուծում: Թե՛ համացանցով, թե՛ Հանձնաժողովի կարգավորման դաշտում գործող տեսալսողական մեդիածառայություն մատուցողների բովանդակությունը նախատեսված է նույն լսարանի համար, սակայն դրանց նկատմամբ կիրառվող օրենսդրական կարգավորումները էականորեն տարբերվում են: Հանձնաժողովի կարգավորման դաշտում գործող տեսալսողական մեդիածառայություն մատուցողներն ունեն օրենսդրությամբ սահմանված մի շարք պարտավորություններ ու պահանջներ, մինչդեռ, համացանցով հեռուստանման մեդիածառայություններ մատուցողները նման պարտավորություններից և պահանջներից ազատված են, իսկ նրանց նկատմամբ վերահսկողություն օրենսդրությամբ սահմանված չէ, ինչը մեդիա ոլորտում անհավասար մրցակցային պայմաններ է առաջացնում և պարարտ հող է ստեղծում ապատեղեկատվություն, ատելության խոսք, գռեհկաբանություն տարածելու համար: Եվ ինչը պակաս կարևոր չէ, ֆինանսապես ավելի շահեկան ու գրավիչ է դարձնում կարգավորման դաշտից դուրս մնալու որոշումը՝ արագ և հեշտ մոնետիզացնելով ցածրորակ բովանդակության ստեղծումն ու տարածումը:

Այս խնդիրների շուրջ 2025 թվականին գործադիր և օրենսդիր մարմինները չեն կազմակերպել մասնագիտական քննարկումներ, և չեն նախաձեռնել մեդիայի ոլորտում համընդհանուր խաղի կանոնների ձևակերպմանը միտված օրենսդրական փոփոխություններ:

Համեմատելով 2021-2025 թվականներին հեղինակազորված ընկերությունների քանակական ցուցանիշները, կարգավորող մարմինն արձանագրում է, որ քանակական աճ է գրանցվում հիմնականում մրցույթների անցկացման ժամանակ, քանի որ հեղինակազորումը լիցենզավորման մրցույթներին մասնակցելու պարտադիր պայման է:

2025 թվականին հեղինակազորման դադարեցման դիմումներ Հանձնաժողովը չի ստացել:

Գծապատկեր 2. 2021-2025 թվականներին հեղինակազորված ընկերությունների քանակական պատկերը



Աղուսյակ 1. 2025 թվականին տրամադրված հեղինակազորման վկայագրեր

	ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԿԱՄ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՀԵՂԻՆԱԿԱԶՈՐՄԱՆ ՎԿԱՅԱԳՐԻ ԱՄՍԱԹԻՎԸ
1	«ԻՆԹԵՐՆԵՅՇՆԼ ՄԵԴԻԱ ՀՈԼԴԻՆԳ» ՍՊԸ	31.01.2025թ.
2	«ՊԻԱՆՈ ԳՐՈՒՊ» ՍՊԸ	11.03.2025թ.
3	«ՌԱԴԻՈ ՎԱՅԲ» ՍՊԸ	20.03.2025թ.
4	«ՄԵՏԵՈ ԹԻ-ՎԻ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՍՊԸ	20.03.2025թ.
5	«ՌԱԴԻՈ ԱԼԻՔ» ՍՊԸ	02.06.2025թ.
6	«ՐԻՕՓԸՆ ՄԵԴԻԱ» ՍՊԸ	20.06.2025թ.
7	«ՔԻՍՍ ԷՖ ԷՄ» ՍՊԸ	21.08.2025թ.
8	«ՌԱԴԻՈ ԱՎՐՈՐԱ» ՍՊԸ	21.08.2025թ.
9	ՌՈՒԲԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՎԱՀԵՆԻ ԱՁ	06.10.2025թ.
10	«ԷՅ ԲԻ ՍԻ ՄԵԴԻԱ» ՍՊԸ	19.11.2025թ.
11	«ՍԻԼՈՒԵՏ ՍՏՈՒԴԻՈ» ՍՊԸ	26.12.2025թ.

4.2

ՀԱՆՐԱՅԻՆ ՄՈՒԼՏԻՊԼԵՔՍ ՑԱՆՑՈՒՄ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՎԱԾ ՏԵՍԱԼՍՈՂԱԿԱՆ ՄԵԴԻԱԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ՄԱՏՈՒՑՈՂՆԵՐ

2025 թվականին տեսալսողական մեդիածառայություն մատուցող 20 լիցենզավորված ընկերություն հանրային մուլտիպլեքս ցանցում հեռարձակել է 21 տեսալսողական ծրագիր, այդ թվում՝ 5 հանրապետական, 6 մայրաքաղաքային և 10 մարզային սփռման:

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՍՓՌՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՎԱԾ ՏԵՍԱԼՍՈՂԱԿԱՆ ՄԵԴԻԱԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ՄԱՏՈՒՑՈՂՆԵՐ

«ՇԱՆԹ» ծրագիր
«ՇԱՆԹ» ՍՊԸ

«ԱՐՄԵՆԻԱ» ծրագիր
«ԱՐՄԵՆԻԱ ԹԻ-ՎԻ» ՓԲԸ

«Ա-ԹԻՎԻ» ծրագիր
«Ա-ԹԻՎԻ» ՍՊԸ

«ՖԱՍԹՍՊՈՐՏ» ծրագիր
«ՖԱՍԹ ՄԵԴԻԱ» ՍՊԸ

«ԿԵՆՏՐՈՆ» ծրագիր
«ՄՈՒԼՏԻ ՄԵԴԻԱ-ԿԵՆՏՐՈՆ ԹԻՎԻ» ՓԲԸ

ՄԱՅՐԱՔԱՂԱՔԱՅԻՆ ՍՓՌՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՎԱԾ ՏԵՍԱԼՍՈՂԱԿԱՆ ՄԵԴԻԱԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ՄԱՏՈՒՑՈՂՆԵՐ

«5-ՐԴ ԱԼԻՔ» ծրագիր
«ՇԱՐԿ» ՍՊԸ

«ՆՈՐ ՀԱՅԱՍՏԱՆ» ծրագիր
«ՄՈ ԹԻՎԻ ՄԵԴԻԱ ՀՈԼԴԻՆԳ» ՓԲԸ

«21 ԹԻՎԻ» ծրագիր
«ԴԱՐ21»
ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԲԸ

«ՆՈՒՌ» ծրագիր
«ԱՐՓԻ ՄԵԴԻԱ» ՍՊԸ

«:ԲՈՒՆ ԹԻՎԻ» ծրագիր
«:ԲՈՒՆ» ԳԻՏԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ
ՀԻՄՆԱԴՐԱՄ

«ՖՐԻ ՆՅՈՒՔ» ծրագիր
«ՖՐԻ ՆՅՈՒՔ» ՍՊԸ

ՄԱՐԶԱՅԻՆ ՍՓՌՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՎԱԾ ՏԵՍԱԼՍՈՂԱԿԱՆ ՄԵԴԻԱԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ՄԱՏՈՒՑՈՂՆԵՐ

Արագածոտնի մարզ
«ԴԵԼՏԱ ԹԻՎԻ» ծրագիր
«ԴԵԼՏԱ ԹԻՎԻ» ՍՊԸ

Արարատի մարզ
«ԱՐԱՐԱՏ ԹԻՎԻ» ծրագիր
«ԷՖ ԹԻՎԻ» ՍՊԸ

Արմավիրի մարզ
«ԱՐՄԱ ԹԻՎԻ» ծրագիր
«ԱՐԱՆԵԱ» ՍՊԸ

Գեղարքունիքի մարզ
«ԳԵՂԱՄԱ» ծրագիր
«ԳԵՂԱՄԱ ՄԵԴԻԱ ՀՈԼԴԻՆԳ» ՍՊԸ

Լոռու մարզ
«ՖՈՐՏՈՒՆԱ» ծրագիր
«ՖՈՐՏՈՒՆԱ» ՍՊԸ

Կոտայքի մարզ
«ԿՈՏԱՅՔ ԹԻՎԻ» ծրագիր
«ԿՈՏԱՅՔ ԹԻ ՎԻ» ՍՊԸ

Շիրակի մարզ
«ՑԱՅԳ» ծրագիր
«ՑԱՅԳ» ՍՊԸ

Սյունիքի մարզ
«ՍՅՈՒՆԻՔ ԹԻՎԻ» ծրագիր
«ԶԱԳԵԶՈՐ»
ՀԵՌՈՒՍՏԱԲՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ ՍՊԸ

Վայոց ձորի մարզ
«ՍՅՈՒՆԻՔ ԹԻՎԻ» ծրագիր
«ԶԱԳԵԶՈՐ»
ՀԵՌՈՒՍՏԱԲՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ ՍՊԸ

Տավուշի մարզ
«ՏԱՎՈՒՇ ԹԻՎԻ» ծրագիր
«ՏԱՎՈՒՇ ՄԵԴԻԱ» ՍՊԸ

4.3

ՀԱՆՐԱՅԻՆ ՄՈՒԼՏԻՊԼԵՔՍ ՑԱՆՑՈՒՄ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՎԱԾ ԼՍՈՂԱԿԱՆ ՄԵԴԻԱԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ՄԱՏՈՒՑՈՂՆԵՐ

2025 թվականին լսողական մեդիածառայություն մատուցող 24 լիցենզավորված ընկերության կողմից հեռարձակվել է 29 լսողական ծրագիր, որից 3-ը Հայաստանի Հանրապետության, 16-ը՝ Երևան քաղաքի և 10-ը՝ մեկ մարզի տարածքում:[1]

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՍՓՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՎԱԾ ԼՍՈՂԱԿԱՆ ՄԵԴԻԱԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ՄԱՏՈՒՑՈՂՆԵՐ

«ԵՐԵՎԱՆ ԷՖԷՄ» ծրագիր
«ԱՐ ՌԱԴԻՈ ՄԻՋՄԱՅՐՑԱՄԱՔԱՅԻՆ» ՍՊԸ

«ՌԱԴԻՈ ՀԱՅ» ծրագիր
«ՌԱԴԻՈ ՀԱՅ» ՍՊԸ

«ՌԱԴԻՈ ՋԱՆ» ծրագիր
«ՌԱԴԻՈ ՊՌՈ» ՍՊԸ

[1] Հանձնաժողովի 2025թ.-ի մարտի 24-ի թիվ 25-Ա որոշմամբ դադարեցվել է «ՏԱՎՈՒՇ ՄԵԴԻԱ» ՍՊ ընկերության լսողական ծրագրի հաճախականության օգտագործման լիցենզիայի գործողությունը, սփռման տարածքը՝ Տավուշի մարզ, իսկ 2025թ.-ի դեկտեմբերի 4-ի թիվ 141-Ա որոշմամբ դադարեցվել է «ԷՖ ԹԻՎԻ» ՍՊ ընկերության լսողական ծրագրի հաճախականության օգտագործման լիցենզիայի գործողությունը, սփռման տարածքը՝ Արարատի մարզ:

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ՍՓՌՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՎԱԾ ԼՍՈՂԱԿԱՆ ՄԵԴԻԱԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ՄԱՏՈՒՑՈՂՆԵՐ

«ԱՎՏՈՌԱԴԻՈ» ծրագիր
«ԱՎՏՈՌԱԴԻՈ» ՍՊԸ

«ՌԱԴԻՈ ՄԱՐՇԱԼ» ծրագիր
«ԱՐՁԱԳԱՆՔ ՍՏ.» ՍՊԸ

«ԷՖԷՄ-105.5» ծրագիր
«ՖՄ-105.5» ՍՊԸ

«ԼԱՎ ԷՖ ԷՄ» ծրագիր
«ՌԱԴԻՈ ՎԱՅԲ» ՍՊԸ

«ԵՎՐՈՊԱ ՊԼՅՈՒՍ» ծրագիր
«ՌԱԴԻՈՏՈՒՆ» ՍՊԸ

«ՌԱԴԻՈ ՇԱՆՍՈՆ» ծրագիր
«ՇԱՆՍ ՄԵԴԻԱ» ՍՊԸ

«ՍՊՈՒՏՆԻԿ ԱՐՄԵՆԻԱ» ծրագիր
«ՏՈՍՊԱ» ՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ ՓԲԸ

«ԳՈ.ՍՊՈՐՏ» ծրագիր
«ՍՊՈՐՏ ՄԻՔՍ» ՍՊԸ

«ԳՈՐԾԱՐԱՐ ԱԼԻՔ ԷՖԷՄ 106.5» ծրագիր
«ԻՄՊՈՒԼՍ» ՍՊԸ

«ՌՈՒՍՍԿՈՅԵ ՌԱԴԻՈ» ծրագիր
«ՌԱԴԻՈ ԱԼՖԱ» ՍՊԸ

«ՌԱԴԻՈ ՎԱՆ» ծրագիր
«ՌԱԴԻՈ ՎԱՆ» ՍՊԸ

«ՔԻՍՍ ԷՖԷՄ» ծրագիր
«ՔԻՍՍ ԷՖ ԷՄ» ՍՊԸ

«ՌԱԴԻՈ ԱՎՐՈՐԱ» ծրագիր
«ՌԱԴԻՈ ԱՎՐՈՐԱ» ՍՊԸ

«ՓՈՓ ԷՖԷՄ» ծրագիր
«ԷՅ ԴԻ ԹԻ» ՍՊԸ

«ՌԱԴԻՈ ՔՈՄԵԴԻ» ծրագիր
«ԷՖ-ԷՄ» ՍՊԸ

«ԶԱՐԿ ԷՖԷՄ» ծրագիր
«ԶԱՐԿ ՄԵԴԻԱ» ՍՊԸ

ՄԱՐԶԱՅԻՆ ՍՓՌՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՎԱԾ ԼՍՈՂԱԿԱՆ ՄԵԴԻԱԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ՄԱՏՈՒՑՈՂՆԵՐ

Արարատի մարզ
«ԱՐԱՐԱՏ ՌԱԴԻՈ» ծրագիր
«ԷՖ ԹԻՎԻ» ՍՊԸ

Լոռու մարզ
«ՄԻԳ ՌԱԴԻՈ» ծրագիր
«ԼՈՌՈՒ ՄԻԳ» ՍՊԸ

«ՄԵԿ ԷՖԷՄ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ» ծրագիր
«ԷՖ-ԷՄ» ՍՊԸ

Արագածոտնի մարզ
«ՄԵԿ ԷՖԷՄ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ» ծրագիր
«ԷՖ-ԷՄ» ՍՊԸ

Վայոց ձորի մարզ
«ՄԵԿ ԷՖԷՄ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ» ծրագիր
«ԷՖ-ԷՄ» ՍՊԸ

Գեղարքունիքի մարզ
«ՌՈՒՍՍԿՈՅԵ ՌԱԴԻՈ» ծրագիր
«ՌԱԴԻՈ ԱԼՖԱ» ՍՊԸ

Շիրակի մարզ
«ՇԱՆԹ» ծրագիր
«ՇԱՆԹ» ՍՊԸ

«ՌԱԴԻՈ ՎԱՆ ԳՅՈՒՄՐԻ» ծրագիր
ՄԵՐԻ ՄԿՐՏՉՅԱՆ ՀՐԱՉՅԱՅԻ ԱՁ

Սյունիքի մարզ
«ՄԵԿ ԷՖԷՄ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ» ծրագիր
«ԷՖ-ԷՄ» ՍՊԸ

Տավուշի մարզ
«ՏԱՎՈՒՇ ԷՖԷՄ » ծրագիր
«ՏԱՎՈՒՇ ՄԵԴԻԱ» ՍՊԸ

4.4

ԱՌԱՆՑ ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՀԵՌԱՐՁԱԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՏԵՍԱԼՍՈՂԱԿԱՆ ՄԵԴԻԱԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ՄԱՏՈՒՑՈՂՆԵՐ

Օրենքի համաձայն՝ 2025 թվականին առանց լիցենզիայի գործել են Հանրային հեռարձակողները և միջազգային պայմանագրերի հիման վրա գործող հեռարձակողները:

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂՆԵՐ

2025 թվականին Հայաստանի Հանրապետությունում հեռարձակվել են Հանրային հեռարձակողի 3 տեսալսողական՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԲՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԲԸ-ի հանրապետական սփռման «ԱՌԱՋԻՆ ԱԼԻՔ», «ԱՌԱՋԻՆԻ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԱԼԻՔ» և «ՀՈԳԵՎՈՐ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԲՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԲԸ-ի հանրապետական սփռման «ՇՈՂԱԿԱԹ», ինչպես նաև 4 լսողական՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԲԸ-ի հանրապետական սփռման «ԱՌԱՋԻՆ ԾՐԱԳԻՐ» և մայրաքաղաքային սփռման «ԻՄ ՌԱԴԻՈ», «ՎԷՄ» կրթական-մշակութային և «ԱՐԵՎԻԿ» ծրագրերը:

«ԱՌԱՋԻՆ ԱԼԻՔ» ծրագիր
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԲՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԲԸ

«ԱՌԱՋԻՆԻ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԱԼԻՔ» ծրագիր
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԲՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԲԸ

«ՇՈՂԱԿԱԹ» ծրագիր
«ՀՈԳԵՎՈՐ–ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԲՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԲԸ

«ԱՌԱՋԻՆ ԾՐԱԳԻՐ» ծրագիր
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԲԸ

«ՎԷՄ» կրթական-մշակութային ծրագիր
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԲԸ

«ԱՐԵՎԻԿ» ծրագիր
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԲԸ

«ԻՄ ՌԱԴԻՈ» ծրագիր
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԲԸ

2025 թվականի հոկտեմբերի 24-ին օրենքում կատարված փոփոխությունների հիմքով 2026 թվականի հունվարի 1-ից հանրային մուլտիպլեքսում «ՇՈՂԱԿԱԹ» ծրագիրը չի հեռարձակվում:

ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՏԵՍԱԼՍՈՂԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ ՀԵՌԱՐՁԱԿՈՂՆԵՐ

Համաձայն 2020 թվականի օգոստոսից գործող «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի՝ 2021 թվականից հանրային մուլտիպլեքսում օտարերկրյա տեսալսողական ծրագրերի հեռարձակումն իրականացվում է առանց լիցենզիայի՝ միջազգային պայմանագրերի հիման վրա:

Համաձայն 2020 թվականի դեկտեմբերի 30-ին ստորագրված «Հայաստանի Հանրապետության կառավարության և Ռուսաստանի Դաշնության կառավարության միջև զանգվածային հեռահաղորդակցության ոլորտում համագործակցության մասին» համաձայնագրի՝ հեռարձակվում են հանրապետական սփռման 1 տեսալսողական՝ «ՌՏՌ-ՊԼԱՆԵՏԱ» և մայրաքաղաքային սփռման 2 տեսալսողական՝ «ՌՈՍԻՅԱ-Կ», «ԱՌԱՋԻՆ ԱԼԻՔ. ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՑԱՆՑ» հեռուստածրագրերը:

Միջազգային պայմանագրերի հիման վրա հեռարձակվում են նաև մայրաքաղաքային սփռման «ՄԻՐ» միջպետական հեռուստառադիոընկերության Հայաստանի Հանրապետության ազգային մասնաճյուղի «ՄԻՐ» տեսալսողական ծրագիրը (ռուսերեն), «ՄԻՐ» միջպետական հեռուստառադիոընկերության Հայաստանի Հանրապետության ազգային մասնաճյուղի «ՄԻՐ» լսողական ծրագիրը (ռուսերեն) և «Էղ Էֆ Ի» (RFI) (Ֆրանսիա, ֆրանսերեն) լսողական ծրագիրը:

«ՌՏՌ-ՊԼԱՆԵՏԱ» ծրագիր

«ԱՌԱՋԻՆ ԱԼԻՔ. ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՑԱՆՑ» ծրագիր

«ՌՈՍԻՅԱ-Կ» ծրագիր

«ՄԻՐ» ծրագիր
«ՄԻՐ» միջպետական հեռուստառադիոընկերության
Հայաստանի Հանրապետության ազգային մասնաճյուղ

«ՄԻՐ» լսողական ծրագիր
«ՄԻՐ» միջպետական հեռուստառադիոընկերության Հայաստանի
Հանրապետության ազգային մասնաճյուղ

«RFI» «Ֆրանսիական
միջազգային ռադիո» լսողական ծրագիր

4.5

ՄԱԼՈՒԽԱՅԻՆ ԿԱՄ ԱՅԼ ՑԱՆՑ ՕԳՏԱԳՈՐԾՈՂ ՑԱՆՑԱՅԻՆ ՕՊԵՐԱՏՈՐՆԵՐ

«Ցանցային օպերատորը ֆիզիկական կամ իրավաբանական անձ է, որը սեփականության կամ այլ իրավունքով ունի մալուխային կամ այլ ցանց (բացառությամբ հաճախականային սահմանափակ ռեսուրս օգտագործելու դեպքերի) և ապահովում է տվյալ ենթակառուցվածքի տեխնիկական շահագործումը» («Տեսալսողական մեդիայի մասին» օրենք, 3-րդ հոդված, 1-ին մաս, 5-րդ կետ):

Ցանցային օպերատորները՝ տեսալսողական տեղեկատվություն տարածողները, օգտատերերին միայն ազդանշան հասցնողներն են և տեսալսողական արտադրանքի բովանդակության համար պատասխանատվություն չեն կրում: Ցանցային օպերատորի գործունեության լիցենզիան տրամադրվում է առանց մրցույթի՝ պարզեցված ընթացակարգով, 10 տարի ժամկետով:

2025 թվականին ՀՀ Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությունը Հանձնաժողովի մասնագետների մասնակցությամբ մշակեց ««Տեսալսողական մեդիայի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծ, որը դեկտեմբերի վերջում հաստատեց Կառավարությունն ու ուղարկեց Ազգային Ժողով: Նախագիծը առաջարկում է նոր գործիքներ ցանցային օպերատորների միջոցով տարածվող օտարերկրյա տեսալսողական ծրագրերի կարգավորման և վերահսկողության համար: Առաջարկվող կարգավորումների նպատակն է. ապահովել պետության տեղեկատվական տարածքի պաշտպանվածությունը, հանրային շահի սպասարկումը՝ միաժամանակ սահմանելով կանխատեսելի, համաչափ և իրավաչափ ընթացակարգեր վերահաղորդվող տեսալսողական արտադրանքի նկատմամբ:

Նախորդ տարվա ընթացքում ակնհայտ էր ցանցային օպերատորների քանակի նվազումը: Եթե նրանց ընդհանուր թիվը 2021-2024 թվականներին փոփոխության գրեթե չէր ենթարկվում՝ տատանվելով 61-65-ի սահմաններում, ապա 2025 թվականի դեկտեմբերի դրությամբ ցանցային օպերատորների թիվը կազմել է 53: Նվազման հիմնական պատճառն է մարզային սփռում իրականացնող ցանցային օպերատորների դիմումների հիման վրա լիցենզիաների գործողության դադարեցումը: Եթե 2021 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ գործունեություն էր իրականացնում մարզային 35 ցանցային օպերատոր, ապա 2025 թվականին՝ ընդամենը 22:

2021 թվական մարզային ցանցային օպերատոր **35**

2025 թվական մարզային ցանցային օպերատոր **22**

Ցանցային օպերատորների գործունեությունը դադարեցնելու հիմնական պատճառներն են.

- անհավասար մրցակցությունը՝ պայմանավորված համացանցում անօրինական կերպով և կարգավորումից և վերահսկողությունից դուրս գործող հավելվածների մատուցած նույնատեսակ ծառայություններով,
- որակյալ և բազմազան ծառայություններ մատուցող խոշոր ցանցային օպերատորների մարզային «էքսպանսիան»,
- Հանձնաժողովի վերահսկողության գործառույթների պատշաճ իրականացումը, ինչը զրկում է անբարեխիղճ օպերատորներին առանց իրավատերերի հետ պայմանագրերի և ֆինանսական պարտավորությունների տարածել հեռուստածրագրեր:

Գծապատկեր 3. 2021-2025 թվականներին ցանցային օպերատորի լիցենզիա ստացած ընկերությունների քանակական պատկերը



Տեսալսողական ծրագրերի վերահաղորդում իրականացնող 53 ցանցային օպերատորներից 15-ը գործել են Հայաստանի Հանրապետության, 8-ը՝ Երևան քաղաքի և մեկ կամ մի քանի մարզերի, 6-ը՝ Երևան քաղաքի, 2-ը՝ մեկից ավելի մարզերի և 22-ը՝ մեկ մարզի տարածքում (տե՛ս 87-րդ էջի հավելված N 2-ում):

2025 թվականին Հանձնաժողովը տրամադրել է ցանցային օպերատորի գործունեության 11 լիցենզիա:

Գծապատկեր 4. Մալուխային ցանցերում տարածվող տեսալսողական ծրագրերն ըստ արտադրող երկրի



Ցանցային օպերատորների վերահաղորդվող բովանդակության հիմնական լեզուն շարունակում է լինել ոչ հայերենը, ինչի վրա Հանձնաժողովը հրավիրում է հատուկ ուշադրություն: Տեղեկատվական անվտանգությունն ու հասարակական ներդաշնակ զարգացումը ուղիղ կերպով կապված են հանրությանը տրամադրվող բովանդակության լեզվի հետ:

Գծապատկեր 5. Ցանցային օպերատորների միջոցով վերահաղորդվող տեսալսողական ծրագրերի հեռարձակման լեզուն



Հանձնաժողովի համար առաջնային են տեսալսողական բովանդակության բազմազանության խթանումը, հեղինակային իրավունքների և սպառողների շահերի պաշտպանությունը ցանցային օպերատորների գործունեության կարգավորումների արդիականացումը:

4.6

ՏԵՍԱԼՍՈՂԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԴԻՍՏՐԻԲՅՈՒՏՈՐՆԵՐ

«Տեսալսողական ծրագրերի դիստրիբյուտորը Հեռարձակողի հետ պայմանագրի հիման վրա օպերատորին տարածման նպատակով տեսալսողական ծրագրեր տրամադրող ֆիզիկական կամ իրավաբանական անձն է» («Տեսալսողական մեդիայի մասին» օրենք, 3-րդ հոդված, 1-ին մաս, 10-րդ կետ):

Հայաստանի Հանրապետությունում տեսալսողական ծրագրերի դիստրիբյուտորները գործում են Հանձնաժողով ծանուցում ներկայացնելուց հետո:

2025 թվականին Հանձնաժողովն ուսումնասիրել է տեսալսողական ծրագրերի իրավատերերի հետ կնքված 21 պայմանագրեր, համաձայնագրեր և այլ փաստաթղթեր, որոնց արդյունքում հաստատվել է 54 տեսալսողական ծրագրերի (հեռուստաալիքների) վերաբերյալ 12 ծանուցում:

Տարեկան հաղորդման մեջ արդեն հիշատակված օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին նախագծում նոր կարգավորումներ են սահմանվել նաև դիստրիբյուտորների գործառույթների վերաբերյալ: Մասնավորապես, նախատեսվում է Հանձնաժողովին վերապահել իրավասություն՝ վերահսկել վերահաղորդվող տեսալսողական ծրագրերի համապատասխանությունը ՀՀ օրենսդրությանը և ՀՀ օրենսդրությունը խախտելու դեպքում համապատասխան միջոցներ ձեռնարկել (ընդհուպ մինչև վերահաղորդվող տեսալսողական ծրագրերի տարածման կասեցումը ցանցային օպերատորների միջոցով):

2025 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ տեսալսողական ծրագրերի դիստրիբյուտորի գործունեություն է իրականացրել 11 ընկերություն, որոնց ներկայացրած 241 տեսալսողական ծրագրերի ծանուցումները Հանձնաժողովը հաստատել է:

4.7

ՈՉ ԳԾԱՅԻՆ ՏԵՍԱԼՍՈՂԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՒՄ

«Ոչ գծային տեսալսողական տեղեկատվությունը Հեռարձակողի կամ օպերատորի կողմից անհատ սպառողի պահանջով նրա ընտրած պահին դիտելու և (կամ) լսելու նպատակով տրամադրվող տեսալսողական նյութն է՝ ըստ տեսացանկի (կատալոգի)» («Տեսալսողական մեդիայի մասին» օրենք, 3-րդ հոդված, 1-ին մաս, 17-րդ կետ):

Ոչ գծային տեսալսողական տեղեկատվություն հեռարձակողները գործունեություն են իրականացնում Հանձնաժողովի թույլտվությունը ստանալուց հետո:

Օրենքով Հանձնաժողովին վերապահված գործառույթի շրջանակում 2025 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ոչ գծային տեսալսողական տեղեկատվության հեռարձակման թույլտվություն է ունեցել 7 ոչ գծային հեռարձակող:

2021-2022 թվականների ընթացքում տրամադրվել է ոչ գծային տեսալսողական տեղեկատվության հեռարձակման գործունեություն իրականացնելու 6 թույլտվություն, այդ թիվը երկու տարիների ընթացքում չի փոխվել, իսկ 2025 թվականին ոչ գծային տեսալսողական տեղեկատվության հեռարձակման թույլտվություն է ստացել ևս 1 ոչ գծային հեռարձակող:

Աղուսյակ 2. 2021-2025 թվականներին տրամադրված ոչ գծային տեսալսողական տեղեկատվության հեռարձակման գործունեություն իրականացնելու թույլտվություններ

ՖԻԶԻԿԱԿԱՆԿԱՄ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՍՓՌՄԱՆ ՏԱՐԱԾՔԸ
«ՎԻՐՈՒՍ ՆԵՏ» ՍՊԸ	Հայաստանի Հանրապետություն
«ՅՈՒՔՈՄ» ՓԲԸ	Հայաստանի Հանրապետություն
«ՏԵԼԵԿՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ԲԲԸ	Հայաստանի Հանրապետություն
«ԹԻՄ» ՓԲԸ	Հայաստանի Հանրապետություն
«ՀԻԲՐԻԴ ՓՐՈԴԱՔՇՆ ԷՆԴ ԴԻՍԹՐԻԲՅՈՒՇՆ» ՍՊԸ	Հայաստանի Հանրապետություն
«ՀԻԲՐԻԴ ՍՈԼՅՈՒՇՆՍ» ՍՊԸ	Հայաստանի Հանրապետություն
«ՅՈՐՆԵԹ» ՍՊԸ	ք. Երևան

5

ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ

Հանրային թվային մուլտիպլեքսում տեսալսողական և լսողական ծրագրերի հեռարձակման լիցենզավորման մրցույթները Հանձնաժողովը հայտարարում է մուլտիպլեքսում սլոթի (հաճախականության) օգտագործման լիցենզիայի ժամկետը լրանալու, նոր կամ ազատ սլոթ (հաճախականություն) առաջանալու դեպքում:

2025 թվականին ազատ հաճախականությունների առկայությամբ պայմանավորված կարգավորող մարմինը հայտարարել է լսողական ծրագրի հաճախականության օգտագործման լիցենզավորման 1 մայրաքաղաքային և 2 մարզային՝ Տավուշի և Արարատի մարզերի տարածքում սփռման մրցույթներ: Ազատ հաճախականություններ առաջանալու պատճառը լսողական ծրագրի հաճախականության օգտագործման 3 լիցենզիայի գործողության դադարեցումն էր: Երկու լիցենզիայի գործողության դադարեցման հիմք են հանդիսացել լիցենզիայի գործողության կասեցման ժամանակահատվածում խախտումը չվերացնելը, իսկ մեկ լիցենզիայի դադարեցման համար՝ լիցենզավորված անձի համապատասխան դիմումը:

Կայացել է լսողական ծրագրի հաճախականության օգտագործման լիցենզավորման մայրաքաղաքային սփռման մրցույթ, որի արդյունքում տրամադրվել է Երևան քաղաքի տարածքում լսողական ծրագրի հաճախականության օգտագործման 1 լիցենզիա: Մրցույթի անցկացման ողջ գործընթացը կազմակերպվել է պատշաճ կերպով: Մրցույթին մասնակցած 4 ընկերությունների համար ապահովվել են հավասար պայմաններ, մրցույթի արդյունքները հիմնավորվել են օբյեկտիվ, անկողմնակալ գնահատականներով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ԼԻՑԵՆԶԻԱ N

ք. Երևան

տրվում է

գործունեության տեսակը

սփռման տարածքը

հեռարձակման հաճախականությունը

լիցենզիայի գործողության ժամկետը

ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

Տ. ՀԱԿՈԲՅԱՆ

Մարզային սփոման մրցույթները դեռևս չեն կայացել.

- Արարատի մարզի տարածքում հայտարարված մրցույթը՝ հայտեր չներկայացվելու հիմքով,
- Տավուշի մարզի տարածքում սփոման մրցույթը մեկ անգամ՝ փակ վարկանիշային քվեարկության արդյունքում հաղթող չճանաչելու և երկու անգամ՝ հայտեր չներկայացնելու հիմքերով:

Տավուշի և Արարատի մարզերում առկա ազատ հաճախականություններով պայմանավորված Հանձնաժողովը կրկին հայտարարել է լսողական ծրագրի հաճախականության օգտագործման լիցենզավորման մրցույթներ, որոնք ընթացքի մեջ են:

Միաժամանակ՝ մարզերում լսողական ծրագրեր հեռարձակողների թիվը, պայմանավորված նոր հաճախականությունների առկայությամբ, 2021-2023 թվականներին ավելացել էր: Լսողական ծրագրեր էին հեռարձակվում Հայաստանի Հանրապետության 8 մարզում, սակայն 2025 թվականին հեռարձակողների թիվը նվազել է և այժմ լսողական ծրագրեր հեռարձակվում են 6 մարզում՝ Գեղարքունիքի, Վայոց ձորի, Սյունիքի, Արագածոտնի, Լոռու և Շիրակի մարզերում, ընդ որում Լոռու և Շիրակի մարզերում հեռարձակվում են երկուական ծրագիր:

ՀՀ Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության ներկայացրած տեղեկատվության համաձայն՝ Արմավիրի և Կոտայքի մարզերում ազատ հաճախականություններ առկա չեն:

Հարկ ենք համարում նշել, որ պարբերաբար առաջանում են խնդիրներ՝ կապված լսողական ծրագրեր հեռարձակողներին տրամադրված հաճախականությունների օգտագործման հետ, քանի որ ընկերություններին պատկանող սարքավորումները տեխնիկական դժվարություններ են առաջացնում հաճախականություններն անխոչընդոտ օգտագործելու համար: Միաժամանակ, լսողական ծրագրեր հեռարձակողների ներկայացրած տեղեկատվության համաձայն՝ ներկայումս որոշ ավտոմեքենաների ռադիոընդունիչները կարողանում են ընդունել միայն կենտ նիշով հաճախականություններ, ինչի հետևանքով առաջանում է հաճախականությունները պարբերաբար փոխելու անհրաժեշտություն:

Այս խնդիրներով պայմանավորված, դիմումների հիման վրա, համաձայնեցնելով ՀՀ Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության հետ, 2025 թվականի ընթացքում կատարվել է Երևան, Ախթալա, Ապարան, Վայք քաղաքներում տրամադրված 4 հաճախականությունների փոփոխություն:

Օրենքով սահմանված կարգավորումների համաձայն՝ մասնավոր մուլտիպլեքս օպերատորի գործունեության լիցենզավորման մրցույթ հայտարարվում է ազատ հաճախականությունների առկայության դեպքում, սակայն մինչ օրս ազատ հաճախականություն չլինելու հետևանքով լիցենզավորման մրցույթ չի հայտարարվել:

5.1

2025 ԹՎԱԿԱՆԻ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ, ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐԵՑՄԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

2025 թվականին Հանձնաժողով է ներկայացվել ցանցային օպերատորի գործունեության լիցենզիա ստանալու 11 դիմում, որոնք բավարարվել են: Արդյունքում տրամադրվել է ցանցային օպերատորի գործունեության 4 լիցենզիա՝ Հայաստանի Հանրապետության, 2 լիցենզիա՝ Երևան քաղաքի, 1 լիցենզիա՝ Երևան քաղաքի և մեկ մարզի և 4 լիցենզիա՝ մեկ մարզի տարածքում սփռման համար:

Աղուսյակ 3. 2025 թվականին տրամադրված ցանցային օպերատորի գործունեության լիցենզիաներ

ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿԱՄ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՍՓՌՄԱՆ ՏԱՐԱԾՔԸ	ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ
«ՅՈՏՏԱ ՑԱՆՑ» ՍՊԸ	ք. Երևան	10.01.2025թ.-10.01.2035թ.
«ՎԻՐՈՒՍ ՆԵՏ» ՍՊԸ	ՀՀ	07.03.2025թ.-07.03.2035թ.
«ՌԱՅ ՏՎ» ՍՊԸ	Սյունիքի մարզ	25.03.2025թ.-25.03.2035թ.
«ԷՅՉՆԵԹ» ՍՊԸ	ՀՀ	06.06.2025թ.-06.06.2035թ.
ԱՐՏԱԿ ԲՈՐԻԿԻ ԴՈԼՈՒԽԱՆՅԱՆ ԱՁ	Կոտայքի մարզ	08.07.2025թ.-08.07.2035թ.
«ՅՈՐՆԵԹ» ՍՊԸ	ք. Երևան	08.07.2025թ.-08.07.2035թ.
«ՖՈՐ ՅՈՒՆԻԹԻ» ՍՊԸ	ՀՀ	24.07.2025թ.-24.07.2035թ.
«ԴԻԼԱՐՄ» ՍՊԸ	Լոռու մարզ	10.11.2025թ.-10.11.2035թ.
«ԿԻՄ-ՌԱՅ» ՍՊԸ	ք. Մասիս	10.11.2025թ.-10.11.2035թ.
«ԻՆՏԵՐԼԻՆԿ» ՍՊԸ	ք. Երևան, Կոտայքի մարզ	26.11.2025թ.-26.11.2035թ.
«ՎԻՎԱ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ	ՀՀ	26.12.2025թ.-26.12.2035թ.

Լիցենզավորման գործառույթի շրջանակում 2025 թվականին Հանձնաժողովը վերաձևակերպել է 1 լիցենզիա՝ գտնվելու վայրի փոփոխության հիմքով: Կասեցվել է լսողական ծրագրի հաճախականության օգտագործման 3 և ցանցային օպերատորի գործունեության 1 լիցենզիաների գործողությունը, որոնք այնուհետև դադարեցվել են: Կասեցվել է նաև հանրային մուլտիպլեքսում սլոթի օգտագործման 1 լիցենզիայի գործողությունը, որի կասեցումը վերացվել է:

Տվյալ ժամանակահատվածում դադարեցվել է ցանցային օպերատորի գործունեության 19 լիցենզիա, որից 13-ը՝ դիմումի համաձայն, 5-ը՝ լիցենզիայի գործողության ժամկետը լրանալու հիմքով և 1-ը՝ լիցենզիայի գործողության կասեցման ժամանակահատվածում խախտումը չվերացնելու հիմքով:

Աղուսյակ 4. 2025 թվականին տրամադրված լսողական ծրագրի հաճախականության օգտագործման լիցենզիաներ

ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿԱՄ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՍՓՌՄԱՆ ՏԱՐԱԾՔԸ	ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ
«ՌԱԴԻՈ ՎԱՅԲ» ՍՊԸ	ք.Երևան	07.06.2025թ.-07.06.2032թ.

Աղուսյակ 5. 2025 թվականին դադարեցված լսողական ծրագրի հաճախականության օգտագործման լիցենզիաներ

ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿԱՄ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՍՓՌՄԱՆ ՏԱՐԱԾՔԸ	ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐԵՑՄԱՆ ՀԻՄՔԸ
«ՌԱԴԻՈ 107 ՖՄ» ՍՊԸ	ք. Երևան	լիցենզիայի գործողության կասեցման ժամանակահատվածում խախտումը չվերացնելու հիմքով
«ՏԱՎՈՒՇ ՄԵԴԻԱ» ՍՊԸ	Տավուշի մարզ	լիցենզիայի գործողության կասեցման ժամանակահատվածում խախտումը չվերացնելու հիմքով
«ԷՖ ԹԻՎԻ» ՍՊԸ	Արարատի մարզ	լիցենզիայի գործողության կասեցման ժամանակահատվածում՝ դիմումի համաձայն

Աղուսյակ 6. 2025 թվականին դադարեցված ցանցային օպերատորի գործունեության լիցենզիաներ

ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿԱՄ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՍՓՌՄԱՆ ՏԱՐԱԾՔԸ	ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐԵՑՄԱՆ ՀԻՄՔԸ
«ՎԻՐՈՒՍ ՆԵՏ» ՍՊԸ	ք. Երևան, Արագածոտնի, Արարատի, Լոռու, Կոտայքի, Տավուշի մարզեր	դիմումի համաձայն
«ՌԱՅ ՏՎ»	ք. Մեղրի, ք. Ագարակ	ժամկետը լրանալու հիմքով
«ՄԻՐԱՆ ԳՐՈՒՊ» ՍՊԸ	Գեղարքունիքի մարզ	դիմումի համաձայն
«ՅՈՏՏԱ ՅԱՆՅ» ՍՊԸ	ք. Երևան	դիմումի համաձայն
«ՄԵԳԱՆԵՏ ԷՅՉ ԴԻ» ՍՊԸ	Սյունիքի մարզ	դիմումի համաձայն
«ՊԼԱՆԵՏ ՐԱՖՖԻ» ՍՊԸ	Կոտայքի մարզ	դիմումի համաձայն
«ԱՇՏԱՐԱԿ ԷԼԻՏ» ՍՊԸ	ք. Աշտարակ	դիմումի համաձայն
«ՄԱՅ ՆԵՏ» ՍՊԸ	Լոռու մարզ	լիցենզիայի գործողության կասեցման ժամանակահատվածում խախտումը չվերացնելու հիմքով
«ԷՅՉՆԵԹ» ՍՊԸ	ք. Երևան, Արագածոտնի, Արարատի, Գեղարքունիքի, Կոտայքի, Շիրակի, Վայոց ձորի մարզեր	դիմումի համաձայն
«ՋԻԷՆ ՍԻՍԹԵՄՍ» ՍՊԸ	Հայաստանի Հանրապետություն	դիմումի համաձայն
«ՅՈՐՆԵԹ» ՍՊԸ	ք. Երևան	ժամկետը լրանալու հիմքով
ԳԵՎՈՐԳ ՍԱՄՎԵԼԻ ՀԱՅՐԻՅԱՆ ԱՁ	Կոտայքի մարզ	դիմումի համաձայն
«ԽՈՒՍՏՈՒՓ ԹԻՎԻ» ՍՊԸ	ք. Կապան	դիմումի համաձայն
ԿԱՐԵՆ ԱՐԱՅԻԿԻ ՄԿՐՏՉՅԱՆ ԱՁ	Կոտայքի մարզ	դիմումի համաձայն
«ԴԻԼԱՐՄ» ՍՊԸ	Լոռու մարզ	ժամկետը լրանալու հիմքով
«ԿԻՄ-ՌԱՅ» ՍՊԸ	ք. Մասիս	ժամկետը լրանալու հիմքով
«ԻՆՏԵՐԼԻՆԿ» ՍՊԸ	ք. Երևան, Կոտայքի մարզ	ժամկետը լրանալու հիմքով
ԿԱՐԵՆ ՔԱՋԻԿԻ ԱՎԱԳՅԱՆ ԱՁ	Կոտայքի մարզ	դիմումի համաձայն
«ՀԱՅԿ-ՄԵԴԻԱ» ՍՊԸ	Շիրակի մարզ	դիմումի համաձայն

6

ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ԳԾՈՎ ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ ԿԱՏԱՐՎԱԾ ՓԱՍՏԱՑԻ ՄՈՒՏՔԵՐ

Հանձնաժողովի կարգավորման ոլորտում գործող ընկերությունները 2025 թվականին պետական տուրքի տեսքով ՀՀ պետական բյուջե մուտքագրված 32 185 809 ՀՀ դրամ գումարն ապահովել են լսողական ծրագրի հաճախականության օգտագործման լիցենզավորման մրցույթների մասնակցության, տեսալսողական և լսողական ծրագրերի հեռարձակման, ցանցային օպերատորների գործունեության համար տարեկան պետական տուրքերի, լիցենզիայի վերաձևակերպման, ինչպես նաև սահմանված ժամկետում չվճարված տարեկան պետական տուրքի գումարի նկատմամբ հաշվարկված տույժերի համար գանձված գումարների հաշվին:

Համեմատության կարգով նշենք, որ Հանձնաժողովի կողմից գանձվող պետական տուրքը 2023 թվականին կազմել է 32 927 200 ՀՀ դրամ, 2024 թվականին՝ 34 349 768 ՀՀ դրամ:

2025 թվականի մուտքերի նվազումը 2023 և 2024 թվականներին գանձված փաստացի մուտքերի նկատմամբ պայմանավորված է 2025 թվականին դիմումի համաձայն մեծ թվով ցանցային օպերատորի գործունեության լիցենզիաների դադարեցմամբ:

32 185 809

2025 թվականին
ՀՀ պետական բյուջե
մուտքագրված ՀՀ դրամ

7

ՀԵՌԱՐՁԱԿՈՂՆԵՐԻ ԵՎ ՑԱՆՑԱՅԻՆ ՕՊԵՐԱՏՈՐՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄ

Ընդհանուր տեղեկություններ Հեռարձակողների մշտադիտարկման մասին

«Մշտադիտարկումը կարգավորող պետական մարմնի կողմից Հեռարձակողների և օպերատորների գործունեության՝ տեսալսողական մեդիայի մասին օրենսդրության պահանջներին համապատասխանությունը գնահատելու նպատակով իրականացվող դիտարկումն է» («Տեսալսողական մեդիայի մասին օրենք», 3-րդ հոդված, 1-ին մաս):

Հեռարձակողների և ցանցային օպերատորների գործունեության մշտադիտարկումն ուղղված է տեսալսողական մեդիայի ոլորտը կարգավորող օրենսդրական պահանջների պահպանման գնահատմանը: Այն իրականացվում է ուղղակի կամ տեղում դիտարկման միջոցով՝ ներառելով «Տեսալսողական մեդիայի մասին», «Գովազդի մասին», «Դեղերի մասին», «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» ՀՀ օրենքների, ինչպես նաև «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի և ոլորտին առնչվող այլ իրավական ակտերի դրույթների կատարման վերահսկողությունը:

Բացի այդ, գնահատվում է Հանձնաժողովի ընդունած կարգերի և որոշումների կատարումը: Մասնավորապես, վերահսկվում են «Տեսալսողական հաղորդումների հաշվառման էլեկտրոնային մատյանի ձևը և վարման կարգը սահմանելու մասին», «Թեմատիկ ուղղվածության չափորոշիչները, դրանց հասկացությունները սահմանելու մասին», «Լսողական խնդիրներ ունեցող սպառողների համար օրվա ընթացքում համապատասխանաբար առնվազն մեկական մանկական և լրատվական տեսալսողական հաղորդումներ, ֆիլմեր ժեստերի լեզվով թարգմանությամբ կամ հայերեն ենթագրով հեռարձակման եթերային ժամերը սահմանելու մասին» որոշումների պահանջները:

Մշտադիտարկման առանցքում է նաև «Անչափահասների առողջության, մտավոր և ֆիզիկական զարգացման, դաստիարակության վրա հնարավոր բացասական ազդեցություն ունեցող տեսալսողական հաղորդումների որոշման չափորոշիչները սահմանելու մասին» և «Էրոտիկ բնույթի տեսալսողական հաղորդումների և սարսափ ու ակնհայտ բռնություն պարունակող ֆիլմերի, քրեական ենթամշակույթի քարոզ պարունակող ֆիլմերի ու տեսալսողական հաղորդումների որոշման չափորոշիչները սահմանելու մասին» որոշումների պահպանումը:

Վերահսկողական գործառույթների շրջանակներում 2025 թվականին տեղում դիտարկումներ իրականացնելու նպատակով Հանձնաժողովը կազմակերպել է գործուղումներ Երևան քաղաքում և ՀՀ մարզերում: Դրանց արդյունքում մշտադիտարկվել է 42 ցանցային օպերատոր, որոնցից 26-ի գործունեության վերաբերյալ կազմած արձանագրությունների հիման վրա հարուցվել են վարչական վարույթներ: Նույն ժամանակահատվածում Հանձնաժողովն ընտրանքային սկզբունքով իրականացրել է նաև Հեռարձակողների տեսալսողական բովանդակության մշտադիտարկում՝ յուրաքանչյուրի համար ամսական առնվազն հինգ օր տևողությամբ: Արձանագրված խախտումների փաստերով հարուցվել են համապատասխան վարչական վարույթներ:

Կարգավորող մարմինը, առաջնահերթություն տալով հանրային շահին, խիստ վերահսկողություն է իրականացրել «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջի պահպանման ուղղությամբ, ըստ որի՝ լիցենզավորված Հեռարձակողների եթերաժամի առնվազն 20 տոկոսը պետք է հատկացվի մանկական, կրթական, մշակութային և մարզական հաղորդումներին: Օրենքի այս դրույթը խախտած ընկերությունները ենթարկվել են վարչական պատասխանատվության (տուգանվել են):

Լիցենզիա ստացած Հեռարձակողների ծրագրերում մանկական, կրթական, մշակութային և մարզական թեմատիկ ուղղվածության տեսալսողական հաղորդումների տոկոսային ծավալների մանրամասները՝ (տե՛ս 90-րդ էջի հավելված N 3-ում):

7.1

ՏԵՍԱԼՍՈՂԱԿԱՆ ՄԵԴԻԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԵՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հեռարձակողների մշտադիտարկումը միայն տեխնիկական գործառույթ չէ. այն ժողովրդավարության, օրինականության և հանրային շահի պաշտպանության հիմնարար գործիք է: Հենց դրանով է պայմանավորված համացանցային մեդիաբովանդակության կարգավորման անհրաժեշտությունը, որը պետք է դիտարկել ոչ թե որպես սահմանափակող, այլ որպես համակարգային ժողովրդավարական մեխանիզմ: Համացանցային հարթակներն այլևս չեն գործում որպես մեդիայի լրացուցիչ բաղադրիչ, այլ ձևավորում են տեղեկատվական օրակարգը՝ անմիջական ազդեցություն ունենալով ինչպես ավանդական լրատվամիջոցների աշխատանքի, այնպես էլ հանրային ընկալումների վրա: Այս պայմաններում մեկ ոլորտի անկանոն զարգացումն անխուսափելիորեն ազդում է մյուսի վրա:

Հանրային մուլտիպլեքսում գործող Հեռարձակողների նկատմամբ արդեն իսկ կիրառվում են մի շարք օրենսդրական սահմանափակումներ, որոնք տարեցտարի ավելանում են: Դեռևս 2023 թվականի տարեկան հաղորդման մեջ Հանձնաժողովը բարձրաձայնել էր «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասում 2022 թվականին կատարված փոփոխություններով պայմանավորված խնդիրները, որոնց բախվում են հատկապես մարզային հեռուստաընկերությունները:

Ըստ այդ փոփոխության՝ եթեր հեռարձակվող լրատվական, մանկական հաղորդումները և ֆիլմերը պետք է մատչելի լինեն լսողության խնդիրներ ունեցող սպառողների համար: Մասնավորապես, օրվա ընթացքում առնվազն մեկ մանկական հաղորդում պետք է հեռարձակվի հայերեն ժեստերի լեզվով թարգմանությամբ, իսկ լրատվական հաղորդումը կամ ֆիլմը՝ ժեստերի լեզվով թարգմանությամբ կամ հայերեն ենթագրերով: Այս պահանջները բարդ կացության մեջ են դրել մարզային հեռուստաընկերություններին, քանի որ ենթադրում են լրացուցիչ ֆինանսական ծախսեր, իսկ մանկական հաղորդումների դեպքում՝ վերջիններս բախվում են մարզերում համապատասխան մասնագետների (սուրդոթարգմանիչների) բացակայության խնդրին:

Նշված փոփոխության բացասական հետևանքներից է, որ Հեռարձակողները, չցանկանալով խախտել օրենքը, ստիպված են լինում դադարեցնել մանկական հաղորդումների հեռարձակումը, ինչը, իր հերթին, հանգեցնում է երեխաների՝ համապատասխան տեղեկատվություն ստանալու իրավունքի խախտմանը: Այս խնդիրները հստակ արտացոլված են գծապատկերներում:

Գծապատկեր 6. Մուլտֆիլմերի 2023 - 2025 թվականների համեմատական պատկերը հանրապետական և մայրաքաղաքային սփռման լիցենզավորված ընկերությունների տեսալսողական ծրագրերում



*Տեսալսողական ծրագրերի հաշվարկի մեջ ներառված չեն Հանրային հեռարձակողները

Գծապատկեր 7. Գեղարվեստական ֆիլմերի 2023-2025 թվականների համեմատական պատկերը հանրապետական և մայրաքաղաքային սփռման լիցենզավորված ընկերությունների տեսալսողական ծրագրերում



*Տեսալսողական ծրագրերի հաշվարկի մեջ ներառված չեն Հանրային հեռարձակողները

2023 թվականի տարեկան հաղորդման մեջ բարձրաձայնված խնդիրներից էին նաև 2021 թվականին ուժի մեջ մտած «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի լրացումները, որոնց համաձայն՝

- Երևանի ավագանու ընտրություններին մասնակցող կուսակցությունն իրավունք ունի անվճար օգտվելու հանրային մուլտիպլեքսի մայրաքաղաքային սփռում ապահովող սլոթի օգտագործման լիցենզիա ունեցող հեռարձակողների եթերաժամից ոչ ավելի, քան 15 րոպե:
- Մարզկենտրոնների ավագանու ընտրություններին մասնակցող կուսակցությունն իրավունք ունի անվճար օգտվելու հանրային մուլտիպլեքսի տվյալ մարզում սփռում ապահովող սլոթի օգտագործման լիցենզիա ունեցող հեռարձակողի եթերաժամից ոչ ավելի, քան 20 րոպե:
- Ազգային ժողովի ընտրություններին մասնակցող կուսակցությունն իրավունք ունի անվճար օգտվելու Հայաստանի Հանրապետությունում հիմնադրված հանրային մուլտիպլեքսի սլոթի օգտագործման լիցենզիա ունեցող հեռարձակողների եթերաժամից ոչ ավելի, քան 25 րոպե:

Հանձնաժողովի գնահատմամբ՝ վերոնշյալ նորմերը խաթարում են լիցենզավորված տեսալսողական մեդիածառայություն մատուցող ընկերությունների բնականոն գործունեությունը և ոտնահարում նրանց իրավունքները: Այս ընկերությունների վրա օրենսդրությամբ արդեն իսկ դրված են բազմաթիվ պարտավորություններ, այդ թվում՝ պետական տուրքի և հեռարձակման վճարներ, ինչպես նաև մի շարք օրենսդրական պահանջների պահպանման պարտավորություններ: Օրեցօր կրճատվող գովազդային եկամուտների և դիտելիության նվազման պայմաններում այս ծանրաբեռնվածությունն ավելի բացասաբար է ազդում տեսալսողական մեդիայի զարգացման և բովանդակության որակի վրա:

Այս խնդիրն առավել ակնառու է դառնալու Ազգային ժողովի 2026 թվականի ընտրությունների ժամանակ, քանի որ նորմը տարածվելու է Հայաստանի Հանրապետությունում հիմնադրված հանրային մուլտիպլեքսում գործող բոլոր տեսալսողական մեդիածառայություն մատուցողների վրա՝ պարտավորեցնելով տրամադրել արդեն 25 րոպե տևողությամբ անվճար եթերաժամ: Այս համատեքստում հարկ է նշել նաև, որ նախընտրական քարոզչության զգալի ծավալը տեղափոխվել է համացանցային տիրույթ՝ էապես նվազեցնելով վճարովի եթերաժամից ստացվող հնարավոր եկամուտները: Միևնույն ժամանակ, ի տարբերություն կարգավորվող մեդիադաշտի, համացանցում քաղաքական ուժերը հաճախ անթաքույց կիրառում են ատելության խոսք, վիրավորանք և թշնամանքի ու խտրականության քարոզ, այդ թվում՝ քաղաքական հայացքների հիմքով: Սա ստեղծում է անհավասար պայմաններ և լրացուցիչ հարված հասցնում օրինապահ հեռարձակողների տնտեսական ու մասնագիտական շահերին:

2025 թվականին ուժի մեջ մտավ «Գովազդի մասին» օրենքի հերթական փոփոխությունը, որը ֆինանսական լրացուցիչ խնդիրներ առաջացրեց հեռարձակողների համար՝ կրճատելով գովազդային եկամուտները: Խոսքը էներգետիկ ըմպելիքների գովազդի սահմանափակումների մասին է: Թեև էներգետիկ ըմպելիքների օգտագործման ռիսկերն ու դրանց դեմ պայքարի առողջապահական անհրաժեշտությունն անհերքելի են, սակայն միայն մեդիայի մի հատվածի գովազդային սահմանափակումները սովորաբար չեն տալիս սպասված արդյունքը: Տեղեկատվական հոսքերն այլևս չեն սահմանափակվում միայն ավանդական հեռուստատեսությամբ կամ ռադիոյով, իսկ սոցիալական մեդիայում տարածվող թիրախային գովազդն ավելի ճկուն է և պետական մարմինների կողմից դժվար վերահսկելի: Այս իրավիճակում օրենքի փոփոխության արդյունավետությունը լավ հաշվարկված չէ:

Հարկ է նկատել նաև, որ գովազդի սահմանափակումը կարող է որոշակիորեն կանխել նոր սպառողների ներգրավումը, սակայն այն գրեթե չի ազդում արդեն ձևավորված սպառողական վարքագծի վրա: Հանձնաժողովի դիտարկմամբ՝ պայքարի առավել արդյունավետ միջոց կարող է լինել սպառողին հավաստի տեղեկատվության տրամադրումը էներգետիկ ըմպելիքների վնասակարության, ռիսկերի, առողջ և բնական այլընտրանքների վերաբերյալ, այդ թվում՝ հեռուստատեսության և ռադիոյի միջոցով:

Գովազդի արգելքի կամ սահմանափակման անարդյունավետությունը՝ վնասակար սովորությունների դեմ պայքարում, հաստատվում է նաև վիճակագրական տվյալներով: 2022 թվականին «Գովազդի մասին» օրենքում կատարված փոփոխություններով արգելվեց վիճակախաղերի, ինտերնետ շահումով խաղերի և խաղատների գովազդը: Թեպետ այս քայլը միտված էր խաղամոլության դեմ պայքարին, սակայն վիճակագրական տվյալները, ցավոք, փաստում են հակառակը՝ արձանագրելով ոլորտի աճ: Առանց միասնական մոտեցման՝ թե՛ վնասակար սովորությունների դեմ պայքարը, թե՛ ավանդական ու համացանցային մեդիայի անհավասարությունը էլ ավելի կխորանան՝ հանրային շահը մղելով երկրորդ պլան: Մեդիադաշտը ռիսկ ունի վերածվելու քաոսային տեղեկատվական միջավայրի, որտեղ դիտելիության ու շահույթի հետապնդումը, ինչպես նաև քաղաքական նպատակները հաճախ հակասում են հանրային շահին:

Հետևաբար, մեդիադաշտի առողջ զարգացումը հնարավոր է միայն այն դեպքում, երբ ազատ խոսքը զուգորդվում է պատասխանատվությամբ, իսկ կարգավորումները կիրառվում են համաչափ ու արդարացի՝ ոլորտի բոլոր դերակատարների նկատմամբ:

7.2

ԱՆՀԱՎԱՍԱՐ ՄՐՑԱԿՑԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Մրցակցային անհավասարության համատեքստում հարկ է ևս մեկ անգամ բարձրաձայնել ցանցային օպերատորների և նույնատեսակ ծառայություններ մատուցող անօրինական կամ չկարգավորվող ***հավելվածների*** խնդիրների մասին, որոնց թիվն օրեցօր ավելանում է տեխնոլոգիական զարգացմանը զուգընթաց:

Լիցենզավորված ցանցային օպերատորները գործում են օրենսդրության պահանջներին համապատասխան՝ վճարելով սահմանված հարկերն ու տուրքերը, պահպանելով անհրաժեշտ ընթացակարգերը և կնքելով տեսալսողական ծրագրերի վերահաղորդման պայմանագրեր, ինչը ենթադրում է զգալի ֆինանսական պարտավորություններ և իրավական պատասխանատվություն: Մինչդեռ չկարգավորվող, այդ թվում՝ օտարերկրյա հավելվածները, որոնք հանրությանը մատուցում են նույնատիպ ծառայություններ, գործում են պետական վերահսկողությունից դուրս և չեն կրում լիցենզավորված սուբյեկտների համար սահմանված որևէ պարտավորություն:

Արդյունքում ձևավորվում է մի իրավիճակ, երբ հավելվածները գործում են գին-քանակ հարաբերակցության տեսանկյունից առավել նպաստավոր պայմաններում՝ խախտելով հավասար մրցակցության սկզբունքը և էականորեն սահմանափակելով Հայաստանի Հանրապետությունում օրինական գործունեություն իրականացնող լիցենզավորված ցանցային օպերատորների մրցունակությունը: Նշված հանգամանքները փաստում են ոլորտի կարգավորման գործող մեխանիզմների վերանայման և օրենսդրական լրացումների անհրաժեշտությունը՝ նպատակ ունենալով ապահովելու հավասար մրցակցային դաշտ, իրավական կանխատեսելիություն և ոլորտի կայուն զարգացում:

Հանձնաժողովը նախորդ տարիներին ներկայացրել էր խնդիրներ, որոնց լուծմանն ուղղված գործնական քայլերն արդեն ուրվագծվում են.

- **հանրօգուտ բովանդակության ստեղծման խրախուսումը պետության կողմից**
  Այս նպատակով 2025 թվականին կառավարության որոշմամբ ստեղծվեց «Հանրօգուտ մեդիամիջավայր» հիմնադրամը, որը 2026 թվականի ընթացքում իրականացնելու է դրամաշնորհային ծրագիր հանրային մուլտիպլեքսում գործող հեռարձակողների համար (բացառությամբ Հանրային հեռարձակողի):

- **վարչական տույժերի անհամարժեքությունը**
  Ցանցային օպերատորներ գործունեությունը ոչ պատշաճ իրավապայմանագրային դաշտում գործելու և վարչական տույժերի անհամարժեքությունը վերացնելու է միտված արդեն իսկ շրջանառվող՝ «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքում փոփոխություններ կատարելու նախագիծը:

7.3

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂՆԵՐԻ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄ

«Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի համաձայն՝ Հանրային հեռարձակողները Հանձնաժողով են ներկայացնում տեղեկատվական, կրթական, մշակութային և ժամանցային բնույթի հաղորդումների բազմազանության ապահովման վիճակի վերաբերյալ եռամսյա հաշվետվություններ, որոնց ուսումնասիրության արդյունքում Հանձնաժողովը եզրակացնում է, որ հաշվետու ժամանակահատվածում Հանրային հեռարձակողները փաստացի ապահովել են հեռարձակվող հաղորդումների բազմազանությունը:

2025 թվականը Հանրային հեռարձակողի համար առանձնացավ արտադրական կարողությունների ընդլայնմամբ. ավարտին է մոտենում 8-րդ նոր հեռուստատաղավարի կառուցումը, ինչի շնորհիվ կմեծանան տեխնիկական հզորությունները և կբարձրանա հեռարձակման որակը: Շարունակաբար լուսաբանվում են քաղաքական և հասարակական նշանակության իրադարձությունները, պատրաստվում և հեռարձակվում են հայկական մշակույթին, լեզվին, կրթությանն ու պատմությանն առնչվող հաղորդումներ, որոնք կոմերցիոն հեռուստաընկերություններում հաճախ մղվում են երկրորդ պլան: Սպառում ունեն նաև Հանրային հեռարձակողի ժամանցային ու երիտասարդական հաղորդաշարերը:

Միևնույն ժամանակ, 2025 թվականի մշտադիտարկման արդյունքները վկայում են, որ Հանրային հեռարձակողի՝ «ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ԱԼԻՔ» և «ԱՌԱՋԻՆԻ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԱԼԻՔ» հեռուստածրագրերում երբեմն գերիշխում է Կառավարության օրակարգի լուսաբանումը, և բացակայում է այլընտրանքային կարծիքի ներկայացումը: Սակայն Հանձնաժողովը որևէ լիազորություն չունի (և չպետք է ունենա) միջամտելու Հեռարձակողների (այդ թվում՝ Հանրայինի) խմբագրական քաղաքականությանը:

2025 թվականին Հանրային հեռարձակողի՝ «ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ԱԼԻՔ», «ՇՈՂԱԿԱԹ» և «ԱՌԱՋԻՆԻ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԱԼԻՔ» ծրագրերի մշտադիտարկման արդյունքում արձանագրվել են տեսալսողական մեդիայի ոլորտը կարգավորող օրենսդրության մի շարք նորմերի խախտման հատկանիշներ, որոնց առնչությամբ Հանձնաժողովը դիմել է Հանրային հեռարձակողի խորհուրդ:

Խախտումների հատկանիշները վերաբերել են.

- Ծխելու տեսարաններ պարունակող տեսալսողական հաղորդումների մեկնարկին «Ծխելը վնասում է ձեր առողջությանը» նախազգուշական գրառման բացակայությանը (տեսանելի չափով և առնվազն հինգ վայրկյան տևողությամբ),

- «Կրկնություն» և «Արխիվ» պարտադիր նշումների բացակայությանը,

- հայերեն ենթագրով կամ ժեստերի լեզվով թարգմանությամբ՝ շաբաթվա ընթացքում առնվազն մեկ կրթական, առողջապահական, մշակութային և ժամանցային բնույթի հաղորդման հեռարձակման ապահովման թերի իրականացմանը,
- օրվա ընթացքում առնվազն մեկ մանկական հաղորդում հայերեն ժեստերի լեզվով թարգմանությամբ, ինչպես նաև լրատվական հաղորդում և ֆիլմ՝ ժեստերի լեզվով կամ հայերեն ենթագրով ապահովելու պահանջի թերի կատարմանը,
- անչափահասներին չվերաբերող ապրանքների գովազդում անչափահասների կերպարների տեսաձայնային կամ այլ ձևով օգտագործման արգելքի խախտմանը,
- թունդ ալկոհոլային խմիչքների (սպիրտի պարունակությունը՝ 20 և ավելի ծավալային միավոր) և էներգետիկ ըմպելիքների գովազդի՝ ժամը 06:00-ից մինչև 22:30-ն ընկած ժամանակահատվածում ցուցադրման արգելքի խախտմանը,
- Հանրային հեռարձակողի եթերում մեկ եթերային ժամվա ընթացքում գովազդի համար թույլատրված առավելագույն 5 րոպե տևողության գերազանցմանը:

7.4

ԷԹԻԿԱՅԻ ՆՈՐՄԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄ

> «Էթիկայի կանոնագիրը Հեռարձակողի կողմից միջազգային չափանիշների համաձայն ինքնուրույն կազմված փաստաթուղթն է սեփական էթիկական նորմերի վերաբերյալ» («Տեսալսողական մեդիայի մասին օրենք», 3-րդ հոդված, 1-ին մաս):

«Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի համաձայն՝ բոլոր լիցենզավորված Հեռարձակողները պարտավոր են ունենալ էթիկայի կանոնագիր, ինչը նաև լիցենզիայի պարտադիր պայմաններից է: Օրենքը հնարավորություն է տալիս Հեռարձակողներին ստեղծել ինքնակարգավորվող կազմակերպություններ կամ անդամակցել դրանց: Հայաստանի Հանրապետությունում գործող լիցենզավորված Հեռարձակողների մեծամասնությունն ընտրել է Հայաստանի զանգվածային լրատվության միջոցների էթիկայի Դիտորդ մարմնի՝ «Հայաստանի լրատվամիջոցների և լրագրողների էթիկական սկզբունքների կանոնագիրը», իսկ մի քանիսը նախընտրել են ներքին ինքնակարգավորման տարբերակը:

Հեռարձակողների ինքնակարգավորման մեխանիզմների ներդրումն ու կայացումը թեպետ նշանակալի քայլ է խոսքի ազատության պաշտպանության և լրագրողական էթիկայի զարգացման ճանապարհին, սակայն Հայաստանում այն դեռևս գտնվում է ինստիտուցիոնալացման փուլում: Դրա վերջնական կայացումը կախված է ոչ միայն օրենսդրությունից, այլև մի շարք այլ գործոններից: Մասնավորապես, խոչընդոտող հանգամանք է հանրային իրազեկվածության ցածր մակարդակը, ինչի արդյունքում հասարակությունը դեռևս քիչ է օգտվում ինքնակարգավորման մարմիններին դիմելու հնարավորությունից: Բացի այդ, ինքնակարգավորման մարմինների եզրակացությունները հաճախ չեն ստանում պատշաճ հանրային հնչեղություն, ինչը նվազեցնում է դրանց ազդեցությունը Հեռարձակողների վարքագծի վրա: Խնդրահարույց է նաև էթիկայի նորմերի խախտումների և դրանք զսպող մեխանիզմների համաչափությունը, քանի որ խախտում թույլ տված Հեռարձակողները հաճախ պատրաստ են իրենց եթերում հրապարակել համապատասխան եզրակացությունը և շարունակել խախտել էթիկայի նորմերը:

Հանձնաժողովը 2025 թվականին երեք անգամ դիմել է էթիկայի նորմերի հնարավոր խախտումների վերաբերյալ, որոնցից երկուսը՝ Հայաստանի զանգվածային լրատվության միջոցների էթիկայի Դիտորդ մարմին, իսկ մեկը՝ «ՇԱՐԿ» ՍՊԸ ներքին էթիկայի հանձնաժողով: ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմին Հանձնաժողովը դիմել է «ՖՐԻ ՆՅՈՒԶ» ՍՊԸ-ի կողմից հեռարձակվող «ՖՐԻ ՆՅՈՒԶ» տեսալսողական ծրագրի «Ազատ շփում Գնել Սարգսյանի հետ» հաղորդումների ժամանակ հնչեցված առանձին արտահայտությունների, իսկ «ՍԿԻԶԲ ՄԵԴԻԱ ԿԵՆՏՐՈՆ» ՍՊ ընկերության «ԱՌԱՁԻՆ ԹԻՎԻ» տեսալսողական ծրագրի՝ Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2025 թվականի մարտի 30-ի արտահերթ ընտրությունների նախընտրական քարոզչության առնչությամբ: Իսկ «ՇԱՐԿ» ՍՊԸ-ի էթիկայի հանձնաժողով դիմումն ուղարկվել է ընկերության կողմից հեռարձակվող «5-ՐԴ ԱԼԻՔ» տեսալսողական ծրագրի «Հայլուր»-ի թողարկումների ընթացքում ցուցադրված տեսանյութերի կապակցությամբ: Ստորև համառոտ ներկայացվում են համապատասխան եզրակացությունները:

«ՖՐԻ ՆՅՈՒԶ» ՍՊ ընկերության դեպքում ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմինն արձանագրել է, որ «Ազատ շփում Գնել Սարգսյանի հետ» հաղորդման խնդրո առարկա թողարկման մեջ հաղորդավարը կիրառել է հաղորդաշարի ժանրից բխող սուր քննադատական խոսք՝ անթաքույց կերպով ի ցույց դնելով Գյումրիում մարտի 30-ին նախատեսված ավագանու ընտրություններին մասնակցող թեկնածուներից մեկի հանդեպ իր դրական և, համապատասխանաբար, մյուս ուժերի ներկայացուցիչների հանդեպ իր բացասական (քննադատական) վերաբերմունքը: Հայաստանի լրատվամիջոցների և լրագրողների էթիկական սկզբունքների կանոնագիրը պարտավորեցնում է այն ստորագրած հեռարձակող լրատվամիջոցներին ձեռնպահ մնալ նախընտրական շրջանում որևէ կոնկրետ թեկնածուի կամ կուսակցության աջակցելուց:

Այսպիսով, «ՖՐԻ ՆՅՈՒԶ» ՍՊԸ-ն խախտել է Կանոնագրի նշված կետի պահանջը: Նույն կերպ խախտվել են նաև թեկնածուների նկատմամբ հանդուրժող լինելուն վերաբերող դրույթները:

Սկանավորիր QR-ը՝
Ծանոթանալու համար «ՖրիՆյուզ» տեսալսողական ծրագրի «Ազատ շփում Գնել Սարգսյանի հետ» 25.03.2025թ. թողարկման վերաբերյալ ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմնի եզրակացությանն ամբողջությամբ

Գյումրի համայնքի ավագանու ընտրությունների նախընտրական քարոզարշավի շրջանում «ՍԿԻԶԲ ՄԵԴԻԱ ԿԵՆՏՐՈՆ» ՍՊԸ–ի «ԱՌԱՋԻՆ ԹԻՎԻ» տեսալսողական ծրագրի լուսաբանումների վերաբերյալ Դիտորդ մարմինը եզրակացրել է, որ Գյումրի համայնքի ավագանու ընտրություններին վերաբերող նյութերի զգալի մասի վերլուծությունը ակներև ցույց է տալիս, որ լրատվամիջոցը նախընտրական քարոզչության շրջանում սատարել է «Եվրադաշինք» կուսակցությունների դաշինքին և նրա քաղաքապետի թեկնածու Լևոն Բարսեղյանին: Ըստ այդմ, ընտրություններին մասնակցող կոնկրետ թեկնածուին և կուսակցությունների դաշինքին աջակցելով և դրա մասին չհայտարարելով՝ խախտվել է Հայաստանի լրատվամիջոցների և լրագրողների էթիկական սկզբունքների կանոնագրի պահանջը: Բացի այդ, արձանագրվել է Կանոնագրի մեկ այլ դրույթի խախտում, այն է՝ քողարկված քաղաքական գովազդի հրապարակումը: Համաձայն այդ պահանջի՝ որևէ կուսակցության կամ թեկնածուի աջակցող խմբերի կողմից հրապարակման ներկայացված (վճարովի կամ անվճար) կամ նրանց պատվերով պատրաստված նյութերը պետք է հստակ առանձնացվեն այլ նյութերից, կամ դրանց վերաբերյալ պետք է արվի համապատասխան նշում:

Սկանավորիր QRը՝
ծանոթանալու համար Գյումրի համայնքի ավագանու նախընտրական քարոզարշավի շրջանում 1in.am լրատվական կայքի լուսաբանումների վերաբերյալ ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմնի եզրակացությանն ամբողջությամբ:

«ՇԱՐԿ» ՍՊԸ-ի ներքին էթիկայի հանձնաժողովը, ուսումնասիրելով Հանձնաժողովի դիտարկված խնդրահարույց ռեպորտաժների բովանդակությունը («5-ՐԴ ԱԼԻՔ» տեսալսողական ծրագրի «Հայլուր»-ի թողարկումներում հեռարձակված՝ Գեղարքունիքի մարզի Ծափաթաղ գյուղում տեղի ունեցած ողբերգության՝ 3-ամյա Տիգրանի մահվան վերաբերյալ տեսանյութերը), որոշում է կայացրել նախազգուշացնել արտադրական գործընթացում ներգրավված աշխատակիցներին անչափահասներին առնչվող հիմնախնդիրները լուսաբանելիս առավել նրբանկատություն ցուցաբերելու անհրաժեշտության մասին: Հեռուստաընկերության ամբողջ անձնակազմին խստորեն հանձնարարվել է հետայսու նման դեպքերում, անկախ հրատապությունից, պարտադիր դիմել Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակ կամ այլ իրավասու մարմիններ՝ մասնագիտական խորհրդատվություն ստանալու համար: Բացի այդ, 18:30-ի թողարկման խնդրահարույց կադրերի նկատմամբ կիրառվել է համապատասխան տեխնիկական մշակում, իսկ հարցազրույցի՝ երեխաների մասնակցությամբ ձայնային հատվածը մոնտաժվել է:

Սկանավորիր QR-ը՝
ծանոթանալու համար «5-ՐԴ ԱԼԻՔ»
տեսալսողական ծրագրի «Հայլուր»-ի
թողարկումների վերաբերյալ «ՇԱՐԿ» ՍՊ
ընկերության էթիկայի հանձնաժողովի
որոշմանն ամբողջությամբ:

7.5

ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼՈՒՍԱԲԱՆՄԱՆ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄ

Հանձնաժողովի դերը՝ որպես տեսալսողական մեդիայի ոլորտը կարգավորող անկախ սահմանադրական մարմնի, կարևորվում է նաև ընտրական գործընթացի թափանցիկությունը երաշխավորելու, ընտրություններին մասնակցող կուսակցությունների և կուսակցությունների դաշինքների համար ոչ խտրական պայմաններ ապահովելու գործում:

Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու արտահերթ ընտրություններ



Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու արտահերթ ընտրությունների նախընտրական քարոզչության ժամանակահատված էր սահմանվել 2025 թվականի մարտի 15-ից մինչև մարտի 28-ը՝ ժամը 24:00-ն: Նախընտրական քարոզչության համար ընտրական օրենսդրությամբ սահմանված՝ տեսալսողական մեդիայի ոլորտը կարգավորող բոլոր միջոցառումների կազմակերպման նախապատրաստական աշխատանքները Հանձնաժողովը կատարել է մինչև նախընտրական քարոզչության մեկնարկը, ինչն էլ ապահովել է բոլոր կուսակցությունների և կուսակցությունների դաշինքների համար հավասար պայմաններ ու հնարավորություններ նախընտրական քարոզչության մեկնարկի առաջին իսկ օրվանից:

Մասնավորապես, Հանձնաժողովը 2025 թվականի փետրվարի 21-ին ընդունել է «Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2025 թվականի մարտի 30-ին կայանալիք արտահերթ ընտրությունների նախընտրական քարոզչության ժամանակահատվածում հանրային ռադիոյի և հանրային հեռուստատեսության վճարովի եթերաժամի մեկ րոպեի գինը սահմանելու մասին» թիվ 13-Ա որոշումը, որի համաձայն՝ նախընտրական քարոզչության ժամանակահատվածում վճարովի եթերաժամի մեկ րոպեի գինը «Հանրային հեռուստաընկերության Առաջին ալիք» տեսալսողական ծրագրի համար սահմանվել է 48 000 ՀՀ դրամ (ներառյալ՝ ԱԱՀ-ն), «Առաջինի լրատվական ալիք» ծրագրի համար՝ 18 000 դրամ (ներառյալ՝ ԱԱՀ-ն), իսկ Հանրային ռադիոյի համար՝ 1 700 դրամ (ներառյալ՝ ԱԱՀ-ն): :

«Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի պահանջների համաձայն՝ տեսալսողական մեդիածառայություն մատուցողները հրապարակել են վճարովի եթերաժամի մեկ րոպեի արժեքը: Սահմանված կարգի համաձայն՝ այն չի կարող գերազանցել ընտրությունների նշանակմանը նախորդող վերջին վեց ամսվա առևտրային գովազդի միջին արժեքը և ենթակա չէ փոփոխման մինչև նախընտրական քարոզչության ավարտը: Վճարովի եթերաժամ տրամադրող մեդիածառայությունների նշված տեղեկատվությունը հրապարակվել է մինչև 2025 թվականի փետրվարի 25-ը:

Սկանավորիր QR-ը՝
ծանոթանալու համար Գյումրի համայնքի
ավագանու նախընտրական քարոզչությանը
մասնակցած բոլոր հեռարձակողների
կողմից տրամադրված վճարովի
եթերաժամերի արժեքների մասին
տեղեկատվությանը:

Վճարովի եթերաժամ տրամադրելու վերաբերյալ լիցենզավորված ընկերություններից տեղեկատվություն տարածել են հետևյալ ընկերությունները՝

- Հանրապետական սփռում ունեցող երկու տեսալսողական մեդիածառայություն մատուցող ընկերություններ՝ իրենց «ԿԵՆՏՐՈՆ» և «ՇԱՆԹ» տեսալսողական ծրագրերով.
- Մայրաքաղաքային սփռում ունեցող երեք տեսալսողական մեդիածառայություն մատուցող ընկերություններ՝ իրենց կողմից «5-ՐԴ ԱԼԻՔ», «ՖՐԻ ՆՅՈՒՋ» և «21 ԹԻՎԻ» տեսալսողական ծրագրերով.
- Մարզային սփռում ունեցող մեկ տեսալսողական մեդիածառայություն մատուցող ընկերություն՝ իր կողմից հեռարձակվող «ՑԱՅԳ» տեսալսողական ծրագրով.
- Հանրապետական սփռում ունեցող երկու լսողական մեդիածառայություն մատուցող ընկերություններ՝ իրենց «ՌԱԴԻՈ ՋԱՆ» և «ՌԱԴԻՈ ՀԱՅ» լսողական ծրագրերով.
- Մարզային սփռում ունեցող երկու լսողական մեդիածառայություն մատուցող ընկերություններ՝ իրենց «ՌԱԴԻՈ ՎԱՆ ԳՅՈՒՄՐԻ» և «ՇԱՆԹ» լսողական ծրագրով:

Միայն հեղինակագործված ընկերություններից վճարովի եթերաժամ տրամադրելու վերաբերյալ տեղեկատվություն տարածել էին երեք տեսալսողական մեդիածառայություն մատուցող ընկերություններ՝ իրենց «ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՀԵՌՈՒՏԱԼԻՔ», «ԵՐԿԻՐ ՄԵԴԻԱ» և «ՇԱՆԹ ԳՅՈՒՄՐԻ» տեսալսողական ծրագրերով:

2025 թվականի մարտի 15-28-ը ներառյալ, ինչպես նաև քվեարկության և դրան նախորդող օրը Հանձնաժողովն իրականացրել է Հայաստանի Հանրապետության տարածքում գործող տեսալսողական մեդիածառայություն մատուցողների՝ ՀՀ ընտրական օրենսդրության և «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի պահանջներին համապատասխանության վերահսկողություն:

Հանձնաժողովը տեսալսողական մեդիածառայություն մատուցողների հեռարձակած տեսալսողական ծրագրերի ընտրական օրենսդրության համապատասխանության մշտադիտարկումն իրականացրել է՝ հիմք ընդունելով հետևյալը.

1. տեսալսողական ծրագրերի և դրանց տեսագրությունների (ձայնագրությունների) ուղղակի դիտարկման արդյունքները.

2. տեսալսողական հաղորդումների հաշվառման էլեկտրոնային մատյանում մուտքագրված տվյալները.

3. տեսալսողական մեդիածառայություններ մատուցողների Հանձնաժողով ներկայացված տեղեկատվությունը.

4. ընտրություններին մասնակցող կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների և (կամ) նրանց ներկայացուցիչների Հանձնաժողով ներկայացրած տեղեկատվությունը.

5. պետական մարմինների, հասարակական և միջազգային կազմակերպությունների, քաղաքացիների Հանձնաժողով պաշտոնապես ներկայացրած տեղեկատվությունը.

6. Հեռարձակողների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսդրության խախտումների մասին զանգվածային լրատվամիջոցների հրապարակումները:

Հանձնաժողովն ուղղակի դիտարկումն իրականացրել է պատահական ընտրանքի և հավասարաչափ բաշխման սկզբունքով:

Հանձնաժողովը 2025 թվականի մարտի 24-ին ընդունել է «Տեսալսողական մեդիածառայություն մատուցողների կողմից Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2025 թվականի մարտի 30-ի արտահերթ ընտրությունների նախընտրական քարոզչության սահմանված կարգի պահպանման վերաբերյալ իրականացված մշտադիտարկման արդյունքները և եզրակացությունը հրապարակելու մասին» թիվ 24–Ա որոշումը, որը ներառել է 2025 թվականի մարտի 15-20-ն ընկած ժամանակահատվածի մշտադիտարկման արդյունքները: Նշված տեղեկատվությունը Կենտրոնական ընտրական հանձնաժողով է ներկայացվել նախընտրական քարոզչությունն սկսվելուց հետո 10-րդ օրը՝ 2025 թվականի մարտի 24-ին:

Արտահերթ ընտրությունների նախընտրական քարոզչության կարճաժամկետությամբ պայմանավորված՝ Հանձնաժողովը 2025 թվականի ապրիլի 4-ին ընդունել է «Տեսալսողական մեդիածառայություն մատուցողների կողմից Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2025 թվականի մարտի 30-ի արտահերթ ընտրությունների նախընտրական քարոզչության սահմանված կարգի պահպանման վերաբերյալ իրականացված մշտադիտարկման արդյունքները և եզրակացությունը հրապարակելու մասին» թիվ 34–Ա որոշումը, որը ներառել է 2025 թվականի մարտի 15-28-ն ընկած ժամանակահատվածի մշտադիտարկման արդյունքները և եզրակացությունը: Նշված տեղեկատվությունը Կենտրոնական ընտրական հանձնաժողով է ներկայացվել 2025 թվականի ապրիլի 4-ին:

Սկանավորիր QR՝
ծանոթանալու համար մշտադիտարկման
եզրակացությանը և որոշման հավելված
2-ում ներկայացված եթերաժամանակի
բաշխվածության թվային ցուցանիշներին:

«Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 138-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է՝ մարզկենտրոնների ավագանու ընտրություններին մասնակցող կուսակցությունն իրավունք ունի անվճար օգտվելու Հայաստանի Հանրապետությունում հիմնադրված հանրային մուլտիպլեքսի՝ տվյալ մարզում սփռում ապահովող սլոթի օգտագործման լիցենզիա ունեցող հեռարձակողի եթերաժամից ոչ ավելի, քան 20 րոպե: Այս Ընտրությունների դեպքում նշված նորմը վերաբերել է Շիրակի մարզի սփռման սլոթի օգտագործման լիցենզիա ստացած «ՑԱՅԳ» ՍՊ ընկերությանը: Ընձեռած անվճար եթերաժամից կուսակցությունները և կուսակցությունների դաշինքները օգտվել են մասնակի, ինչին կարելի է ծանոթանալ վերոնշյալ որոշման հավելված 2-ում:

Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու արտահերթ ընտրությունների հետ կապված Հանձնաժողովը հարուցել է երկու վարչական վարույթ՝ «ՍԿԻԶԲ ՄԵԴԻԱ ԿԵՆՏՐՈՆ» ՍՊ ընկերության «ԱՌԱՋԻՆ ԹԻՎԻ» տեսալսողական ծրագրի մասով: Մեկ վարչական վարույթը հարուցվել է «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 57-րդ հոդվածի 27-րդ մասի խախտման հատկանիշներով, այն է՝ կարգավորող պետական մարմնի որոշմամբ կամ նախագահի գրությամբ կամ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր կամ այլ տեղեկատվություն սահմանված ժամկետում չներկայացնելը կամ ոչ հավաստի կամ ոչ ամբողջական տեղեկություններ ներկայացնելը: Մյուս վարչական վարույթը վերաբերել է «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի խախտման հատկանիշներին, այն է՝ «Ընտրությունների (հանրաքվեների) նախընտրական (հանրաքվեի դրված հարցի վերաբերյալ) քարոզչության իրականացման համար օրենքով սահմանված ժամանակահատվածում՝ 1) տեսալսողական հաղորդումները հեռարձակվում են ընտրությունների (հանրաքվեների) մասին օրենսդրությանը համապատասխան»:

Ամփոփելով վերոնշյալը՝ անհրաժեշտ ենք գտնում ևս մեկ անգամ բարձրաձայնել, որ «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքով սահմանված այն դրույթները, որոնց համաձայն սլոթի օգտագործման լիցենզիա ունեցող հեռարձակողները պարտավոր են անվճար եթերաժամ տրամադրել կուսակցություններին և կուսակցությունների դաշինքներին, ոտնահարում են լիցենզավորված տեսալսողական մեդիածառայություն մատուցող ընկերությունների իրավունքները:

Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2025 թվականի մարտի 30-ին կայացած արտահերթ ընտրությունների ժամանակ Շիրակի մարզում գործող սլոթի օգտագործման լիցենզիա ունեցող հեռարձակողները պետք է կուսակցություններին և կուսակցությունների դաշինքներին տրամադրեին 20 րոպե անվճար եթերաժամ: Երևանի ավագանու 2023 թվականի ընտրությունների ժամանակ, մեկ այլ նորմի համաձայն, մայրաքաղաքային սփռում ապահովող սլոթի օգտագործման լիցենզիա ունեցող տեսալսողական մեդիածառայություն մատուցողները պետք է 15 րոպե անվճար եթերաժամ տրամադրեին կուսակցություններին և կուսակցությունների դաշինքներին: Միաժամանակ նշված խնդիրն ավելի ակնառու է դառնալու Ազգային ժողովի 2026 թվականի ընտրությունների ժամանակ, քանի որ նորմը վերաբերելու է Հայաստանի Հանրապետությունում հիմնադրված հանրային մուլտիպլեքսի սլոթի օգտագործման լիցենզիա ունեցող բոլոր տեսալսողական մեդիածառայություն մատուցողներին՝ արդեն 25 րոպե տևողությամբ անվճար եթերաժամ տրամադրելու պարտավորությամբ:

Այս համատեքստում հարկ է անդրադառնալ նաև այն հանգամանքին, որ նախընտրական քարոզչությունը զգալիորեն տեղափոխվել է համացանցային տիրույթ՝ նվազեցնելով վճարովի եթերաժամ տրամադրելուց տեսալսողական մեդիածառայություն մատուցողների հնարավոր եկամուտները: Միևնույն ժամանակ համացանցում ընտրություններին մասնակից քաղաքական ուժերն անթաքույց կերպով կիրառում են ատելության խոսք, վիրավորանք, տարածում թշնամանք և դրսևորում խտրականություն, այդ թվում՝ քաղաքական հայացքներով պայմանավորված:

Միաժամանակ հարկ է արձանագրել՝ թեպետ Ընտրական օրենսգրքով Կենտրոնական ընտրական հանձնաժողովի ներկայացրած սոցիալական գովազդների հեռարձակման պահանջը դրված է միայն Հանրային հեռարձակողի վրա, սակայն մասնավոր տեսալսողական մեդիածառայություն մատուցողները, նպաստելով իրազեկված ընտրություն կատարելու համար անհրաժեշտ տեղեկատվության ապահովմանը, իրենց ծրագրերում ևս ներկայացրել են Կենտրոնական ընտրական հանձնաժողովի սոցիալական գովազդները:

Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի ավագանու ընտրություններ



Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի ավագանու ընտրությունների անցկացման օր սահմանվել է 2025 թվականի նոյեմբերի 16-ը: Վաղարշապատ համայնքը մարզկենտրոն ընդգրկող համայնք չէ, ուստի Հանձնաժողովին վերապահված մի շարք գործառույթներ, որոնք նախատեսված են մարզկենտրոն ընդգրկող համայնքների ավագանու ընտրությունների ժամանակ, այս դեպքում նախատեսված չեն: Սակայն, Հանձնաժողովն իր վերահսկողական գործառույթներն իրականացնելիս արձանագրել է, որ նախընտրական քարոզչության ժամանակահատվածում «ՇԱՆԹ» ՍՊ ընկերության կողմից հեռարձակվող «ՇԱՆԹ» տեսալսողական ծրագրով հեռարձակվում են Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի ավագանու ընտրություններին մասնակցող կուսակցության նախընտրական քարոզչության տեսանյութեր, մինչդեռ «ՇԱՆԹ» ՍՊԸ-ն օրենքով սահմանված ժամանակահատվածում չէր հրապարակել իր եթերաժամի գինը և հեռարձակման պայմանագրի էական այլ պայմաններ: Նշվածը պարունակել է «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 20–րդ հոդվածի 6–րդ մասի 2-րդ պարբերության և «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 11–րդ հոդվածի 1–ին մասի 2–րդ կետի խախտման հատկանիշներ, այն է՝ «թեկնածուներին, ընտրություններին մասնակցող կուսակցություններին (կուսակցությունների դաշինքներին) նախընտրական քարոզչություն իրականացնելու համար եթերաժամ տրամադրող մասնավոր հիմունքներով հեռարձակում իրականացնող տեսալսողական մեդիածառայություն մատուցողները Ազգային ժողովի ընտրություններ նշանակելու մասին Հանրապետության նախագահի հրամանագիրն ուժի մեջ մտնելուց ոչ ուշ, քան 5 օր հետո, իսկ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ ոչ ուշ, քան սույն օրենսգրքով սահմանված թեկնածուների առաջադրման, ընտրություններին մասնակցող կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) ընտրական ցուցակների գրանցման ժամկետի հաշվարկի սկզբից 5 օր առաջ իրենց եթերով հրապարակում են իրենց վճարովի եթերաժամի մեկ րոպեի արժեքը, որը չի

կարող գերազանցել ընտրությունների նշանակմանը նախորդող վերջին վեց ամսվա համար առևտրային գովազդի միջին արժեքը և որը մինչև նախընտրական քարոզչության ավարտը չի կարող փոփոխվել», և «Հեռարձակողները պարտավոր են հավասար պայմաններ ապահովել թեկնածուների և մասնակցող կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների (հանրաքվեի քարոզչության կողմերի) համար՝ հրապարակավ հայտնելով վճարովի տեսալսողական հաղորդումների իրենց եթերաժամի գինը և հեռարձակման պայմանագրի էական այլ պայմաններ»: Վերոնշյալի առնչությամբ հարուցվել է վարչական վարույթ և կիրառվել է վարչական տույժ:

8

ՏԵՍԱԼՍՈՂԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԹԵՄԱՏԻԿ ՈՒՂՂՎԱԾՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԵԹԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

«Թեմատիկ ուղղվածությունը տեսալսողական հաղորդումների ուղղվածությունն է ըստ բովանդակային առանձնահատկությունների» («Տեսալսողական մեդիայի մասին օրենք», 3-րդ հոդված, 1-ին մաս, 7-րդ կետ):

Հանձնաժողովը մշտապես մշտադիտարկում և վերլուծում է լիցենզիա ստացած տեսալսողական մեդիածառայություն մատուցողների կողմից հեռարձակվող տեսալսողական ծրագրերի եթերի կառուցվածքն ու ներկայացվող մանկական, կրթական, մշակութային և մարզական թեմատիկ ուղղվածության տեսալսողական հաղորդումները, որոնք պետք է կազմեն շաբաթական եթերաժամի առնվազն 20 տոկոսը:

Ստորև ներկայացնում ենք 2025 թվականի տեսալսողական հաղորդումների հաշվառման էլեկտրոնային մատյանի տվյալների հիման վրա կատարած Հանձնաժողովի վերլուծության արդյունքները, որոնք վերաբերում են տեսալսողական մեդիածառայություն մատուցող լիցենզավորված ընկերությունների տեսալսողական ծրագրերին:

Գծապատկեր 8. Հանրապետական և մայրաքաղաքային սփոման տեսալսողական ծրագրերի եթերի կառուցվածքը



Գծապատկեր 9. Մարզային սփոման տեսալսողական ծրագրերի եթերի կառուցվածք



Գծապատկեր 10. Հանրապետական և մայրաքաղաքային սփոման տեսալսողական ծրագրերի հանրօգուտ հաղորդումներ



Գծապատկեր 11. Մարզային սփոման տեսալսողական ծրագրերի հանրօգուտ հաղորդումները



Գծապատկեր 12. Հանրապետական և մայրաքաղաքային սփոման տեսալսողական ծրագրերի՝2021-2025 թվականների եթերում հայերեն հաղորդումների համեմատական պատկերը



Գծապատկեր 13. Մարզային սփոման տեսալսողական ծրագրերի եթերում հայերեն հաղորդումների՝ 2021-2025 թվականների համեմատական պատկերը



Գծապատկեր 14. Լսողական մեդիածառայություն մատուցողների լսողական ծրագրերի եթերի կառուցվածքը.հանրապետական և մայրաքաղաքային ծածկույթ

Գծապատկեր 15. Լսողական մեդիածառայություն մատուցողների լսողական ծրագրերի եթերի կառուցվածքը.մարզային ծածկույթ



Համադրելով վերընշված տվյալները նախորդ չորս տարիների տվյալների հետ, Հանձնաժողովը արձանագրում է, որ 2025 թվականին լիցենզավորված տեսալսողական մեդիածառայություններ մատուցողների եթերի կառուցվածքում էական փոփոխություններ չեն եղել:

9

ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹՆԵՐ

Հանձնաժողովը 2025 թվականին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքով սահմանված լիազորությունների իրականացման արդյունքում հարուցել է 84 վարչական վարույթ. 74-ը՝ սեփական նախաձեռնությամբ, իսկ 10-ը՝ դիմումի հիման վրա:

Գծապատկեր16. Կարգավորող պետական մարմնի կողմից, վերահսկողության ոլորտում գործող ընկերությունների նկատմամբ հարուցված վարչական վարույթներ.



Հանձնաժողովը, տեսալսողական մեդիայի բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջների խախտման դեպքեր հայտնաբերելու արդյունքում հարուցված 84 վարչական վարույթների արդյունքում կայացրել է 91 որոշում և կիրառել է հետևյալ պատասխանատվության միջոցները.

Գծապատկեր17. Հարուցված վարչական վարույթների արդյունքներ.

- **68** վարչական վարույթի արդյունքում Հանձնաժողովը կիրառվել է 70 վարչական տույժ՝ **տուգանք** (Օրենքի 57-րդ հոդվածով),
- **4** վարչական վարույթի արդյունքում կիրառել է նախատեսված վարչական տույժ՝ գրավոր նախազգուշացում (Օրենքի 56-րդ հոդվածով),
- **5** վարչական վարույթի արդյունքում կիրառել է վարչական տույժ՝ լիցենզիայի **գործողության կասեցում**, որից 4-ը՝ Օրենքի 58-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի հիմքով, իսկ 1-ը՝ 58-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով,
- 3 ընկերության լիցենզիայի կասեցումից հետո խախտումը չվերացնելու հետևանքով կիրառվել է վարչական տույժ՝ լիցենզիայի գործողության դադարեցում, Օրենքի 58-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետով,

Հանձնաժողովը, տեսալսողական մեդիայի բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջների խախտման դեպքեր հայտնաբերելու արդյունքում հարուցված 84 վարչական վարույթների արդյունքում կայացրել է 91 որոշում և կիրառել է հետևյալ պատասխանատվության միջոցները.

Հանձնաժողովը 9 վարչական վարույթի արդյունքում կայացրել է վարույթը կարճելու մասին որոշում:

2025 թվականի ընթացքում 7 ընկերությունների նկատմամբ կիրառվել է **Օրենքի 57-րդ հոդվածի 31-րդ մասով** սահմանված վարչական տույժ: Այս վարչական տույժը կիրառվել է այն հիմքով, որ նույն ընկերությունը մեկ տարվա ընթացքում կրկին կատարել է նույն խախտումը, ինչի արդյունքում տուգանքը նշանակվել է սկզբնական տույժի եռապատիկի չափով:

Նշված ընկերություններն են.

- 1. «:ԲՈՒՆ» ԳԻՏԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԸ՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով սահմանված իրավախախտումը մեկ տարվա ընթացքում կրկնելը,
- 2. «ՁԱԳԵՁՈՐ» ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ ՍՊ ընկերությունը՝ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի և 6-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով սահմանված իրավախախտումը մեկ տարվա ընթացքում կրկնելը,
- 3. «ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՀԵՌՈՒՍՏԱԼԻՔ» ՍՊ ընկերությունը՝ Օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ մասով և Հանձնաժողովի 28.06.2024թ. թիվ 73-Ն որոշմամբ հաստատված չափորոշիչների 4-րդ կետով սահմանված իրավախախտումը մեկ տարվա ընթացքում կրկնելը,
- 4. «ՎԱԼԻ ԳՐՈՒՊ» ՍՊ ընկերությունը՝ Օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված իրավախախտումը մեկ տարվա ընթացքում կրկնելը,
- 5. «ՄԱՅ ՆԵՏ» ՍՊ ընկերությունը՝ Օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված իրավախախտումը մեկ տարվա ընթացքում կրկնելը,
- 6. «ԹԻՎԻՆԵՏ» ՍՊ ընկերությունը՝ Օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված իրավախախտումը մեկ տարվա ընթացքում կրկնելը,
- 7. «ՖԱՍԹ ՄԵԴԻԱ» ՍՊ ընկերությունը՝ Օրենքի 8-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված իրավախախտումը մեկ տարվա ընթացքում կրկնելը:

Վարչական վարույթների հարուցման հիմք են հանդիսացել հետևյալ իրավախախտումները.

- 1. Ոչ սեփական տեսալսողական հաղորդումների հեռարձակումն առանց հեռարձակման իրավունքը հավաստող փաստաթղթերի առկայության,
- 2. Ցանցային օպերատորի լիցենզիա ստացած անձի տեսալսողական ծրագրերը առանց համապատասխան իրավական հիմքերի պայմանագրերի վերահաղորդելը,
- 3. Գովազդը կարգավորող օրենսդրության դրույթների խախտումը,
- 4. Կարգավորող պետական մարմին նախորդող տարվա հասույթի գոյացման բացվածքի և չափի վերաբերյալ տեղեկություն չներկայացնելը,
- 5. Ծխելու տեսարաններ պարունակող տեսալսողական հաղորդման մեկնարկին տեսանելի չափով, հինգ վայրկյան տևողությամբ «Ծխելը վնասում է ձեր առողջությանը» գրառման բացակայությունը,
- 6. Պետության հայտարարած սգո և հիշատակի օրերին գովազդի և զվարճալի հաղորդումների հեռարձակման արգելքի պահանջի խախտումը,
- 7. Օտար լեզուներով հեռարձակվող տեսալսողական հաղորդումների, ֆիլմերի հեռարձակումն՝ առանց հայերեն ընկալման որևէ միջոցով (կրկնօրինակմամբ, հնչյունավորմամբ և/կամ ենթագրով ուղեկցման,
- 8. Էկրանային ցուցադրման ժամանակ Հեռարձակողների անվանումներն օտար լեզուներով օգտագործելը առանց հայերեն անընդհատ տառադարձության,
- 9. Էրոտիկ բնույթի տեսալսողական հաղորդումների և սարսափ ու ակնհայտ բռնություն պարունակող ֆիլմերի, ինչպես նաև անչափահասների առողջության, մտավոր և ֆիզիկական զարգացման, դաստիարակության վրա հնարավոր բացասական ազդեցություն ունեցող հաղորդումների՝ Օրենքով արգելված ժամին հեռարձակումը,
- 10. Լիցենզիա ստացած Հեռարձակողների ծրագրերում մանկական, կրթական, մշակութային և մարզական թեմատիկ ուղղվածության տեսալսողական հաղորդումների շաբաթական եթերաժամի առնվազն 20 տոկոսը կազմելու դրույթը խախտելը,
- 11. Տեսալսողական հաղորդումների հաշվառման էլեկտրոնային մատյանի վարման սահմանված կարգը խախտելը,
- 12. Մանկական կամ լրատվական տեսալսողական հաղորդումներ և ֆիլմեր հեռարձակելու դեպքում, ծրագրերում լսողության խնդիրներ ունեցող սպառողների համար տեղեկատվության մատչելիությունն ապահովելու դրույթը խախտելը,
- 13. Առանց որև է հիմնավոր պատճառի 24 ժամ շարունակ տեսալսողական հաղորդումների հեռարձակումը չապահովելը,
- 14. Տեսալսողական հաղորդումներում հավաստի տեղեկատվության ապահովման դրույթի խախտելը,

■ 15. Հանրային հեռարձակողին բացառիկ իրավունքով պատկանող Հայաստանի Հանրապետության մարզական հավաքականների մասնակցությամբ կարևոր իրադարձությունների ամբողջական տարածման դրույթի խախտելը,

■ 16. Ընտրությունների (հանրաքվեների) նախընտրական (հանրաքվեի դրված հարցի վերաբերյալ) քարոզչության իրականացման համար օրենքով սահմանված ժամանակահատվածում՝ լրատվական հաղորդումներում թեկնածուների, կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների նախընտրական (հանրաքվեի դրված հարցի վերաբերյալ) քարոզչության վերաբերյալ անկողմնակալ և գնահատականներից զերծ տեղեկատվություն ներկայացնելու դրույթը խախտելը:

2025 թվականին հարուցված վարչական վարույթների վերաբերյալ ամփոփ Տեղեկատվությունը՝ (տե՛ս 92-րդ էջի հավելված N 4-ում):

Գծապատկեր 18. Հարուցված վարչական վարույթների 2021-2025 թվականների համեմատական պատկերը



Վարչական իրավախախտումների արձանագրված աճը պայմանավորված է ինչպես օրենսդրական պահանջների խախտումների հաճախականությամբ, այնպես էլ Հանձնաժողովի վերահսկողական գործառույթների հետևողական և համակարգային իրականացման արդյունքներով:

Տվյալ տարում՝ տեսալսողական մեդիայի ոլորտում արձանագրված իրավախախտումներ.

■ 1. 2025 թվականին առավել հաճախ արձանագրվել են **Օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասով** նախատեսված պահանջի խախտման դեպքերը՝ ընդհանուր 25, այն է՝ առանց համապատասխան իրավական հիմքերի՝ պայմանագրերի տեսալսողական ծրագրեր վերահաղորդելը:

■ 2. Երկրորդ ամենաշատ արձանագրվածը՝ **Օրենքի 19-րդ հոդվածի 3-րդ մասի** պահանջի խախտման դեպքերն են՝ընդհանուր **18**, այն է՝ մինչև ապրիլի 1-ը նախորդ տարվա հասույթի ներկայացման պահանջը չկատարելը:
Չնայած Օրենքի պարտադիր պահանջին, այնուամենայնիվ Հանձնաժողովը նախապես տեղեկացնում՝ շրջաբերական նամակ է հղում Հեռարձակողներին և ցանցային օպերատորներին, Օրենքի դրույթների պահանջը կատարելու վերաբերյալ, սակայն 2025 թվականին սույն իրավախախտման դեպքերը կրկին բազմաթիվ են եղել:

■ 3. Հանձնաժողովը մշտապես վերահսկողության կենտրոնում է պահում Հեռարձակողների ծրագրերում երեխաների կրթական զարգացմանն ուղղված, ինչպես նաև եթերում մշակութային, մարզական, մանկական հաղորդումների առկայությանը Օրենքի դրույթներին համապատասխան: 2025 թվականի ընթացքում արձանագրվել է **Օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասով** նախատեսված պահանջի ընդհանուր **2 խախտում,** այն է՝ Հեռարձակողների ծրագրերում մանկական, կրթական, մշակութային և մարզական թեմատիկ ուղղվածության տեսալսողական հաղորդումների շաբաթական եթերաժամի չապահովմանը:

■ 4. Հանձնաժողովը կարևորում է **Օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասի** դրույթի խիստ պահպանումը, այն է՝ Հեռարձակողները, որոնք եթեր են հեռարձակում նաև մանկական կամ լրատվական տեսալսողական հաղորդումներ և ֆիլմեր, պարտավոր են իրենց ծրագրերում ապահովել լսողության խնդիրներ ունեցող սպառողների համար տեղեկատվության մատչելիությունը՝ օրվա ընթացքում՝ համապատասխանաբար առնվազն մեկական մանկական հաղորդում ներկայացնելով հայերեն ժեստերի լեզվով թարգմանությամբ, և լրատվական տեսալսողական հաղորդում և ֆիլմ՝ ներկայացնելով ժեստերի լեզվով թարգմանությամբ կամ հայերեն ենթագրով՝ կարգավորող պետական մարմնի սահմանած ժամերին և տեխնիկական նվազագույն պահանջներին համապատասխան: Նշված ժամանակահատվածում արձանագրվել է **2 իրավախախտման դեպք:**

■ 5. Սույն համատեքստում նշենք նաև, որ Հանձնաժողովի վերահսկողական գործառույթների կարևոր ուղղություններից է Հայաստանի Հանրապետությունում սպառողների շահերի և առավել ևս երեխաների իրավունքների պաշտպանությունը՝ եթերում հայհոյախոսության և գրեհկաբանության բացառումը: **Օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է՝** «(...) անչափահասների առողջության, մտավոր և ֆիզիկական զարգացման, դաստիարակության վրա հնարավոր բացասական ազդեցություն ունեցող հաղորդումները կարող են եթեր հեռարձակվել ժամը 24:00–06:00–ն: Նման հաղորդումների որոշման չափորոշիչները սահմանված են **Հանձնաժողովի 2024 թվականի հունիսի 28-ի թիվ 73-Ն** որոշմամբ: Տվյալ ժամանակահատվածում **2 նման իրավախախտում** է արձանագրվել և կիրառվել է համապատասխան պատասխանատվության միջոց:

Այսպիսով, Հանձնաժողովն արձանագրում է, որ յուրաքանչյուր երեխայի իրավունքները և լավագույն շահի պաշտպանությունը գերադասվում է ցանկացած վարկանիշային ֆիլմի կամ տեսալսողական այլ հաղորդման ցուցադրությունից, որը հավելյալ դիտողականություն և վարկանիշ կբերի տեսալսողական մեդիա ծառայություն մատուցողին:

■ 6. Հանձնաժողովը մշտապես վերահսկում է նաև տեսալսողական մեդիա դաշտում Հայաստանի Հանրապետության պետական լեզվի՝ հայերենի պահպանմանը, **Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով** սահմանված դրույթների պահանջների շրջանակում, որով նախատեսված է, որ տեսալսողական տեղեկատվության լեզուն հայերենն է և օտար լեզուներով հեռարձակվող տեսալսողական տեղեկատվությունը պետք է ուղեկցվի հայերեն ընկալման միջոցներով (կրկնօրինակումով, ենթագրով): **Նման 2 դեպք է արձանագրվել քննարկվող ժամանակահատվածում:**

■ 7. **Օրենքի 9-րդ հոդվածի 4-րդ մասը** սահմանում է՝ «Պետության հայտարարած սգո և հիշատակի օրերին գովազդի և զվարճալի հաղորդումների հեռարձակումը Հեռարձակողների կողմից արգելվում է, իսկ «Հայաստանի Հանրապետության տոների և հիշատակի օրերի մասին» օրենքով սահմանված են այդ օրերը: Հանձնաժողովի կողմից սույն իրավախախտման **4 դեպք է արձանագրվել 2025 թվականին:**

Հանձնաժողովը սույն խախտումն արձանագրելիս կարևորում է նաև այն հանգամանքը, որ պետության կողմից օրենքներով սահմանված սգո և հիշատակի օրերին գովազդի և զվարճալի հաղորդումների հեռարձակումը կապված է նաև հանրության շահի հետ, Հայոց ցեղասպանության զոհերի, երկրաշարժի զոհերի հիշատակի և աղետներին դիմակայունության օրը և այլ հիշատակի օրերին, հարգանքի նաև այս տեսակ տուրք մատուցելն է՝ սգո օրը զվարճալի հաղորդումներ և գովազդ հեռարձակելուց զերծ մնալը:

■ 8. Եվ հատկապես նշենք **Օրենքի 11-րդ հոդվածով նախատեսված՝ ընտրությունների (հանրաքվեների) նախընտրական (հանրաքվեի դրված հարցի վերաբերյալ) քարոզչության ժամանակահատվածում տեսալսողական հաղորդումներում** Հեռարձակողների կողմից օրենքների դրույթների պահպանմանը: Հատկապես՝ ընտրություններին մասնակցող կուսակցություններին, կուսակցությունների դաշինքներին մասնակցության հավասար հնարավորություններ ընձեռելու հարցին: Սույն հարցը առավել ուշադրության է արժանանում 2026 թվականին Հայաստանի Հանրապետությունում կայանալիք խորհրդարանական ընտրությունների համատեքստում: **2025 թվականին արձանագրվել է 2 իրավախախտման դեպք:**

Ընտրական քարոզարշավի ընթացքում Հեռարձակողների ընտրողներին պետք է ներկայացվի լիարժեք տեղեկատվություն բոլոր թեկնածուների վերաբերյալ, և նույնիսկ այն քաղաքացիները, որոնք գուցե հանդիսանում են միայն մեկ տեսալսողական ծրագրի սպառող, պետք է հնարավորություն ունենան այդ ծրագրի միջոցով ստանալ ընդհանուր, ամբողջական պատկերացում ընտրական քարոզարշավի ընթացքում բոլոր մասնակից քաղաքական ուժերի և նրանց թեկնածուների վերաբերյալ:

ՀՀ Սահմանադրության 196-րդ հոդվածի համաձայն՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովն անկախ պետական մարմին է, որն ապահովում է հեռարձակվող լրատվության միջոցների ազատությունը, անկախությունը և բազմազանությունը, վերահսկում է հեռուստաընկերությունների և ռադիոընկերությունների գործունեությունը:

Հանձնաժողովն Օրենքով նախատեսված իր գործառույթներն իրականացնելիս մշտապես հետևողական է և որդեգրել է իրազեկման, տեղեկացման, բայց նաև զգոնության և իրավախախտումների հայտնաբերման արդյունքում դրանց կանխարգելման և նվազեցման քաղաքականությունը:

Գծապատկեր 19. Կարգավորող պետական մարմնի վերահսկողության ոլորտում գործող ընկերությունների նկատմամբ 2023-2025 թվականների ընթացքում իրականացված վարչական վարույթների համեմատական պատկերը.



Նախորդ տարիների տվյալների համեմատությամբ նկատվում է իրավախախտումների աճ հատկապես՝ ցանցային օպերատորների, տեսալսողական ծրագրեր հեռարձակող լիցենզավորված ընկերությունների և լսողական ծրագրեր հեռարձակող լիցենզավորված ընկերությունների մոտ:

Գծապատկեր 20. Հարուցված վարչական վարույթների 2021-2025 թվականների համեմատական պատկերը



Իրականացված վարչական վարույթների արդյունքում 2025 թվականին իրավախախտումների համար նախատեսված գանձապետական հաշվեհամարին է փոխանցվել 7 034 656.00 ՀՀ դրամ, որից 6 384 656.00 ՀՀ դրամը կազմում են 2025 թվականին կիրառված և վճարած տույժերի գումարները:

Վարչական վարույթների արդյունքում 2025 թվականին փոխանցվել է ՀՀ դրամ **7 034 656.00**

10

ԴԱՏԱԿԱՆ ԲՈՂՈՔԱՐԿՈՒՄՆԵՐ

Հանձնաժողովը ղեկավարվելով օրենսդրությամբ և այլ նորմատիվ իրավական ակտերով 2025 թվականի ընթացքում դատական պաշտպանության աշխատանքներ է իրականացրել դատարաններում քննվող վարչական գործերով:

Հանձնաժողովի որոշումների դեմ ներկայացված հայցերով դատարան են ներկայացվել 5 հայցադիմումի պատասխան (առարկություններ), 2 վերաքննիչ բողոքի պատասխան, 2 վերաքննիչ բողոք և 1 վճռաբեկ բողոք՝ ապահովելով նաև դատարաններում քննվող սույն և նախորդ տարիներից փոխանցված գործերով դատական նիստերին մասնակցությունը:

Գծապատկեր21. Հանձնաժողովի որոշումների դատական կարգով բողոքարկման 2021- 2025 թվականների տվյալները



Տեսալսողական մեդիածառայություն մատուցող ընկերությունները դատարանում բողոքարկել են Հանձնաժողովի կայացված 5 որոշում:

Մասնավորապես.

1. Հայցվոր՝ «ԷԳԱԼԻՏԵ» ՍՊ ընկերություն:
Հիմք՝ Հանձնաժողովի՝ «լսողական ծրագրի հաճախականության օգտագործման լիցենզավորման մայրաքաղաքային սփռման մրցույթի հաղթող ճանաչելու և լիցենզիա տրամադրելու մասին» Հանձնաժողովի 27.05.2025թ. թիվ 68-Ա որոշումն անվավեր ճանաչելու մասին /թիվ ՎԴ/9358/05/25 վարչական գործ/: **Հայցը մերժվել է: Հայցվորի ներկայացված վերաքննիչ բողոքը ՀՀ Վերաքննիչ վարչական դատարանում 03.03.2026թ. ևս մերժվել է:**

2. Հայցվոր՝ «ՍԿԻԶԲ ՄԵԴԻԱ ԿԵՆՏՐՈՆ» ՍՊ ընկերություն:
Հիմք՝ Օրենքի 57-րդ հոդվածի 27-րդ մասով սահմանված վարչական տույժ կիրառելու մասին, Հանձնաժողովի 05.05.2025թ. թիվ 49Ա որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին /թիվ ՎԴ/10708/05/25 վարչական գործ/: **Գործը գտնվում է ՀՀ վարչական դատարանում, վճռի հրապարակման փուլում:**

3. Հայցվոր՝ «Ֆասթ Մեդիա» ՍՊ ընկերության:
Հիմք՝ Օրենքի 57-րդ հոդվածի 20-րդ մասով սահմանված վարչական տույժ կիրառելու մասին, Հանձնաժողովի 02.06.2025թ. թիվ 71-Ա որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին /թիվ ՎԴ/12302/05/25 վարչական գործ/: **Գործը գտնվում է ՀՀ վարչական դատարանում, վճռի հրապարակման փուլում:**

4. Հայցվոր՝ «Ֆասթ Մեդիա» ՍՊ ընկերության:
Հիմք՝ Օրենքի 57-րդ հոդվածի 31-րդ մասով սահմանված վարչական տույժ կիրառելու մասին, Հանձնաժողովի 06.08.2025թ. թիվ 96-Ա որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին /թիվ ՎԴ/17208/05/25 վարչական գործ/: **Գործը գտնվում է ՀՀ վարչական դատարանում, վճռի հրապարակման փուլում:**

5. Հայցվոր՝ «ՔԻՍՍ ԷՖ ԷՄ» ՍՊ ընկերություն:
Հիմք՝ Օրենքի 57-րդ հոդվածի 16-րդ մասով սահմանված վարչական տույժ կիրառելու մասին, Հանձնաժողովի 11.11.2025թ. 133-Ա որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին /թիվ ՎԴ/20305/05/25վարչական գործ/: **Գործը գտնվում է ՀՀ վարչական դատարանում, վճռի հրապարակման փուլում:**

11

ԴԱՏԱՐԱՆՆԵՐՈՒՄ ԱՎԱՐՏՎԱԾ ԳՈՐԾԵՐ

2025 թվականի ընթացքում դատարաններում ավարտվել (ըստ էության լուծվել) է՝ 7 վարչական գործ՝ «ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՀԵՌՈՒՍՏԱԱԼԻՔ» ՍՊ ընկերության, «ՀՈՒՍԱԲԵՐ» ՓԲԸ, «ՀԻԲՐԻԴ ԲՐՈԹՔԱՍԹԻՆԳ» ՍՊԸ, «ՄԱՐՏՈՒՆԻ ՏՎ» ՍՊԸ, «ԱՄԵԴԻԱ» ՍՊԸ և «ՏՈՍՊԱ» ռադիոընկերության խմբագրություն ՓԲ ընկերության հայցերով:

Դրանք են.

■ **1. Թիվ ՎԴ/1104/05/22** վարչական գործն ըստ հայցի «Հայկական երկրորդ հեռուստաալիք» ՍՊ ընկերության՝ Օրենքի 57-րդ հոդվածի 8-րդ մասով սահմանված վարչական տույժ կիրառելու մասին, Հանձնաժողովի 22.06.2021թ. թիվ 104-Ա որոշումը պատասխանողին անստորագիր ներկայացնելու պատճառով իրավահարաբերության բացակայությունը ճանաչելու պահանջի մասին: Հայցը բավարարվել է, վերաքննիչ բողոք է ներկայացվել և Հայցվորի և Հանձնաժողովի կողմից: Դատարանը երկու կողմի բողոքն էլ մերժել է: Վճռաբեկ բողոք չի ներկայացվել:

■ 2. **Թիվ ՎԴ/1004/05/23** վարչական գործն ըստ հայցի «Հիբրիդ Բրոթքասթինգ» ՍՊ ընկերության՝ Օրենքի 57-րդ հոդվածի 16-րդ մասով սահմանված վարչական տույժ կիրառելու մասին, Հանձնաժողովի 16.12.2022թ. թիվ 145-Ա որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին: Հայցը մերժվել է, Հացվորի վերաքննիչ բողոքը բավարարվել է: Հանձնաժողովի կողմից ներկայացված վճռաբեկ բողոքը դատարանի կողմից վարույթ ընդունելը մերժվել է:

■ **3. Թիվ ՎԴ2/0273/05/23** վարչական գործն ըստ հայցի «Մարտունի ՏՎ» ՍՊ ընկերության՝ Օրենքի 57-րդ հոդվածի 27-րդ մասով սահմանված վարչական տույժ կիրառելու մասին, Հանձնաժողովի 11.05.2023թ. թիվ 40-Ա որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին: Հայցը և վերաքննիչ բողոքը մերժվել են, վճիռը մտել է օրինական ուժի մեջ:

■ **4. Թիվ ՎԴ/0868/05/24** վարչական գործն ըստ հայցի «ՏՈՍՊԱ» ռադիոընկերության խմբագրություն ՓԲ ընկերության՝ Օրենքի 57-րդ հոդվածի 18-րդ մասով սահմանված վարչական տույժ կիրառելու մասին, Հանձնաժողովի 20.12.2023թ. թիվ 110-Ա որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին: Հայցը բավարարվել է, Հանձնաժողովի վերաքննիչ բողոքը մերժվել է: Վճռաբեկ բողոք չի ներկայացվել:

■ **5. Թիվ ՎԴ/0321/05/24** վարչական գործն ըստ հայցի «ՏՈՍՊԱ» ռադիոընկերության խմբագրություն ՓԲ ընկերության՝ Օրենքի 58-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով սահմանված վարչական տույժ կիրառելու մասին, Հանձնաժողովի 20.12.2023թ. թիվ 111-Ա որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին: Հայցը բավարարվել է, Հանձնաժողովի վերաքննիչ բողոքը մերժվել է: Վճռաբեկ բողոք չի ներկայացվել:

■ **6. Թիվ ՎԴ/4324/05/22** վարչական գործն ըստ հայցի «Հուսաբեր» ՓԲ ընկերության՝ 57-րդ հոդվածի 12-րդ մասով սահմանված վարչական տույժ կիրառելու մասին, Հանձնաժողովի 07.07.2022թ. թիվ 98-Ա որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին: Հայցը բավարարվել է, Հանձնաժողովի վերաքննիչ բողոքը մերժվել է: Վճռաբեկ բողոք չի ներկայացվել:

■ **7. Թիվ ՎԴ/4247/05/22** վարչական գործն ըստ հայցի «ԱՄԵԴԻԱ» ՍՊ ընկերության՝ 57-րդ հոդվածի 25-րդ մասով սահմանված վարչական տույժ կիրառելու մասին, Հանձնաժողովի 08.04.2022թ. թիվ 51-Ա որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին: Հայցը և վերաքննիչ բողոքը մերժվել են, վճիռը մտել է օրինական ուժի մեջ:

12

ԸՆԹԱՑԻԿ ԴԱՏԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

2025 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ վարչական և վերաքննիչ վարչական դատարանների վարույթում քննվում է 13 վարչական գործ.

Դրանք են.

■ «ՎԻ ԷՄ ՏԵԼԵՊՐՈՋԵՔԹ» ՍՊԸ հայցերով՝ 2 վարչական գործ,
■ «ՖԱՍԹ ՄԵԴԻԱ» ՍՊԸ հայցերով՝ 2 վարչական գործ
■ Եվ **1-ական** վարչական գործ՝ «ՇԱՐԿ», «ՌԱԴԻՈ ՎԱՆ», «ՄԱՑ ՆԵՏ», «168 ԺԱՄ», «ԷԳԱԼԻՏԵ», «ԷՅՉՆԵԹ», «ՍԿԻԶԲ ՄԵԴԻԱ ԿԵՆՏՐՈՆ», «ՔԻՍՍ ԷՖ ԷՄ» և «Հայկական երկրորդ հեռուստաալիք» ՍՊ ընկերությունների կողմից ներկայացված հայցերով:

Համեմատություն կատարելով նախորդ տարվա տվյալների հետ՝ արձանագրում ենք, որ 2024 թվականին ՀՀ վարչական դատարան է բողոքարկվել Հանձնաժողովի 7 որոշում, իսկ 2025 թվականին՝ 5:

2024 թվականին ՀՀ դատարաններում ավարտվել՝ ըստ էության լուծվել է Հանձնաժողովի դեմ ներկայացված հայցերով՝ 9 գործ, իսկ 2025 թվականի ընթացքում՝ 7 գործ:

13

ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐ

2025 թվականին Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի համագործակցությունը միջազգային կազմակերպությունների և մի շարք երկրների ազգային կարգավորող մարմինների հետ տեղեկատվության ու փորձի փոխանակման, ինչպես նաև համատեղ քննարկումների ավանդական ձևաչափից թևակոխեց առավել խորը և գործնական փոխգործակցության փուլ:

Միջազգային ասպարեզում Հանձնաժողովի գործունեության հիմնական առաջնահերթություններն էին եվրոպական և տարածաշրջանային մեդիակարգավորող մարմինների հետ գործընկերության ընդլայնումը, տեսալսողական մեդիածառայությունների ոլորտի ազգային օրենսդրության ներդաշնակեցումը ԵՄ հրահանգներին, ինչը կարևոր քայլ է մեդիաբովանդակություն սպառողների իրավունքների պաշտպանության ապահովման համար:

Անդամակցություն և երկկողմ կապեր

Հանձնաժողովը մի շարք հեղինակավոր միջազգային մեդիակառույցների լիիրավ անդամ է, որոնց թվում են՝

Կարգավորող մարմինների եվրոպական պլատֆորմ (EPRA)

Սևծովյան տնտեսական համագործակցության կազմակերպության անդամ երկրների կարգավորող մարմինների ֆորում (BRAF)

Մեդիա կարգավորող մարմինների ֆրանկոֆոն հարթակ (REFRAM)

Միջերկրածովյան կարգավորող մարմինների հարթակ (MNRA)

Լոնդոնի միջազգային ինստիտուտ (IIC)

Բացի այդ, կնքված երկկողմ հուշագրերի և համագործակցության պայմանագրերի հիման վրա՝ Հանձնաժողովը սերտորեն համագործակցում է ութ երկրի (Իտալիա, Չեխիա, Մոլդովա, Լիտվա, Վրաստան, Ուկրաինա, Ռուսաստան և Արգենտինա) մեդիակարգավորող մարմինների հետ:

Մասնակցություն միջազգային համաժողովներին

Նախորդ տարի Հանձնաժողովի ներկայացուցիչները մասնակցել են մի շարք առանցքային միջազգային համաժողովների.

ՄՈԼԴՈՎԱ

Մոլդովա (EPRA-ի 61-րդ տարեկան համաժողով). Քննարկվել են «Երեխաների անվտանգությունն առցանց միջավայրում» և «Ինչո՞վ է բնութագրվում ապացույցների վրա հիմնված կարգավորող մարմինը» թեմաները:

ԱԼԲԱՆԻԱ

Ալբանիա (BRAF-ի 12-րդ տարեկան ժողով). 10 երկրի շուրջ 30 պատվիրակ քննարկել է առցանց հարթակներում ատելության խոսքի նվազեցմանն ուղղված կարգավորման մեխանիզմները և ոլորտային այլ խնդիրներ:

Կոսովո (MNRA-ի 24-րդ տարեկան համաժողով). 24 երկրի շուրջ 65 պատվիրակ քննարկվել են անցանկալի բովանդակությունից անչափահասների պաշտպանության եղանակները՝ արհեստական բանականության գործիքների լայն կիրառման համատեքստում: Որպես Միջերկրածովյան հարթակը նախագահող երկրի կարգավորող մարմնի ղեկավար՝ համաժողովում ամփոփիչ հաշվետու զեկույցով հանդես է եկել Հանձնաժողովի նախագահ Տիգրան Հակոբյանը:

Համաժողովում նախագահող հաջորդ երկիր է ընտրվել Կոսովոն:

EPRA-ի 62-րդ համաժողովը Երևանում

2025 թվականի հոկտեմբերին Երևանում գումարվեց Կարգավորող մարմինների եվրոպական հարթակի (EPRA) 62-րդ համաժողովը, որին մասնակցեց 43 երկրից ժամանած 110 պատվիրակ: Օրակարգում էին «Թվային դարաշրջանում մեդիաբազմակարծության ձևավորման, խթանման և պաշտպանության հիմնախնդիրները», «Արագ փոփոխվող միջավայրում արդյունավետ ռազմավարությունների մշակման և իրագործման մեխանիզմները» թեմաները, ինչպես նաև արհեստական բանականությամբ ստեղծված սինթետիկ բովանդակության օրենսդրական կարգավորումների անհրաժեշտության հարցերը:

Սկանավորիր QR՝ ծանոթանալու համար Կարգավորող մարմինների եվրոպական հարթակի 62-րդ երևանյան համաժողովի դրվագներին:

Ռազմավարական համագործակցություն և փորձի փոխանակում

Տարվա ընթացքում Հանձնաժողովը բարձր արդյունավետությամբ աշխատել է նաև միջազգային այլ կառույցների՝ Եվրոպական հանձնաժողովի և Արտաքին գործողությունների եվրոպական ծառայության (ԱԳԵԾ), ՀՀ-ում Եվրոպական միության պատվիրակության և դեսպանի, ՀՀ-ում ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի (ՄԱԶԾ), ինչպես նաև Հայաստանում հավատարմագրված դիվանագիտական առաքելությունների ներկայացուցիչների հետ:

Օտարերկրյա գործընկերների հետ հանդիպումների ընթացքում առանձնակի ուշադրություն է դարձվել OTT հարթակների և սոցիալական ցանցերի գործունեության կարգավորման համատեղ ռազմավարությունների մշակմանը, ինչն առանցքային նշանակություն ունի պետությունների թվային ինքնիշխանության պաշտպանության հարցում: Միջազգային հեղինակավոր հարթակներում և ձևավորված աշխատանքային խմբերում ակտիվ ներգրավվածությունը թույլ է տալիս ամրապնդել Հայաստանի Հանրապետության հեղինակությունը՝ որպես խոսքի և մամուլի ազատության սկզբունքներին հավատարիմ պետություն:

Համագործակցության հուշագրերի շրջանակում Հանձնաժողովի նախագահը, անդամները և աշխատակազմի մասնագետները բազմաթիվ հանդիպումներ ու քննարկումներ (այդ թվում՝ առցանց) են անցկացրել գործընկեր կարգավորող մարմինների ներկայացուցիչների հետ: Մասնավորապես, դեկտեմբերին Հանձնաժողովի և Ուկրաինայի հեռուստատեսության և ռադիոյի ազգային խորհրդի կառուցվածքային ստորաբաժանումների միջև անցկացվել են մի շարք առցանց փորձագիտական քննարկումներ: Դրանց առանցքային թեմաներն են եղել երկու պետություններում օրենսդրական կարգավորման առանձնահատկությունները, հեռարձակողների մշտադիտարկման եղանակները, լիցենզավորման ընթացակարգերը, ինչպես նաև ԵՄ անդամ երկրներում կիրառվող «Աուդիովիզուալ մեդիա ծառայությունների մասին» հրահանգի (AVMSD), «Եվրոպական լրատվամիջոցների ազատության մասին» (EMFA) և «Թվային ծառայությունների մասին» (DSA) օրենքների ներդրման ուկրաինական փորձը:

Տարվա ընթացքում Հանձնաժողովի նախագահը Երևանում և Մոսկվայում հանդիպումներ ու քննարկումներ է ունեցել ՌԴ թվային զարգացման, կապի և զանգվածային հաղորդակցության նախարարության, Կապի, տեղեկատվական տեխնոլոգիաների և զանգվածային հաղորդակցության բնագավառում վերահսկողության դաշնային ծառայության («Ռոսկոմնադզոր») և «ՄԻՐ» միջպետական հեռուստառադիոընկերության ղեկավար կազմի հետ: Քննարկումների առանցքում եղել են Հայաստանի տարածքում ՌԴ հեռարձակողների ծրագրերի սփռմանը վերաբերող խնդիրները:

Փորձի փոխանակման ծրագրերը և գործընկեր երկրների կարգավորող մարմինների ներկայացուցիչների հետ անցկացված վերապատրաստման սեմինարները նպաստել են Հանձնաժողովի անձնակազմի մասնագիտական կարողությունների զարգացմանը:

14

ԸՆԴՈՒՆՎԱԾ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐ

2025 թվականին Հանձնաժողովը գումարել է 52 նիստ և ընդունել է 159 որոշում՝ 153 անհատական, 4 ներքին, 2 նորմատիվ: Այդ թվում՝ ստորև ներկայացվում են Հանձնաժողովի կողմից 2025 թվականի ընթացքում ընդունված այն որոշումները, որոնք առնչվել են հանրային հետաքրքրության առավել լայն շրջանակին և ուղղված են եղել հանրության լավագույն շահի սպասարկմանը. մասնավորապես՝

1. «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2025 թվականի մարտի 30-ին կայանալիք արտահերթ ընտրությունների նախընտրական քարոզչության ժամանակահատվածում Տեսալսողական մեդիածառայություն մատուցողների կողմից ընտրություններին մասնակցող կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների համար հավասար պայմանների ապահովման գնահատման մեթոդաբանությունը հաստատելու մասին» 2025 թվականի փետրվարի 21-ի թիվ 12-Ա որոշումը:

2. «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2025 թվականի մարտի 30-ին կայանալիք արտահերթ ընտրությունների նախընտրական քարոզչության ժամանակահատվածում հանրային ռադիոյի և հանրային հեռուստատեսության վճարովի եթերաժամի մեկ րոպեի գինը սահմանելու մասին» 2025 թվականի փետրվարի 21-ի թիվ 13-Ա որոշումը:

Սկանավորիր QR-ը՝ ծանոթանալու համար Գյումրի համայնքի ավագանու նախընտրական քարոզչությանը մասնակցած բոլոր հեռարձակողների կողմից տրամադրված վճարովի եթերաժամերի արժեքների մասին տեղեկատվությանը:

3. «Հանրային հեռարձակողի խորհրդի անդամի թափուր տեղի համալրման մրցույթն անցկացնելու նպատակով ժամանակավոր մրցութային հանձնաժողովի անդամների ընտրության ընթացակարգի մասին» 2025 թվականի ապրիլի 30-ի թիվ 46-Լ արձանագրային որոշումը:

4. «Հանրային հեռարձակողի խորհրդի անդամի թափուր տեղի համալրման մրցույթն անցկացնելու նպատակով ժամանակավոր մրցութային հանձնաժողովի կազմը հաստատելու մասին» 2025 թվականի մայիսի 5-ի թիվ 47-Ա որոշումը և «Հանրային հեռարձակողի խորհրդի անդամի թափուր տեղի համալրման մրցույթում հաղթող ճանաչելու մասին» 2025 թվականի մայիսի 26-ի թիվ 3-Ա որոշումը:

5. «Տեսալսողական մեդիածառայություն մատուցողների կողմից Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2025 թվականի մարտի 30-ի արտահերթ ընտրությունների նախընտրական քարոզչության սահմանված կարգի պահպանման վերաբերյալ մշտադիտարկման արդյունքների և եզրակացության հրապարակման» մասին 2025 թվականի ապրիլի 4-ի թիվ 34-Ա որոշումը:

Սկանավորիր QR-ը՝ ծանոթանալու համար մշտադիտարկման եզրակացությանը և որոշման հավելված 2-ում ներկայացված եթերաժամանակի բաշխվածության թվային ցուցանիշներին:

6. Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի 2025 թվականի նոյեմբերի 6-ի «Կարևոր իրադարձությունների շրջանակը հաստատելու մասին» թիվ 131-Ն որոշումը:

7. Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի 2025 թվականի հուլիսի 31-ի «Լսողական ծրագրի հաճախականության օգտագործման լիցենզավորման մարզային՝ ՀՀ Տավուշի մարզի տարածքում սփռման մրցույթում հաղթող չճանաչելու մասին» թիվ 93-Ա որոշումը:

Գծապատկեր 22. 2021-2025 թվականներին Հանձնաժողովի կողմից ընդունված որոշումների համեմատական պատկերը



15

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻՆ ՀԱՍՑԵԱԳՐՎԱԾ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀԱՐՑՈՒՄՆԵՐ

2025 թվականին Հանձնաժողով մուտքագրվել է 1107 գրություն, որից 83-ը քաղաքացիների և կազմակերպությունների հարցումներ և դիմում-բողոքներ էին (հեղինակային իրավունքի խախտումների, տեսալսողական մեդիածառայության բնագավառը կարգավորող իրավական ակտերի վերաբերյալ պարզաբանումներ ստանալու, տեսալսողական ծրագրերի վերահաղորդումները դադարեցնելու, վարչական վարույթ հարուցելու մասին և այլն), որոնց տրվել է պատշաճ պատասխան: 2025 թվականին Հանձնաժողովից ելքագրվել է 1060 գրություն:

Գծապատկեր 23. 2021-2025 թվականներին Հանձնաժողով մուտքագրված գրությունների և դիմում-բողոքների համեմատական պատկերը



16

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Հանձնաժողովն ունի 64 հաստիքային միավոր



37 **58%**

քաղաքացիական ծառայող

17 **26%**

տեխնիկական սպասարկող

7 **11%**

ինքնավար պաշտոն

3 **5%**

հայեցողական պաշտոն

2025 թ. ընդունվել են աշխատանքի 10 հոգի

2025 թ. աշխատանքից ազատվել են 9 հոգի

Հանձնաժողովում ղեկավար պաշտոն զբաղեցնող կանանց և տղամարդկանց համամասնությունը

Բացառությամբ հանձնաժողովի անդամների



Աշխատակիցներն ըստ տարիքային խմբերի

33%	24%	43%
Մինչև 40 տարեկան	41-50 տարեկան	51 տարեկան և ավելի

Կրթություն



Աշխատելու ժամանակահատված



16.1

ԹԱՓՈՒՐ ՀԱՍՏԻՔՆԵՐԻ ՄՐՑՈՒՅԹՆԵՐ ԵՎ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄՆԵՐ

2025 թվականի ընթացքում Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովում կազմակերպվել և անցկացվել է քաղաքացիական ծառայության թափուր պաշտոններ զբաղեցնելու համար 12 մրցույթ: Հանձնաժողովի քաղաքացիական ծառայության թափուր պաշտոնների մրցույթները կազմակերպելու համար կատարվել են նախապատրաստական աշխատանքներ, մշակվել են հարցաշարեր թեստավորման և հարցազրույցի փուլերի համար:

Հանձնաժողովի 13 քաղաքացիական ծառայող վերապատրաստվել է՝ մասնակցելով ՀՀ վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակի, ՀՀ պետական կառավարման ակադեմիայի և Երևանի պետական համալսարանի կողմից կազմակերպված «Տեղեկատվության հավաքագրում, վերլուծություն», «Ծառայությունների մատուցում», «Ժամանակի կառավարում», «Հաշվետվությունների մշակում», «Մարդկային ռեսուրսների կառավարում», «Ստուգումների գործընթացի արդյունավետության բարձրացում, այդ թվում՝ միջազգային փորձ», «Քաղաքացիական ծառայության մասին ՀՀ օրենսդրություն», «Իրավական ակտերի նախապատրաստումը և դրանց կիրառման առանձնահատկությունները», «Փաստաթղթերի նախապատրաստում», «Հաշվապահական հաշվառման համակարգը հանրային ոլորտում» թեմաներով հեռավար և առկա դասընթացներին:

Հանձնաժողովի բարեվարքության հարցերով կազմակերպիչը վերապատրաստվել է՝ մասնակցելով Քաղաքացիական ծառայության գրասենյակի կողմից կազմակերպված «Քաղաքացիական ծառայողների քաղաքական չեզոքությունը և զսպվածությունը» թեմայով դասընթացին:

Երկու աշխատակից վերապատրաստվել է՝ մասնակցելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կազմակերպած «2026 թվականի ծրագրային բյուջետավորում» թեմայով դասընթացին:

Համակարգվել է Հանձնաժողովի հանրային պաշտոն զբաղեցնող անձանց, Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով ներկայացվող տարեկան հայտարարագրերի և Հանձնաժողովի հանրային ծառայողների 2024 թվականի հաշվետու տարվա համար եկամտային հարկի տարեկան հայտարարագրերի լրացման գործընթացը:

Աշխատանքներ են կատարվել Քաղաքացիական ծառայության տեղեկատվական հարթակի Հանձնաժողովի բաժնում՝ տեղեկությունների համալրման ուղղությամբ:

17

ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ

Հանձնաժողովի ծախսը՝ 0.4 մլրդ դրամ, կատարողականը՝ 97.9%:

Աղուսյակ 7. 2025 թվականին Հանձնաժողովի իրականացրած ծրագրերը (մլն դրամ)

Ծրագրեր	2024թ. փաստ.	2025թ. ճշտված պլան	2025թ. փաստ.	Կատարողական ճշտված պլանի նկատմամբ %	2025թ. 2024թ.-ի նկատմամբ %	2025թ. և 2024թ. տարբերությունը
Տեսալսողական մեդիայի ոլորտի կարգավորում	377.9	392.6	384.5	97.9	101.7	6.6

2025 թվականին Հանձնաժողովի ծախսերը կազմել են 384.5 մլն դրամ՝ ապահովելով 97.9% կատարողական: Միջոցները հիմնականում ուղղվել են կարգավորող մարմնի գործունեության ապահովմանը՝ ***տեսալսողական մեդիայի ոլորտի կարգավորման ծառայությունների միջոցառմանը***, որի ծախսերը կազմել են 370.2 մլն դրամ կամ ծրագրված ցուցանիշի 98.5%-ը՝ հիմնականում պայմանավորված էներգետիկ և կապի ծառայությունների տնտեսումներով, ինչպես նաև մրցույթների արդյունքում ապրանքների և ծառայությունների ձեռքբերման ավելի ցածր արժեքով:

Հանձնաժողովի ***տեխնիկական հագեցվածության բարելավման ծախսերը*** կատարվել են 77.8%-ով՝ կազմելով 4.1 մլն դրամ, որը պայմանավորված է մրցույթի արդյունքում սարքավորումների և գրասենյակային գույքի՝ նախատեսվածից ցածր արժեքով ձեռքբերմամբ:

2024թ. համեմատ Հանձնաժողովի ծախսերն աճել են 1.7%-ով (6.6 մլն դրամով), ինչը հիմնականում պայմանավորված է Կարգավորող մարմինների եվրոպական հարթակի (European platform of Regulatory Authorities, EPRA)» 62-րդ աշնանային նստաշրջանը Հայաստանի Հանրապետությունում անցկացման նպատակով ***«Արտասահմանյան պատվիրակությունների ընդունելություններ»*** միջոցառման շրջանակներում 11.3 մլն դրամի հատկացմամբ:

Հավելված N1
Հեռուստատեսության և ռադիոյի
հանձնաժողովի 2025 թվականի հաղորդման

ՀԵՂԻՆԱԿԱԶՈՐՎԱԾ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵՍԱԼՍՈՂԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ

Հ/Հ	ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿԱՄ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ Ա ՆՁԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ԾՐԱԳՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՀԵՂԻՆԱԿԱԶՈՐՄԱՆ ՎԿԱՅԱԳՐԻ ՏՐՄԱՆ ԱՄՍԱԹԻՎԸ
1	«ԳԵՂԱՄԱ ՄԵԴԻԱ ՀՈԼԴԻՆԳ» ՍՊԸ	«ԳԵՂԱՄԱ» «ՄԵՎԱՆՏԻՎԻ1» («ԷՍՏԻՎԻ1»)	21.08.2020թ.
2	«ՖՈՐՏՈՒՆԱ» ՍՊԸ	«ՖՈՐՏՈՒՆԱ»	21.08.2020թ.
3	«ՑԱՅԳ» ՍՊԸ	«ՑԱՅԳ»	21.08.2020թ.
4	«ՄՈՒԼՏԻ ՄԵԴԻԱ-ԿԵՆՏՐՈՆ ԹԻՎԻ» ՓԲԸ	«ԿԵՆՏՐՈՆ»	21.08.2020թ.
5	«ԼՈՌԻ ԹԻ-ՎԻ» ՍՊԸ	«ԼՈՌԻ»	21.08.2020թ.
6	«ՇԱՐԿ» ՍՊԸ	«5-ՐԴ ԱԼԻՔ» «5 ՊԼՅՈՒՍ» «5-ՐԴ ՌԱԴԻՈԱԼԻՔ»	21.08.2020թ.
7	«ԿՈՏԱՅՔ ԹԻ ՎԻ» ՍՊԸ	«ԿՈՏԱՅՔ ԹԻՎԻ»	21.08.2020թ.
8	«ՀՈՒՍԱԲԵՐ» ՓԲԸ	«ԵՐԿԻՐ ՄԵԴԻԱ»	28.08.2020թ.
9	«ԱՆԿՅՈՒՆ ԳՈՒՄԱՐԱԾ 3» ՍՊԸ	«ԱՆԿՅՈՒՆ ԳՈՒՄԱՐԱԾ 3»	28.08.2020թ.
10	«ԱՐ ՌԱԴԻՈ ՄԻՋՄԱՅՐՑԱՄԱՔԱՅԻՆ» Ս ՊԸ	«ԵՐԵՎԱՆ ԷՖԷՄ»	28.08.2020թ.
11	«:ԲՈՒՆ» ԳԻՏԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԻՄՆԱԴ ՐԱՄ	«:ԲՈՒՆ ԹԻՎԻ»	28.08.2020թ.
12	«ՕԴԱԿ» ՍՊԸ	«ՍՈՆԳ ԹԻՎԻ» «ԹՐԱՎԵԼԻՆԳ ԹԻՎԻ»	28.08.2020թ.
13	«ՄԵԼՏԵՔՍ» ՍՊԸ	«Ա1+»	28.08.2020թ.
14	«ՇԱՆԹ» ՍՊԸ	«ՇԱՆԹ» «ՇԱՆԹ ՊՐԵՄԻՈՒՄ» «ՇԱՆԹ ՄՅՈՒԶԻՔ» «ՇԱՆԹ ՆՅՈՒԶ» «ՇԱՆԹ ՍԵՐԻԱԼ» «ՇԱՆԹ ՔԻԴՍ» «ՇԱՆԹ ՍՊՈՐՏ» «ՇԱՆԹ ՔՈՄԵԴԻ» «ՇԱՆԹ ԳՅՈՒՄՐԻ» «ՇԱՆԹ ՖԻԼՄ» «ՇԱՆԹ ՔՈՒՔԻՆԳ»	04.09.2020թ.
15	«ՄԵԴԻԱ ՆՅՈՒԶ» ՍՊԸ	«ԱՐԱՐԱՏՆՅՈՒԶ ԹԻՎԻ»	04.09.2020թ.
16	«ԱՐՄԵՆԻԱ ԹԻ-ՎԻ» ՓԲԸ	«ԱՐՄԵՆԻԱ» «ԱՐՄԵՆԻԱ ՊՐԵՄԻՈՒՄ» «ՔՈՄԵԴԻ» «ՀԱՅԿԻՆՈ» «ՋԱՆ ԹԻՎԻ» «ՍԵՐԻԱԼ»	08.09.2020թ.
17	«ԼՈՌՈՒ ՄԻԳ» ՍՊԸ	«ՄԻԳ ԹԻՎԻ» «ՄԻԳ ՌԱԴԻՈ»	08.09.2020թ.
18	«Ա-ԹԻՎԻ» ՍՊԸ	«Ա-ԹԻՎԻ»	08.09.2020թ.

19	«ՓԻ ԲԻ ՍԻ» ՍՊԸ	«ԿԻՆՈՄԱՆ» «ԼԱՅՖ ՀԱՔ» «ՀԱՅ ԹԻՎԻ» «ԹԱՎԱ ԹԻՎԻ» «ԽԱՂԱԼԻՔ» «ԷՅԲԻԷՆ ԱՐՄԵՆԻԱՆ ԲԻԶՆԵՍ ՆՅՈՒԶ» («ABN ARMENIAN BUSINESS NEWS») «ԲԱԶՄՈՑ ԹԻՎԻ» «ՖԻԹՆԵՍ ԹԻՎԻ» «ՄՈՒԶԶՈՆ»	18.09.2020թ.
20	«ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՀԵՌՈՒՍՏԱԼԻՔ» ՍՊԸ	«ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՀԵՌՈՒՍՏԱԼԻՔ»	18.09.2020թ.
21	«ՀԻԲՐԻԴ ՓՐՈԴԱՔՇՆ ԷՆԴ ԴԻՍԹՐԻԲՅՈՒՇՆ» ՍՊԸ	«ՀԻԲՐԻԴ ՌԵՍՏ» «ՀԻԲՐԻԴ ՖԻԼՄ» «ՀԻԲՐԻԴ ՍՊՈՐՏ» «ՀԻԲՐԻԴ ԷԴՈՒՔԵՅՇԸՆ»	18.09.2020թ.
22	«ԶԱԳԵԶՈՐ» ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ ՍՊԸ	«ՍՅՈՒՆԻՔ ԹԻՎԻ»	18.09.2020թ.
23	«ՄՈ ԹԻՎԻ ՄԵԴԻԱ ՀՈԼԴԻՆԳ» ՓԲԸ	«ՆՈՐ ՀԱՅԱՍՏԱՆ»	18.09.2020թ.
24	«ՖՐԻ ՆՅՈՒԶ» ՍՊԸ	«ՖՐԻ ՆՅՈՒԶ»	18.09.2020թ.
25	«ՏԱՎՈՒՇ ՄԵԴԻԱ» ՍՊԸ	«ՏԱՎՈՒՇ ԹԻՎԻ» «ՏԱՎՈՒՇ ԷՖԷՄ»	28.09.2020թ.
26	«ԴԵԼՏԱ ԹԻՎԻ» ՍՊԸ	«ԴԵԼՏԱ ԹԻՎԻ» «ԴԵԼՏԱ ԹՐԵՎԼ» «ԴԵԼՏԱ ՄՅՈՒԶԻՔ»	19.10.2020թ.
27	«ԴԱՐ-21» ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԲԸ	«21 ԹԻՎԻ»	19.10.2020թ.
28	«ՍԿԻԶԲ ՄԵԴԻԱ ԿԵՆՏՐՈՆ» ՍՊԸ	«ԱՌԱՋԻՆ ԹԻՎԻ»	19.10.2020թ.
29	«ԱՐԱՆԵԱ» ՍՊԸ	«ԱՐՄԱ ԹԻՎԻ»	02.11.2020թ.
30	«ԱՐՓԻ ՄԵԴԻԱ» ՍՊԸ	«ՆՈՒՌ» «ՎԵԼԱՐԻ» «ՍԱՆ ԹԻՎԻ» «ԱՅ ԹԻ ՍԻ» «ԱՐՄԹՈՒՆ ԹԻՎԻ» «ՎԻ»	02.11.2020թ.
31	«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԲԸ	«ԱՌԱՋԻՆԻ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԱԼԻՔ»	10.11.2020թ.
32	«ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ ԹԻՎԻ» ՍՊԸ	«ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ ԹԻՎԻ»	03.02.2021թ.
33	«ԹԻՎ 1 ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ 2020» ՍՊԸ	«ԹԻՎ 1»	03.02.2021թ.
34	«ԷՖ ԹԻՎԻ» ՍՊԸ	«ԿԻՆՈ» «ԲԱՐԻ» «ԱՐԱՐԱՏ ԹԻՎԻ» «ԱՐԱՐԱՏ ՌԱԴԻՈ»	19.02.2021թ.
35	«ԻԳԼ ԱՅ» ՍՊԸ	«ԹԻՎԻ 9 ԷՅ ԷՄ»	12.03.2021թ.
36	«ՆՏ ՀՈԼԴԻՆԳ» ՍՊԸ	«ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ»	02.04.2021թ.
37	«ՍՊՈՐՏ ՄԻՔՍ» ՍՊԸ	«ԳՈ.ՍՊՈՐՏ»	27.05.2021թ.
38	«ԷՖ-ԷՄ» ՍՊԸ	«ՌԱԴԻՈ ՔՈՄԵԴԻ» «ՄԵԿ ԷՖԷՄ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ» «ՄԵԿ ԷՖԷՄ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ» «ՄԵԿ ԷՖԷՄ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ» «ՄԵԿ ԷՖԷՄ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ»	04.06.2021թ.

39	«ՀՈՈՒՓ ՄԵԴԻԱ» ՍՊԸ	«ՀՈՈՒՓ»	11.06.2021թ.
40	«ՋԱՐԿ ՄԵԴԻԱ» ՍՊԸ	«ՋԱՐԿ ԷՖԷՄ»	11.06.2021թ.
41	«ՖԱՍԹ ՄԵԴԻԱ» ՍՊԸ	«ՖԱՍԹՍՊՈՐՏ» «ՖԱՍԹՍՊՈՐՏ1» «ՖԱՍԹՍՊՈՐՏ2»	06.08.2021թ.
42	«ՌԱԴԻՈ ՎԱՆ» ՍՊԸ	«ՌԱԴԻՈ ՎԱՆ»	04.11.2021թ.
43	«ՌԱԴԻՈ ԱԼՖԱ» ՍՊԸ	«ՌՈՒՍՍԿՈՅԵ ՌԱԴԻՈ»	04.11.2021թ.
44	«ԷԳԱԼԻՏԵ» ՍՊԸ	«ՋԱՋ ԷՖԷՄ»	26.11.2021թ.
45	«ՌԱԴԱՐ ԱՐՄ» ՍՊԸ	«ՌԱԴԱՐ ՌԱԴԻՈԿԱՅԱՆ»	24.02.2022թ.
46	ՄԵՐԻ ՄԿՐՏՉՅԱՆ ՀՐԱՉՅԱՅԻ ԱՁ	«ՌԱԴԻՈ ՎԱՆ ԳՅՈՒՄՐԻ»	13.04.2022թ.
47	«ՍՓՐԻՆԳ ԹԵՔՆՈԼՈՋԻՍ» ՍՊԸ	«ԿԵՆԴԱՆԻ ԲՆՈՒԹՅՈՒՆ» «ՏՈՒՆ 4Կ» «ԶԲՈՍԱՇՐՋԻԿԻ ԱՉՔԵՐՈՎ» «ԶԲՈՍԱՇՐՋԻԿԻ ԱՉՔԵՐՈՎ 4Կ» «ԱՊՐԻՐ ԱԿՏԻՎ»	06.05.2022թ.
48	«ՏՈՍՊԱ» ՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԽՄԲ ԱԳՐՈՒԹՅՈՒՆ ՓԲԸ	«ՍԻԹԻ ԷՖԷՄ»	30.05.2022թ.
49	«ԱՌԱՋԻՆ ԱԼԻՔ» ՍՊԸ	«ՏՈՒՆՏՈՒՆԻԿ» «ՍԻՆԵՄԱՆ»	04.07.2022թ.
50	«ՌԻԲՈԼՈՎՆՈԵ ԹՎ» ՍՊԸ	«ՌԻԲՈԼՈՎՆՈԵ ԹՎ»	21.10.2022թ.
51	«ԼԱՎ ՌԱԴԻՈ» ՍՊԸ	«ԼԱՎ ՌԱԴԻՈ» «ԼԱՎ ՌԱԴԻՈ ՄԻՔՍ» «ԼԱՎ ՌԱԴԻՈ ՀԻԹ» «ԼԱՎ ՌԱԴԻՈ ԴԵՆՍ»	26.01.2023թ.
52	«ՄԵԴԻԱ ՄԱՐՍԵՏ» ՍՊԸ	«ՌԱԴԻՈ ԷՆԵՐՋԻ» «ԷՄ ԷՖԷՄ ՌԱԴԻՈ» «ԷՔՍ ԷՖԷՄ ՌԱԴԻՈ» «ՌԱԴԻՈ ՍՔԱՅ» «ՄԵՏՐՈ ԷՖԷՄ»	26.01.2023թ.
53	«ԼԱՅՔ ԹԻՎԻ ՌԱԴԻՈ» ՍՊԸ	«ԼԱՅՔՆԵՏ ՄՈՎԻՍ» (LIKNET MOVIES)	19.02.2024թ.
54	«ԱԼՖԱ ՄԵԴԻԱ ՀԱՈՒՋ» ՍՊԸ	«ԱԼՖԱ ՆՅՈՒՋ»	14.11.2024թ.
55	«ԻՆԹԵՐՆԵՅՇՆԼ ՄԵԴԻԱ ՀՈԼԴԻՆԳ» ՍՊԸ	«EUROMEDIA24» (ԵՎՐՈՄԵԴԻԱ24)	31.01.2025թ.
56	«ՊԻԱՆՈ ԳՐՈՒՊ» ՍՊԸ	«ՆԵՔՍԹ» ԷՖԷՄ	11.03.2025թ.
57	«ՌԱԴԻՈ ՎԱՅԲ» ՍՊԸ	«LOVE FM» («ԼԱՎ ԷՖ ԷՄ»)	20.03.2025թ.
58	«ՄԵՏԵՈ ԹԻ- ՎԻ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒ ԹՅՈՒՆ» ՍՊԸ	ՌԱԴԻՈ «ԱՐԱՐ»	20.03.2025թ.
59	«ՌԱԴԻՈ ԱԼԻՔ» ՍՊԸ	«ՌԱԴԻՈ ԱԼԻՔ»	02.06.2025թ.
60	«ՐԻՕՓԸՆ ՄԵԴԻԱ» ՍՊԸ	«ՐԻՕՓԸՆ ՄԵԴԻԱ»	20.06.2025թ.
61	«ՔԻՍՍ ԷՖ ԷՄ» ՍՊԸ	«ՔԻՍՍ ԷՖ ԷՄ»	21.08.2025թ.
62	«ՌԱԴԻՈ ԱՎՐՈՐԱ» ՍՊԸ	«ՌԱԴԻՈ ԱՎՐՈՐԱ»	21.08.2025թ.
63	ՌՈՒԲԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՎԱՀԵՆԻ ԱՁ	«ԱՐԻ TV» (ԱՐԻ ԹԻՎԻ)	06.10.2025թ.
64	«ԷՅ ԲԻ ՍԻ ՄԵԴԻԱ» ՍՊԸ	«ԷՅ ԲԻ ՍԻ ՄԵԴԻԱ» (ABC media)	19.11.2025թ.
65	«ՍԻԼՈՒԵՏ ՍՏՈՒԴԻՈ» ՍՊԸ	«ՇԵՄ»	26.12.2025թ.

Հավելված N2
Հեռուստատեսության և ռադիոյի
հանձնաժողովի 2025 թվականի հաղորդման

ՑԱՆՑԱՅԻՆ ՕՊԵՐԱՏՈՐՆԵՐ

Հ/Հ	ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿԱՄ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՍՓՌՄԱՆ ՏԱՐԱԾՔԸ	ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ
Ք. ԵՐԵՎԱՆ ԵՎ ՄԵԿ ԿԱՄ ՄԻ ՔԱՆԻ ՄԱՐԶԵՐ			
1	«ՍՔԱՅՆԵԹ ՏԵԼԵԿՈՄ» ՍՊԸ	ք. Երևան, Կոտայքի մարզ	14.01.2017թ.-14.01.2027թ.
2	«ԿԱՅԾ ԼԱՅՆ» ՍՊԸ	ք. Երևան, Տավուշի և Սյունիքի մարզեր	03.10.2017թ.-03.10.2027թ.
3	«ՄԱՐԻՆԿԱ» ՍՊԸ	ք. Երևան, Շիրակի և Լոռու մարզեր	03.10.2017թ.-03.10.2027թ.
4	«ՎԱԼԻ ԳՐՈՒՊ» ՍՊԸ	ք. Երևան, Կոտայքի մարզ	22.12.2017թ.-22.12.2027թ.
5	«ԻՔՍ-ԹԻՎԻ» ՍՊԸ	ք. Երևան, Արագածոտնի, Արարատի, Արմավիրի, Գեղարքունիքի, Կոտայքի և Տավուշի մարզեր	10.04.2018թ.-10.04.2028թ.
6	«ԱՅԹԻՎԻ» ՍՊԸ	ք. Երևան, Գեղարքունիքի մարզ	28.08.2019թ.-28.08.2029թ.
7	«ՅՈՏԱ» ՍՊԸ	ք. Երևան, Արագածոտնի, Արարատի, Արմավիրի, Կոտայքի և Տավուշի մարզեր	08.10.2019թ.-08.10.2029թ.
8	«ԹԻՄ» ՓԲԸ	Հայաստանի Հանրապետություն	14.07.2020թ.-14.07.2030թ.
9	«ԼԱՅՔՆԵՏ» ՍՊԸ	Հայաստանի Հանրապետություն	25.09.2020թ.-25.09.2030թ.
10	«ՀԻԲՐԻԴ ՍՈԼՅՈՒՇՆՍ» ՍՊԸ	Հայաստանի Հանրապետություն	24.10.2020թ.-24.10.2030թ.
11	«ՏԵԼԵԿՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ԲԲԸ	Հայաստանի Հանրապետություն	29.04.2021թ.-29.04.2031թ.
12	«ԱՐՓԻՆԵՏ» ՍՊԸ	Հայաստանի Հանրապետություն	24.09.2021թ.-24.09.2031թ.
13	«ԷՖ ՆԵԹ» ՍՊԸ	Հայաստանի Հանրապետություն	21.10.2021թ.-21.10.2031թ.
14	«ԹԻՎԻ ՍԹԵՅՇՆ» ՍՊԸ	Հայաստանի Հանրապետություն	24.06.2022թ.-24.06.2032թ.
15	«ՅՈՒՔՌՈՄ» ՓԲԸ	Հայաստանի Հանրապետություն	17.10.2022թ.-17.10.2032թ.
16	«ԱՅՆԵԹ» ՍՊԸ	Հայաստանի Հանրապետություն	08.12.2023թ.-08.12.2033թ.
17	«ՆԵՏՔՈՄ» ՍՊԸ	Հայաստանի Հանրապետություն	05.09.2024թ.-05.09.2034թ.
18	«ՆՅՈՒ ՎԵՅՎ» ՍՊԸ	Հայաստանի Հանրապետություն	26.12.2024թ.-26.12.2034թ.
19	«ՎԻՐՈՒՍ ՆԵՏ» ՍՊԸ	Հայաստանի Հանրապետություն	07.03.2025թ.-07.03.2035թ.
20	«ԷՅՉՆԵԹ» ՍՊԸ	Հայաստանի Հանրապետություն	06.06.2025թ.-06.06.2035թ.
21	«ՖՈՐ ՅՈՒՆԻԹԻ» ՍՊԸ	Հայաստանի Հանրապետություն	24.07.2025թ.-24.07.2035թ.
22	«ԻՆՏԵՐԼԻՆԿ» ՍՊԸ	ք. Երևան, Կոտայքի մարզ	26.11.2025թ.-26.11.2035թ.
23	«ՎԻՎԱ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ	Հայաստանի Հանրապետություն	26.12.2025թ.-26.12.2035թ.

Ք. ԵՐԵՎԱՆ

1	«ԲԵԴԼԱՅՆ» ՍՊԸ	ք. Երևան	21.03.2020թ.-21.03.2030թ.
2	«ՄԵԳԱԹԻՎԻ» ՍՊԸ	ք. Երևան	27.05.2020թ.-27.05.2030թ.
3	«ՀՈՎՆԵՏ» ՍՊԸ	ք. Երևան	11.06.2021թ.-11.06.2031թ.
4	«ԱՅ-ՆԵՏ» ՍՊԸ	ք. Երևան	22.07.2021թ.- 22.07.2031թ.
5	«ԹԻՎԻՆԵՏ» ՍՊԸ	ք. Երևան	16.06.2022թ.-16.06.2032թ.
6	«ՅՈՐՆԵԹ» ՍՊԸ	ք. Երևան	08.07.2025թ.-08.07.2035թ.
ՄԵԿԻՑ ԱՎԵԼԻ ՄԱՐԶԵՐ			
1	«ՖՐՈՒԹՆԵԹ» ՍՊԸ	Կոտայքի, Վայոց ձորի և Տավուշի մարզեր	08.10.2019թ.-08.10.2029թ.
2	«ԴԱՅԱՆԱՆԵՏ» ՍՊԸ	Շիրակի, Արագածոտնի, Լոռու մարզեր	19.04.2024թ.-19.04.2034թ.
ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ			
	-	-	-
ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ			
1	«ԱՐՏ-ԹԻՎԻ-ՆԵԹ» ՍՊԸ	Արարատի մարզ	23.05.2022թ.-23.05.2032թ.
2	«ԿԻՄ-ՌԱՅ» ՍՊԸ	ք. Մասիս	10.11.2025թ.-10.11.2035թ.
ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ			
1	«ՀԱՌԻԶ ՆԵԹ» ՍՊԸ	Արմավիրի մարզ	29.07.2017թ.-29.07.2027թ.
ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ			
1	«ՊԼԱՆԵՏ» ՍՊԸ	Գեղարքունիքի մարզ	04.07.2017թ.-04.07.2027թ.
2	«ՌԵԳԻՈՆՆԵՏ» ՍՊԸ	Գեղարքունիքի մարզ	23.09.2020թ.-23.09.2030թ.
3	«ՄԱՐՏՈՒՆԻ ՏՎ» ՍՊԸ	Գեղարքունիքի մարզ	29.12.2022թ.-29.12.2032թ.
ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ			
1	«Ց.Ա.Ա.Ա.Է.» ՍՊԸ	ք. Վանաձոր	05.04.2016թ.-05.04.2026թ.
2	«ՊՐՈԴԻԶԱՅՆ» ՍՊԸ	Լոռու մարզ	12.01.2024թ.-12.01.2034թ.
3	«ԴԻԼԱՐՄ» ՍՊԸ	Լոռու մարզ	10.11.2025թ.-10.11.2035թ.
ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ			
1	«ՀԱՃԸՆ ԻՍՊ» ՍՊԸ	Կոտայքի մարզ	25.07.2017թ.-25.07.2027թ.
2	«ՀԵՌԱՏԵՍ» ՍՊԸ	ք. Հրազդան	03.08.2017թ.-03.08.2027թ.
3	«ՖԼԱՅՆԵՏ» ՍՊԸ	Կոտայքի մարզ	05.05.2018թ.-05.05.2028թ.
4	«ԲԱԳԵՏ» ՍՊԸ	Կոտայքի մարզ	22.04.2020թ.-22.04.2030թ.
5	«ԱԼՖԱ ՏԵԼԵԿՈՄ» ՍՊԸ	Կոտայքի մարզ	10.09.2020թ.-10.09.2030թ.
6	«ԲԱՐԳԱՎԱՃՈՂ ՑԱՆՑԵՐ» ՍՊԸ	Կոտայքի մարզ	26.11.2020թ.-26.11.2030թ.
7	«ՕԼԼՆԵԹ» ՍՊԸ	Կոտայքի մարզ	26.09.2023թ.- 26.09.2033թ.
8	ԱՐՏԱԿ ԲՈՐԻԿԻ ԴՈԼՈՒԽԱՆՅԱՆ ԱՁ	Կոտայքի մարզ	08.07.2025թ.- 08.07.2035թ.

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ			
1	«ՏԵԼԵՄԱՔՍ ՏԻՎԻ» ՍՊԸ	ք. Գյումրի	02.08.2017թ.-02.08.2027թ.
ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ			
1	«ԱՐԱՑ» ՍՊԸ	Սյունիքի մարզ	21.12.2016թ.-21.12.2026թ.
2	«ՌԱՑ ՏՎ» ՍՊԸ	Սյունիքի մարզ	25.03.2025թ.-25.03.2035թ.
ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ			
1	«ՕՆԼԱՅՆ» ՍՊԸ	Վայոց ձորի մարզ	30.03.2022թ.-30.03.2032թ.
ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ			
1	«ԱՅՐՈՒՄ ԹԻՎԻ» ՀԵՌՈՒՍՏԱՌԱ ԴԻՈ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՍՊԸ	ք. Այրում	30.09.2017թ.-30.09.2027թ.

Հավելված N 3
Հեռուստատեսության և ռադիոյի
հանձնաժողովի 2025 թվականի հաղորդման

Մանկական, կրթական, մշակութային և մարզական թեմատիկ ուղղվածության տեսալսողական հաղորդումների տոկոսային ծավալը

Ֆիզիկական կամ իրավաբանական անձի անվանումը, ծրագրի անվանումը	Տոկոսային ծավալը
«ՄՈՒԼՏԻ ՄԵԴԻԱ-ԿԵՆՏՐՈՆ ԹԻՎԻ» ՓԲԸ «ԿԵՆՏՐՈՆ» ծրագիր	24,91%
«ԱՐՄԵՆԻԱ ԹԻ-ՎԻ» ՓԲԸ «ԱՐՄԵՆԻԱ» ծրագիր	23,95%
«Ա-ԹԻՎԻ» ՍՊԸ «Ա-ԹԻՎԻ» ծրագիր	28,12%
«ՇԱՆԹ» ՍՊԸ «ՇԱՆԹ» ծրագիր	43,01%
«ՖԱՍԹ ՄԵԴԻԱ» ՍՊԸ «ՖԱՍԹՍՊՈՐՏ» ծրագիր	90,79%
«ՇԱՐԿ» ՍՊԸ «5-ՐԴ ԱԼԻՔ» ծրագիր	44,04%
«ԱՐՓԻ ՄԵԴԻԱ» ՍՊԸ «ՆՈՒՌ» ծրագիր	30,51%
«ՖՐԻ ՆՅՈՒՋ» ՍՊԸ «ՖՐԻ ՆՅՈՒՋ» ծրագիր	25,93%
«ԴԱՐ-21» ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒ ԹՅՈՒՆ» ՓԲԸ «21 ԹԻՎԻ» ծրագիր	34,37%
«ՄՈ ԹԻՎԻ ՄԵԴԻԱ ՀՈԼԴԻՆԳ» ՓԲԸ «ՆՈՐ ՀԱՅԱՍՏԱՆ» ծրագիր	26,43%
«:ԲՈՒՆ» ԳԻՏԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ «:ԲՈՒՆ ԹԻՎԻ» ծրագիր	71,59%
«ԴԵԼՏԱ ԹԻՎԻ» ՍՊԸ «ԴԵԼՏԱ ԹԻՎԻ» ծրագիր	46,96%
«ԷՖ ԹԻՎԻ» ՍՊԸ «ԱՐԱՐԱՏ ԹԻՎԻ» ծրագիր	34,05%
«ԱՐԱՆԵԱ» ՍՊԸ «ԱՐՄԱ ԹԻՎԻ» ծրագիր	30,04%
«ԳԵՂԱՄԱ ՄԵԴԻԱ ՀՈԼԴԻՆԳ» ՍՊԸ «ԳԵՂԱՄԱ» ծրագիր	21,8%
«ՖՈՐՏՈՒՆԱ» ՍՊԸ «ՖՈՐՏՈՒՆԱ» ծրագիր	35,72%
«ԿՈՏԱՅՔ ԹԻ ՎԻ» ՍՊԸ «ԿՈՏԱՅՔ ԹԻՎԻ» ծրագիր	23,36%
«ՑԱՅԳ» ՍՊԸ «ՑԱՅԳ» ծրագիր	20,3%
«ԶԱԳԵԶՈՐ» ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ ՍՊԸ «ՍՅՈՒՆԻՔ ԹԻՎԻ» ծրագիր	20%

Հավելված N4
Հեռուստատեսության և ռադիոյի
հանձնաժողովի 2025 թվականի հաղորդման

ՀԱՐՈՒՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹՆԵՐ

Հ/Հ	ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿԱՄ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ Ա ՆՁԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ԿԱՐԳԱՎԻՃԱԿ	ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ԱՎԱՐՏԱԿԱՆ ՓՈՒԼ
1	«ՁԱԳԵՁՈՐ» ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ ՍՊԸ	Տեսալսողական ծրագրեր հեռարձակող	1 գրավոր նախազգուշացում, 3 տուգանք
2	«ՄԱՅ ՆԵՏ» ՍՊԸ	Ցանցային օպերատոր	2 տուգանք, 1 լիցենզիայի գործողության կասեցում, 1 լիցենզիայի գործողության դադարեցում
3	«ՔԻՍՍ ԷՖ ԷՄ» ՍՊԸ	Լսողական ծրագրեր Հեռարձակող	4 տուգանք
4	«ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՀԵՌՈՒՍՏԱԼԻՔ» ՍՊԸ	Հեղինակազորված	3 տուգանք
5	«ՖԱՍԹ ՄԵԴԻԱ» ՍՊԸ	Տեսալսողական ծրագրեր հեռարձակող	3 տուգանք
6	«ԹԻՎԻՆԵՏ» ՍՊԸ	Ցանցային օպերատոր	1 տուգանք, 2 վարույթի կարճում
7	«ՎԱԼԻ ԳՐՈՒՊ» ՍՊԸ	Ցանցային օպերատոր	2 տուգանք
8	«ՇԱՆԹ» ՍՊԸ	Տեսալսողական ծրագրեր հեռարձակող	1 գրավոր նախազգուշացում, 1 տուգանք
9	«ՍԿԻԶԲ ՄԵԴԻԱ ԿԵՆՏՐՈՆ» ՍՊԸ	Տեսալսողական ծրագրեր հեռարձակող	1 գրավոր նախազգուշացում, 1 տուգանք
10	«ՄՈ ԹԻՎԻ ՄԵԴԻԱ ՀՈԼԴԻՆԳ» ՓԲԸ	Տեսալսողական ծրագրեր հեռարձակող	2 տուգանք
11	«ՖՐՈՒԹՆԵԹ» ՍՊԸ	Ցանցային օպերատոր	2 տուգանք
12	«ԲԱԳԵՏ» ՍՊԸ	Ցանցային օպերատոր	1 տուգանք, 1 վարույթի կարճում
13	«ԲԱՐԳԱՎԱՃՈՂ ՑԱՆՑԵՐ» ՍՊԸ	Ցանցային օպերատոր	2 տուգանք
14	«ՇԱՆՍ ՄԵԴԻԱ» ՍՊԸ	Լսողական ծրագրեր Հեռարձակող	2 տուգանք
15	«ՏԱՎՈՒՇ ՄԵԴԻԱ» ՍՊԸ	Լսողական ծրագրեր Հեռարձակող	1 լիցենզիայի գործողության կասեցում, 1 լիցենզիայի գործողության դադարեցում
16	«ԷՖ ԹԻՎԻ» ՍՊԸ	Լսողական ծրագրեր Հեռարձակող	1 լիցենզիայի գործողության կասեցում, 1 վարույթի կարճում
17	«Ռադիո 107 ՖՄ» ՍՊԸ	Լսողական ծրագրեր Հեռարձակող	1 լիցենզիայի գործողության կասեցում, 1 լիցենզիայի գործողության դադարեցում
18	«Ֆորտունա» ՍՊԸ	Տեսալսողական ծրագրեր հեռարձակող	1 լիցենզիայի գործողության կասեցում, 1 կասեցման վերացում
19	«Ա-ԹԻՎԻ» ՍՊԸ	Տեսալսողական ծրագրեր հեռարձակող	2 տուգանք
20	«Յորնեթ» ՍՊԸ	Ցանցային օպերատոր	գրավոր նախազգուշացում
21	«ՖՈՐ ՅՈՒՆԻԹԻ» ՍՊԸ	Ցանցային օպերատոր	տուգանք
22	«:ԲՈՒՆ» ԳԻՏԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ	Տեսալսողական ծրագրեր հեռարձակող	տուգանք
23	«ԴԵԼՏԱ ՏՎ» ՍՊԸ	Տեսալսողական ծրագրեր հեռարձակող	տուգանք
24	«ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ ԹԻՎԻ» ՍՊԸ	Հեղինակազորված	տուգանք

25	«ԹԻՎ 1 ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ 2020» ՍՊԸ	Հեղինակազորված	տուգանք
26	«ՌԻԲՈԼՈՎՆՈԵ ԹՎ» ՍՊԸ	Հեղինակազորված	տուգանք
27	«ԿԱՅԾ ԼԱՅՆ» ՍՊԸ	Ցանցային օպերատոր	տուգանք
28	«ՄԱՐԻՆԿԱ» ՍՊԸ	Ցանցային օպերատոր	տուգանք
29	«ՅՈՏԱ» ՍՊԸ	Ցանցային օպերատոր	վարույթի կարճում
30	«ՋԻԷՆ ՍԻՍԹԵՄՍ» ՍՊԸ	Ցանցային օպերատոր	տուգանք
31	«ՄԵԳԱԹԻՎԻ» ՍՊԸ	Ցանցային օպերատոր	տուգանք
32	«ԱՇՏԱՐԱԿ ԷԼԻՏ» ՍՊԸ	Ցանցային օպերատոր	տուգանք
33	«ԱԼՖԱ ՏԵԼԵԿՈՄ» ՍՊԸ	Ցանցային օպերատոր	տուգանք
34	«ՊԼԱՆԵՏ ՐԱՖՖԻ» ՍՊԸ	Ցանցային օպերատոր	տուգանք
35	ԳԵՎՈՐԳ ՍԱՄՎԵԼԻ ՀԱՅՐԻՅԱՆ ԱՁ	Ցանցային օպերատոր	տուգանք
36	ԿԱՐԵՆ ԱՐԱՅԻԿԻ ՄԿՐՏՉՅԱՆ ԱՁ	Ցանցային օպերատոր	վարույթի կարճում
37	«Ռայ ՏՎ» ՍՊԸ	Ցանցային օպերատոր	տուգանք
38	«Խուստուփ Թիվի» ՍՊԸ	Ցանցային օպերատոր	տուգանք
39	«Ց.Ա.Ա.Ա.Է.» ՍՊԸ	Ցանցային օպերատոր	տուգանք
40	«ԴԻԼԱՐՄ» ՍՊԸ	Ցանցային օպերատոր	տուգանք
41	«ԱՅՐՈՒՄ ԹԻՎԻ» ՀԵՌՈՒՍՏԱՌԱԴԻՈ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՍՊ ընկերության	Ցանցային օպերատոր	տուգանք
42	«ՀԱՃԸՆ ԻՍՊ» ՍՊԸ	Ցանցային օպերատոր	տուգանք
43	«ՀԵՌԱՏԵՍ» ՍՊԸ	Ցանցային օպերատոր	տուգանք
44	«Հայկ Մեդիա» ՍՊԸ	Ցանցային օպերատոր	տուգանք
45	«ՀԱՈՒՋ ՆԵԹ» ՍՊԸ	Ցանցային օպերատոր	տուգանք
46	«ՄԱՐՏՈՒՆԻ ՏՎ» ՍՊԸ	Ցանցային օպերատոր	տուգանք
47	«ԲԵԴԼԱՅՆ» ՍՊԸ	Ցանցային օպերատոր	տուգանք
48	«ՆԵՏՔՈՄ» ՍՊԸ	Ցանցային օպերատոր	տուգանք
49	«Թիվի Սթեյշն» ՍՊԸ	Ցանցային օպերատոր	տուգանք
50	«ՖՐԻ ՆՅՈՒՋ» ՍՊԸ	Տեսալսողական ծրագրեր հեռարձակող	տուգանք
51	«ԴԱՐ- 21» ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ ՓԲԸ	Տեսալսողական ծրագրեր հեռարձակող	վարույթի կարճում
52	«ՌԱԴԻՈ ԱՎՐՈՐԱ» ՍՊԸ	Լսողական ծրագրեր Հեռարձակող	տուգանք
53	«ՇԱՐԿ» ՍՊԸ	Տեսալսողական ծրագրեր հեռարձակող	վարույթի կարճում
54	«ԻՆՏԵՐՆԵՇՆԼ ՄԵԴԻԱ ՀՈԼԴԻՆԳ» ՍՊԸ	Հեղինակազորված	տուգանք
55	«ԱԼՖԱ ՄԵԴԻԱ ՀԱՈՒՋ» ՍՊ	Հեղինակազորված	տուգանք
58	«ՕԴԱԿ» ՍՊԸ	Հեղինակազորված	տուգանք
59	«ՕԼԼՆԵԹ» ՍՊԸ	Ցանցային օպերատոր	տուգանք
57	«ԱՐՏ-ԹԻՎԻ-ՆԵԹ» ՍՊԸ	Ցանցային օպերատոր	տուգանք
59	«ՌԱԴԻՈ ԱԼՖԱ» ՍՊ	Լսողական ծրագրեր Հեռարձակող	վարույթի կարճում
60	«ԼՈՌՈՒ ՄԻԳ» ՍՊ	Լսողական ծրագրեր Հեռարձակող	տուգանք
61	«ԷՅ ԴԻ ԹԻ» ՍՊԸ	Լսողական ծրագրեր Հեռարձակող	տուգանք
62	«ՄԵՐԻ ՄԿՐՏՉՅԱՆ ՀՐԱՉՅԱՅԻ» ԱՁ	Լսողական ծրագրեր Հեռարձակող	տուգանք
63	«ԼԱՅՔՆԵՏ» ՍՊԸ	Ցանցային օպերատոր	տուգանք
64	«ՏՈՍՊԱ» ռադիոընկերության խմբագրություն ՓԲԸ	Լսողական ծրագրեր Հեռարձակող	տուգանք

ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ
ԵՎ ՌԱԴԻՈՅԻ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
COMMISSION ON
TELEVISION AND RADIO

0009, ք.Երևան, Իսահակյան 28
28 Isahakyan St., 0009, Yerevan, Armenia
Հեռ. / Tel.: (+374 10) 52 83 70, (+374 10) 52 94 32
Էլ. փոստ / E-mail: nctr@tvradio.am, www.tvradio.am